



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1986

235
U-91

1909

4-5 w 31

2010

206.2
U-96

ՄՐԱԶԱՆ ՀԱՅԿԱՁՈՒՆՔ

Կ. Ա. Մ'

ԴԵՄՔԵՐ


ԱԶԳԱՑԻՆ — ՍՐԲԱԶԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1902



ԺՂԿԱԾՈՒԹՅՈՒՆ ՂԱՇՈՎՈՒ

2001

235
U-91 214

ՄՐԱՋԱՆ ՀԱՅԿԱՁՈՒՆՔ


Կ. Ա. Մ.

ԴԵՄՔԵՐ

ԱԶԳԱՅԻՆ - ՄՐԳԱՉԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

214925



ՎԵՆԵՑԻԿ - Ս. Պ. Զ. Ա. Բ.

1902

ՅԱՌԱՋԱԲԱՆ

(5)

Եկեղեցոյ սուրբերու և նահատակներու պատմութիւնը՝ դիցագներգութիւն մ'կ, վսկէ, աստուածային, որուն քանի մը դրուազներն են՝ որ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն։ Հոն, իբր տեսարանի վրայ, պիտի նշմարենք շարք մը սրբազն դիցագներու՝ որ կու գան կարգով իրենց դերը կատարելու, որոնց՝ ազգի մը դարաշոր աշանցութիւնը՝ սուրբ և երանելի մակդիրները յատկացնցեր, և անոնց յիշատակը եկեղեցոյ սրբավայրին մեջ խակ մտնցեր և, առանց բարձրացնելու սակայն մինչև խորաներուն վրայ։ Բայց անոնք ոչնին իրենց սեղանները մեր սրբավայրին մեր սրտերուն մէջ. մեր սէրը և յարգանքը՝ անոնց պաշտամունքը կը կազմեն, և մեր իդճերը՝ խոնչի բոյր ու ծոշին են՝ որ վեր կը բարձրանան ի

պատիշ անոնց յիշատակին։ Այդ երկնաշոր հայկազններու խմբին պարագլուխ են մարտիրոսները և խոսողակողները, վարդի պասկերով բոլորած իրենց գոռչար և շուսկրով շողջողուն, որոնք հաշատոյ դրօշը բնած կը յառաջեն։ Անոնց կը հետեւին հայրապետները և ձգնաշորները, որոնց շոշան հոգիները կը դիմքեն մեր սրտերը իրենց գեղեցկորեամբ։ Եշ վերջապէս, ամեն հասակ և վիճակ սուրբեր, որոնք նեղութեանց և վշտերու բոշքային մէջ զտուած և յուսաշոր, ծաղիկներ սինելով մեր ոտքերուն տակ՝ կեանցի վշոտ ձանապարհի վրայն կ'ասացնորդեն մեզի դեպ ի վեր։

Անոնց կարգին զետեղած ենք նաև քանի մը սուրբեր, որոնք թէ և սրտով և արիշնով հայ են, բայց դեպքերու և պարզաներու շնորհին հեռացած իրենց թմիկ ազգեն և հայրենիքն, անձանօր մնացած են մեզի շատերուն, մինչդեռ օտարներու ջերմ յարգանցի և պաշտամնների առարկայ՝ մինչև խորաններու վրայ բարձրացած են իրենց զարմանալի սրբորեամբ և մեծանեծ հրաշքներով, և մեր միւս կարծանքներուն վրայ՝ նոր փառք մ'ալ առելցուցած են հայ անուան։

Անոնց համառօտ վարքն է՝ որ կը ժամօրացնենք ազգիս մանուկներուն, պարզ ոճով, որ զիտնան թէ մարդ միայն հանձարով, գրչով, քաջորքեամբ կամ ուրիշ սիրագործորքեամբ չէ որ մեծ կ'ըլլայ և պատիշ կը քերէ ազգին, այլ նաև վարդով և առաքինորքեամբը, և ջանան անոնց օրինակին հետեւիլ։

ՄՐԲԱԶԱՆ ՀԱՅԿԱԶՈՒԻՆՔ

Ս. ԹԷՌԴՈՐ ՍԱԼՀՅՈՒՆԻ

Թէոդոր Սալհունի վարդապետ արշալոյսը
կը կազմէ հայ սուրբերու պատմութեան :
Կեանքի ամենէն սրտաշարժ բանաստեղծու-
թիւնն է, — մահ ծաղիկ հասակի մէջ, — որ
կու գայ մեր սրտերը ցնցելու, հայ նահատա-
կի մը վրայ սրբազնուած և աղքային դար-
ձած :

Ս. Թէոդոր, ծնած 269ին, որդին էր Սալ-
հունեաց Սուրէն իշխանին. մայրը՝ Աղուի-
թա կը կոչուէր, ինքն ալ ի սկզբան Արեն-
դոր, անշուշտ հեթանոս ծնողներէն իբր ըն-
ծայ մը նկատուած իմաստութեան դիցուհ-
ւոյն : Մէկ հատիկ որդին ըլլալով՝ միակ ա-
ռարկայն եղաւ ծնողական սիրոյն . բայց հարկ
չկար արենակից ըլլալ զինքը սիրելու համար .
դեռ հեթանոս՝ անմեղութիւն մը կը փայլէր

անոր շնորհալի կերպարանքին վրայ և թուխ
աչքերուն մէջ՝ որ կը ցուլային խարտեաշ գան-
գուրներու տակ:

Կը յառաջէր կենաց մէջ, յոյսերու միջէն
քայելով: Սուրէն կը յաճախէր իր երջանիկ
գուշակութիւնները, արժանաւոր ժառանգի
մը սպասելով, ինչպէս Սալհունեաց ցեղն ալ՝
կտրիճ իշխանի մը: Բայց երկինք տարբեր
բախտ մը սահմանած էր Աթենոդորի:

Սիկիրողն գիւղին քով կը թափանէր խումբ
մը բորոտներու, անգութ սովորութիւն մը զի-
րենք դուրս հալածելով մարդկային ընկերու-
թիւնէն: Բայց Աստուած Դասիկ քահանային
ձեռքով ուղեց անոնց ցաւերն ամոքել, յայտ-
նելով իրենց քրիստոնէութիւնը, — թշուառ
սրտերու կրօնքը: Բորոտները այնուչետե
միմիթարուած՝ ման կու զային հովիտներու
մէջ, Արքենուու աղքիւրի հառաչներուն խառ-
նելով ողբածայն նուագներ, զոր ոչ թէ ի-
րենց թշուառութիւնը՝ այլ երկնաւոր հայրե-
նիքի մը կարօտը կը յօրինէր:

Տեսան զիրենք անգամ՝ մը Աղուիթա և
Աթենոդոր, և յուղուեցան. Աղուիթա հի-
ւանդանոց մը շինեց անոնց, սրուն ինքը ե-
ղաւ խնամակալն և այցելուն: Հաւատքի
պատմութեան մէջ կը տեսնենք՝ թէ զթած

սիրտ մը միշտ նախապատրաստութիւն մ'է
քրիստոնէական կրօնքին. և յիրաւի այդ հիւ-
ւանդանոցին այցելելով, Աղուիթա և Աթե-
նոդոր կ'ազգուէին Դասիկի խօսքերէն, մին-
չև որ վերջապէս որոշեցին քրիստոնեայ ըլ-
լալ՝ Սուրբենէն ծածուկ:

Ամէն տարի Սուրէն հանդիսաւոր կերպով
կը տօննէր Հերակլէս և Ասկլեպիոս չաստուած-
ներուն տարեղարձը, բոլոր Սալհունեաց ցեղը
ներկայ կ'ըլլար, միայն Աթենոդոր էր որ կը
պակսէր: Կա իրեն պատճառ կը բերէր դըժ-
քաղդ հիւանդութիւնը, որ իր դէմքը այլա-
կերպեր էր, հակառակ ծնողական բոլոր
խնամքներուն: Վեց տարի այսպէս խոյս
տուաւ:

Հասած էր այն դարավլուխը՝ յորում ազ-
գային կեանքը իր ամենէն խոր յեղաշրջու-
թիւնը պիտի կրէր Ս. Լուսաւորչի ձեռքօվլ:
Սալհունեաց գաւառին մէջ համբաւ մը տա-
րածուեցաւ թէ դտնուած է Անակայ որ-
դին, որ Հրէից աստուածը կը պաշտէ և թէ
Արտաշատի վիրապը ձգուելու գատապար-
տուած է Տրդատէն: Անտեղութիւններէն՝
զոր անցորդները կը պատմէին՝ գուշակեցին
Աղուիթա և Աթենոդոր թէ Գրիգոր քրիս-
տոնեայ եղած պիտի ըլլայ, և անձկանօք կը

սպասէին անոր գալստեան , որովհետեւ
Արտաշատ երթալու համար Գրիգոր պէտք էր
Սալհունեաց ոստանէն անցնիլ :

Գրիգոր եկաւ . հետաքրքիրներու բազմութիւն մը զնաց տեսներու մահապարտը , ըրջապատռած բազմաթիւ դահիճներէ , որուն մարմնոյն վրայ դեռ կը տեսնուէին հետքերը՝ հրաշքով սպիացած վէրքերուն : Մինչ հեթանոսները «Մեռնի» կը գոչէին՝ թագաւորին և աստուածներուն դաւաճանին , անդին Աղուիթա և Աթենոդոր կը փափաքէին համբուրել այն ստները՝ որ բեւեռներու վրայ քայլեր էին , և այն ձեռները՝ որ շղթայուած էին հաւատքի համար : Իրիկունը իջաւ . քաղաքէն դուրս վրանի մը տակ բնակեցան Գրիգոր և դահիճները . անձկալի մթութիւնը իշխած էր անկասկած քունի մէջ ընկղմած քաղաքին վրայ : Ազուիթա , Աթենոդոր , Դասիկ և բորոտները մութին մէջ լուելեայն Ա . Գրիգորի գնացին , համբուրեցին անոր սրբազն սպիները և խնդրեցին որ մկրտէ զԱթենոդոր : Աչքերը երկինք վերցնելով՝ խաչակնքեց Աթենոդորի դէմքին վրայ , որ իսկոյն բժշկուելով նախկին գեղեցկութիւնը ստացաւ . բժշկեց բորոտներն աւ , բայց յանձն շառաւ մկրտել , նկատելով զայն քահանայի մը իշխացած անոր գալստեան , որովհետեւ Արտաշատ երթալու համար Գրիգոր պէտք էր Սալհունեաց ոստանէն անցնիլ :

բաւունքը . ուստի Գասիկ մկրտեց զի՞նքը : Դարձան ուրախութեամբ , անուշ մեղեղիներ բարձրացնելով դէպի ի երկինք , որ կը փայլէր իրենց զլխուն վրայ աստեղազարդ գմբեթով :

Աթենոդորը՝ թեոդոր դարձած էր :

Տրդատէն սաստիկ հրաման եկած ըլլալով , որ Գրիգորի պէս տանջուին որոնք որ աստուածներու չեն զոհեր , հրամայեց Սուրէն Թէոդորի անպատճառ զոհել և երկրպագել անոնց : Թէոդորի համար վտանգը նոր չէր . գուշակած էր զայն , մանաւանդ թէ փափաքած : Աներկիւզ պատասխանեց . «Քրիստոնեայ եմ» : Այս նոր անունը երկար հարցումներու պատճառ եղաւ . Թէոդոր բացատրեց անոր ամէն ինչ , յուսալով թէ կը բանայ հօր միտքը ծշմարտութեան առջև . բայց այն հոգիները , որոնց տիրապետած են անոտի պաշտամունք և հնաւանդ սովորոյթներ , յաւերժաբար զոյ են լուսոյ առջև : Մանչեց Սուրէն , զայրացած Թէոդորի խօսքերէն . «Կը փորձես զիս դարձնել , փոխանակ դուն հրաժարելու յիմարութիւններէդ . կեանք կամ մահ , ընտրէ երկուքէն մէկը . մի մեռնիր՝ յոյներու տեղ շահելու համար ատելութիւնը մարդիկներուն , աստուածներուն ու մանա-

ւանդ հօրդ» : Ահաւոր խօսքը կրկնուեցաւ ժպտուն շրթունքներէ . «Քրիստոնեայ եմ» : - «Որդիս չես, թէ որ քրիստոնեայ ես, պատասխանեց Սուրէն, հեռացիր այս տունէն հօրդ անէծքներուն հետ» :

Թէոդոր մեկնեցաւ տիրութեան և ուրախութեան մէջ . բնութիւնը կը տիրէր և հոգին կ'ուրախանար, ուզեց առանձնանալ հոգիտներու մէջ, որպէս զի հեռի աշխարհէ՝ խօսի միայնակ այն Աստուծոյն հետ, որ ա՛յլ ևս իր միակ սփոփանքն էր աշխարհիս վրայ : Եօթն օր Աեղեմնուտի ձորակին մէջ անցուց, Դասիկէն այցելուած երեխն, իր երգերով ընկերելով բնութեան այն լուռ մեղեգիին՝ որ դէպ ի Արարիչը կը բարձրանայ :

Ի զուր կը սպասէր Սուրէն Թէոդորի վերադառնալուն . կարծէր թէ շուտով պիտի ներում խնդրէր՝ ձանձրացած միայնութենէ և ձնողաց կարօտցած : Կատղեցաւ, վճռեց կամ սպաննել կամ միտքը փոխել տալ . առաւ դաշոյնը ու գնաց դէպ ի Աեղեմնուտ : Թէոդոր կը մրափէր հրեշտակային դէմքով . քոնի մոռացութիւնը խաղաղութիւն մը սփռած էր անոր շուրջը . յիշեց Սուրէն այն օրերը, երբ իր պայազատին որորանին մօտ նստած, կը դիտէր որդւոյն նիրհող կերպարանքը, որ եր-

բեմն երազներով կը ժպտէր . բայց այն ժամանակ շատ տարրեր բաներ կը մտածէր՝ քան մէկ հատիկ որդին սպաննել, և այն՝ իր ձեռքով : Գորովեցաւ, «Աթենոդոր, որդեսակ», կանչեց, «վերջին խօսք մը» : Արթընցաւ Թէոդոր ու պատասխանեց . «Հայր, Թէոդոր է քրիստոնէութեանս անունը» : Զղջաց Սուրէն իր կարեկցութեան վրայ, ու դաշոյնը շողացնելով, «Երթանք, ըստ, աստուածներուն զոհելու» . «Քրիստոնեայ եմ», եղաւ դարձեալ պատասխանը : - Վայրագ գաշոյնը կրկին շողաց ու մխուեցաւ Թէոդորի սրտին մէջ . նավերջին անգամ մ'ալ նայեցաւ Սուրէնի, «Հայր իմ» ըստ, և կեանքի լոյսը բիբերուն վրայ մարեցաւ : Սարսուս մ'անցաւ ծառերու միջէն ու ջրին երեսը . «Կորսուէ, որգեսպան», կարծես կը գոչէին քարերն անգամ : Անհետացաւ Սուրէն, նետելով սուրը այն առուակին մէջ, որու ծալքերուն մէջ կ'ամփոփուէին երբեմն Թէոդորի մեղմ երգերուն արձագանգները :

Կը նիրհէր հոն նահատակը, սիրուն կոկոնը՝ որ ձմբան մէջ փթթեցաւ, Ազուիթայի ձեռքին տակ մեծցաւ, Դասիկի քրտինքով բոյր տուաւ, և հօրը ձեռքով խլուեցաւ :

Քիչ ետքը բերաւ Դասիկի իր խումբը, ու-

բախութեան արցունքներով թաղելու Քրիստոսի նահատակը։ Հինգ տարի վերջը, երբ Լուսաւորիչ Կեսարիա կ'երթար, Սեղեմնուտի վրայ լուսաւոր ամպ մը տեսնուեցաւ, և Դասիկէն իմանալով թէ իր երախայրիքը հոն կը հանգչի, վկայարան մը շինեց։ Հոն շատ բժշկութիւններ կատարուեցան, հոն ճնշեցան ու մեռան Ազուիթա և Դասիկ։ Խոկ Սուրբն... չորս տարի թափառելով, հեռանալով իր որդւոյն յիշատակներէն, մեռաւ հեթանոս. և եթէ ինքը իր որդւոյն սպանողն եղաւ, անոր սննմահ յիշատակն ալ յաւերժացուց իր եղեռը, ու յաւիտենական նախատինք մը ձգեց իր անուան վրայ։

Այսուհետեւ ուխտատեղի մը գարձաւ Ս. Թէոդորի վկայարանը, ուր վանք մ'ալ շինուեցաւ, Գորովուց Ս. Թորոս անուամբ ճանշցուած, որուն կամարներուն տակ կը հնչեցնէին կրօնաւորները զիշեր ցորեկ իրենց քաղցր նուագները և սաղմուերգութիւնները։ Հոն անդադար երթեւեկ մը կար ուխտաւորներու, ցաւագարներու, որոնք ոչ միայն նահատակին գերեզմանին վրայ իրենց ցաւերուն բժշկութիւն կը գտնէին, այլ նաև Սեղեմնուտի առուակին ջուրէն, որուն մէջ լուաց Սուրբն իր արիւնոտ սուրը։

* *

Թէպէտ Լուսաւորիչն եղաւ մեր երկրին մէջ քրիստոնէութիւնը տարածողը, սակայն յայտ է թէ իրմէ առաջ մուտ գտած էր արդէն հայերուն մէջ Քրիստոսի հաւատքը, ինչպէս կը հաստատէ Վ. Հ. Ալշանի «Արշալոյս¹» գիրքը։ Ասկայն միշտ ծածուկ մնացած, և քրիստոնէից թիւը՝ սակաւ, թագաւորական տունն ալ հակառակ էր նոր վարդապետութեան։ Այդ սակառներու թուոյն մէջ էր Դասիկ քահանայ, ուսկից ընդունեցաւ Թէոդոր քրիստոնէութիւնը։

ՀՅԱ
ԶՀԿ
ԶՀԿ
ԶՀԿ
ԶՀԿ

Ս. Թէոդորի վկայաբանութիւնը կը գըտնուի Ա. Յայսմաւորին մէջ, մայիսի 16ին, և հրատարակուած է Հայապատուիին մէջ (Յօդուած 64)։ Այսքան մանրամասն նկարագրուած է, որ կարծել կու տայ թէ ժամանակակից մէ զրիչը, ինչպէս կ'ենթագրէ Վ. Հ. Ալշան, և բնագիրը՝ յունաբէն։ Ասկայն շատ հաւանական չէ առաջին կարծիքը, վասնզի Ս. Թէոդորի վկայարանը նկարագրել վերջը կ'աւելցնէ. «Եւ է վանք

1. Լոյս տեսած է Վենետիկ մեր տպարանէն, 1904ին։

Սբր. Հայկ.



ճգնաւորաց մինչև ցայսօր ... և կայ եղեալ
(քարը՝ որուն վրայ սպաննուեցաւ նահատա-
կը) ի վանքն Գորովու Ա. Թորոս կոշեցեալ» :
Տարիներ պէտք են թէռդորոս՝ թորոս փո-
խուելու համար: Համառօտութիւն կ'երեսի
սա ընդարձակ զրութեան մը որ յունաբէն
էր, և թերես յունազէտ Դասիկէն զրուած:
Այս վկայաբանութիւնը Աղաթանգեղեայ
հետ կը համաձայնի լստ բաւականի, գէթ
ժպամանակագրական տեսակետով: Այսպէս,
օրինակի համար, Ա. Գրիգորի վիրապին մէջ
մնալը շատ տարիներ կը հաշուէ, որովհետև
թէռդորի մկրտուելէն վեց տարի ետքը կ'ի-
մանայ հայրը՝ որդւոյն քրիստոնեայ ըլլալը և
եօթներորդ տարին կը նահատակէ. և այդ
թուականէն հինգ տարի վերջը՝ Ա. Գրիգոր
վիրապէն ելնելով կը հանդիպի Սուրենաչէն,
որով զրեթէ տասներկու տարի վիրապ մնա-
ցած կըլլայ: Բ. Յայսմաւորը (տպ. ի Կ. Պո-
լիս՝ Գրիգոր Գալք, 1706ին), որ շատ քիչ կը
տարբերի առաջինէն, երբեմն Գատիոս կը
դնէ փոխանակ Դասիոնի, Օրէն՝ փոխանակ
Սուրենի, Սրբենուտ՝ փոխանակ Արքենուտի,
երկու տարի չարչարուեցաւ Գրիգոր, կ'ըսէ,
փոխանակ երեքի, և այլն. մնացածը զրեթէ
միեւնոյն է: Ուրիշ մը, Գ. (տպ. ի Կ. Պո-

լիս, նոյնպէս Գրիգոր Գալք, 1730ին) բոլո-
րովին նոյն է Բ. ին հետ, միայն ընթերցուած-
ներու և տպագրութեան սխալներով կը տար-
բերի:

Իսկ Գ. Յայսմաւորը (տպ. ի Միջազիւղ
Գրիգոր Փէշտիմանձեանէ, 1834ին), շատ
կը տարբերի առաջին երեքէն, և շատ ալ
համառօտ է, ու Գր. Լուսաւորչի երկրորդ
անգամ Սուրենաչէն հանդիպիլը՝ թէռդորի
մահուանէն տասնըհինգ տարի ետքը կը դնէ,
որովհետև կարելի չէ «և յետ իբրև հնգե-
տասան ամաց» խօսքը հասկնալ իբր Լու-
սաւորչի վիրապ մտնելէն հաշուելով:

Ա. Թէռդոր Սալհունիի բանաստեղծական
սիրուն կեանքը և դիւցազնական մարտիրո-
սութիւնը՝ Հ. Ամելան Վ. եռանդուն զըշով
նկարագրած է իր Յուշիկներուն մէջ:

ՍՈՀԱԿ ԱԲԵՂԱՅ

Առաջակ կամ՝ Խաչակ աբեղայ՝ առաջինն
է մեր այն սրբակեաց անձինքներէն, որոնք
ծներ են օտար երկրի մէջ և մներ են հեռու
իրենց հայրենի հողէն: Ասոր մանկութեան
մասին պատմութիւնը մեզի ուրիշ բան չա-

ւանդեր, բայց միայն թէ ծնած էր «Հոռոմոց արևելեան սահմաններուն մէջ», և կ'ապէրէր Վաղեսի թագաւորութեան ժամանակ (364-378 տարիներուն):

Աշակ' անվեչեր և նախանձախնդիր քաշանայ մը, ոխերիմ արիանոսներու, որ մը կ. Պոլսոյ իր ճգնարանէն ելաւ և Վաղեսի ներկայանալով, որ Արիոսի աղանդով թաթաւուած էր, ըսաւ անոր. «Տէ՛ր արքայ, բաց ուղղափառներուն եկեղեցիները»: Թագաւորը արհամարհեց զինքը և ուշադրութեան անգամ արժանի չհամարեցաւ:

Այն ժամանակները (377-8) բարբարոսք կայսերութեան սահմանները կ'ասպատակէին. երբ Վաղէս կը ճեռանար Պոլսէն՝ Գոթաց դէմ մղելիք պատերազմով զբաղած միտքը, դարձեալ տեսաւ նոյն արեղան որ կ'ըսէր. «Ո՛վ կայսր, բաց ուղղափառներուն եկեղեցիները, ապա թէ ո՛չ՝ պատերազմէն ողջ չես դառնար»: Վաղէս չհանդուրժելով այս օտարապղի արեղային նախատանաց՝ հրամայեց ուժգին ծեծել սուրբը և յետոյ փուշերու մէջ ձգել: Կայսրը երբ Տիրիտոն կոչուած տեղը հասած էր, դարձեալ իր առջև տեսաւ Աահակը - երազ չէր՝ այլ իրական - որ ձիուն սանձէն բռնած՝ նոյն բառերը կը կրկնէր,

կը սպառնար և կը նզովէր Արիոսի պիղծաղանդը: Վաղէս հրամայեց Սատուռնինս և Բիկտոր իշխաններուն՝ բանտ դնել Սահակ արեղան և տանջել մինչև իր գարձը: Երբ կապուած կը տարուէր սուրբը, ետև գարձաւ և ըսաւ Վաղեսի. «Ո՛ւ պիտի չգտնանաս պատերազմէն, պիտի հալածուիս թշնամիէն և պիտի այրուիս»: Սուրբին խօսքը ձիշդ կատարուեցաւ: Երբ Վաղէս՝ յաղթուած Գոթերէն՝ իսրահիթի մը մէջ ապաստանեցաւ, թշնամիները վրայ հասան և զինքը այրեցին 378ին: Ճիշդ նոյն օրը Աահակ ըսաւ իր մօռը եղաղներուն. «Ոհա Վաղէս կ'այրուի»:

Երբ Հռոմայ Գրատիանոս կայսեր հրամանով՝ Բիւզանդիոնի գահին վրայ բարձրացաւ քաջ և ուղղափառ թէոդոսը, ետ գարցուց Վաղեսէն աքսորուածները, որոնց հետ նաև Աահակ արեղան, և բացաւ ուղղափառներուն եկեղեցիները: Սատուռնինս և Բիկտոր իշխանները որբոյն ոտքը ընկան՝ իրրեմարգարէ մը մեծարելով զինքը, նզովեցին Արիոսը և խնդրեցին Աահակէն՝ որ զիրենք ալ իր աշակերտներու թուոյն մէջ ընդունի: Աահակ մինչև իր մահը վանքի խցիկէն գուրս չելաւ, և կարգէ դուրս ճգնութիւններով զարմացուց բոլոր կայսերական քաղաքը: Մի ան-

գամ միայն վանքէն դուրս ելաւ, Կ. Պող-
սոյ տիեզերական ժողովին ներկայ ըլլալու
384ին։ Վանք մը հիմնած էր ծովեզերքին
մօտ, ուր բազմաթիւ վանականներ՝ իրեն
առաջնորդութեան ներքեւ՝ գերազանց օրի-
նակներ կը հանդիսանային առաքինութեան։
Անոնց մէջ նշանաւոր եղաւ Ս. Դաղմատիոս,
որ իրեն յաջորդեց։ Արբութեամբ կնքեց
կեանքը Դ դարուն վերջերը, մայիս 30ին։

Աահակ աբեղան անծանօթ մնացած է մեր
պատմիչներուն, որուն վարքը գիտենք միայն
օտար պատմիչներէ¹, գորոնք կը թուարկէ-
չ . Զամշեան²։ Մեր Յայսմաւուրները իրենց
աղքիւր ունեցած են յիշեալ պատմիչները,
փասն զի Վաղեսի նկատմամբ պատմածնին
բոլորովին համաձայն է ընդհանուր պատ-
մութեան։ Բ և Գ Յայսմաւուրները բառ առ
բառ նոյն են իրարու հետ, և Դ շատ քիչ
կը տարբերի առաջիններէն, միայն հետևեալ
դէպքը կը պակսի։ Երբ Վաղէս հրամայեց

1. Սոլոմոնոս, Զ. 40. — Թէոդորեասոս, Բ.

34. — Կեղենոս, և այլք։

2. Պատմ. Ա. էջ 726։

Աահակը փուշերու մէջ ձղել, «Երեւեցան
նմա (այն է՝ Աահակայ), կ'ըսէ, հրեշտակը
Աստուծոյ սպիտակ զգեստիւք յայտնագէտ-
ե հանին զբահանայն Աստուծոյ»։ Մենք
Աահակայ յիշատակը մայիս 29ին կը կա-
տարէինք, Յոյները օր մը վերջ, իսկ Լատինք՝
մայիս 26ին (Հմիտ. Migne, Encyclopédie
théologique, Հտ. ԽԱ)։

ԽԱԶԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Յայսմաւուրք կը ներկայացնեն մեղ այս
անունով քահանայ մը, թարգմանչաց խըմ-
բէն. որ իր վարդապետներու մահուանէն
ետքը, քարոզութեան պարապելով շատերը
զղումի բերաւ։ Անգամ մը Յայտնութեան
տօնին օրը Ակոռի գիւղը զնաց, և չոն գիշերը
տեսիլ մ'ունեցաւ։ Շքեղ պալատ մը տեսաւ,
ուր բազմաթիւ անձինք, փառքերու և լոյսե-
րու մէջ, ուրախ զուարթ կոչունք մը կ'ընէին.
անոնց մէջ կային նաև իր մէկ քանի ծա-
նօթները և բարեկամները։ Դուրսը, պալա-
տին դրան առջև, տրաում տիսուր կեցած էր
Ակոռեցի Ղազար անունով մէկը. վարդա-
պետը մօտեցաւ և հարցուց անոր, թէ ին -

շուր դուրսը տիպուր կեցած էր. — « Ի՞նչ-
պէս ուրախ ըլլամ, պատասխանեց Ղազար,
որ ընտանիքիս այնչափ գրամ և ստացուածք
ձգեցի, և հոգւոյս համար ոչ կ'աղօթեն և ոչ
ողորմութիւն կու տան աղքատներուն՝ որ
Աստուած ալ ինծի ողորմի. մինչդեռ ուրիշ-
ները ողորմութեանց ձեռքով և աղօթքով
կրցան աղքայութիւն մտնել » : Երկրորդ օրը
երբ Խաչիկ վարդապետը պատմեց եկեղեց-
ւոյն մէջ իր տեսիլը, յանկարծ ժողովը գեան
միջէն Դաւիթ անունով մէկը գոչեց. « Ճըշ-
մարիտ է, վարդապետ, ինչ որ պատմեցիր » :
Այդ Դաւիթ անձը՝ Ղազարի որդին էր, որ
անձնալով իր անհոգութիւնը, մեծ կոչունք
մ'ըրաւ այն օրը գիւղի բոլոր աղքատներուն,
և քահանայից ալ առատ ողորմութիւն տուաւ
որ հօրը հոգւոյն համար աղօթեն : Ուրիշ զի-
շեր մը տեսիլը կրկնուեցաւ, և այս անգամ
տեսաւ վարդապետը՝ որ Ղազար ալ ուրիշնե-
րուն հետ փառքերու և ուրախութեան մէջ
էր :

Այս սուրբ վարդապետը բոլոր կեանքը
քարոզութեամբ անցուց. ճգնութեան և ա-
ռաքինութեան կենդանի օրինակ մ'եղաւ ա-
մենուն, կրօնքին սիրով վառեց ցրտացած
սրտերը, անաշառ յանդկմանող մ'եղաւ մե-

դաւորներուն, և իր սրբութեամբ և գործած
հրաշքներով պաշտելի եղաւ բոլոր ժողովը-
դեան : Բարի ծերութեամբ կնքեց ճգնասուն
կեանքը, և երկինք թռաւ ընդունելու իր ար-
դեանց պատկը :

* * *

Յայսմաւուրք թարգմանիչներու դասին մէջ
կը գնեն Խաչիկ վարդապետը, սակայն մատե-
նազրութիւնը մեղի տեղեկութիւն մը չի տար
բնաւ ասոր մասին . Վ. Հ. Գարեգին միայն
անունը կը յիշէ երկրորդ թարգմանչաց շար-
քին մէջ : Դ Յայսմաւուրը մայիս 31ին կը
դնէ յիշատակը, իրը մահուան թուականը,
մինչդեռ Բ և Գ՝ Յունուար 7ին, անշուշա-
նոյն օրը ունեցած տեսիքին պատճառով :

♦ ♦ ♦

բարբարոսին թողոր հրապոյըներուն և սպառ-
նալիքներուն։ Զօրավարը բարկացած՝ հրա-
մայեց տանջել զինքը մինչև որ յանձն առնու
իր առաջարկը. բայց փորձը անօգուտ եղաւ.
առաքինի կենը՝ զարհուրելի տանջանքներուն
պատրաստութիւնը աշքին առջեւ տեսնելով
իսկ՝ անյօղգողդ մնաց մոքին վրայ։ Թագու-
հին ձիռւ մը ագիէն կապելով՝ ձգեցին գաշ-
տին վրայ. զրօնալի տեսարան մը՝ իշխանին
և զինուորներուն, ու սրտաճմլիկ՝ աղգային-
ներուն։ Մացաները և քարերը յօշ յօշ պա-
տառեցին նահատակին մարմինը։

Երեկոյեան, դէմ բանակին առջեւ տարա-
րածուած գաշտը՝ աստղազարդ երկինք մ'ն-
գած էր. պայծառ լուսիկներ ցանուած էին
հոն՝ ուր կաթկթած էին նահատակին արիւ-
նը և ընկած մարմիոյն կտորները։ Սարսուռ
մը ցնցեց ամբողջ բարբարոս բանակը և իշ-
խանը. Գերիներուն մէջ կար Աթանաս ա-
նունով քահանայ մը, աշակերտ Ո. Մես-
րովի, որ Երուսաղեմէն դարձած էր և իրեն
ընկերները բարբարոսներէն նահատակուած
էին։ Իշխանը հարցուց Աթանասին թէ ինչ
լոյս էր այն. — «Քրիստոնեաները, պա-
տասխանեց քահանան, երբ ճշմարիտ Աս-
տուծոյ համար կը տանջուին՝ թէ հոս և թէ»

ՍՐԲՈՒՀԻ ԹԱԳՈՒՀԻ

ԵՒ

Դ Ի Զ Ա Փ Ա Յ Տ Տ Ի Վ Կ Ա Յ Ն Ե Ր Ը

Գարնանային չեղեղներու նման մերթ ընդ
մերթ կ'իջնէին կովկասու բարձունքէն բարբա-
րոս հրոսակներ, աշխարհներ կողոպտելու և
աւրշտկելու. Հինգերորդ գարուն վերջերը տե-
ղի ունեցաւ այս ահաւոր ասպատակութիւննե-
րէն մին։ Հօնաց վայրագ ազգը, երեք մասի
բաժնուած, իրենց թագաւորին առաջնորդու-
թեամբ ասպատակեց Ազուանից, Վրաց և
Հայոց աշխարհները։ Զօրապետներէն մէկը
յարձակեցաւ Արցախու կամ Խաչենոյ երկ-
րին վրայ, զոր մոխիր և աւելակ գարձնե-
էն ետքը՝ շատերը գերի բռնեց, ոչ սեռի և
ոչ հասակի նայելով։

Գերիներուն մէջ կար թագուհի անունով
կին մը, «գեղեցկատեսիլ և մեծազգի»։ Իշ-
խանը ուզեց իրեն կնութեան առնուլ թա-
գուհին, բայց նա քաջութեամբ դիմադրեց

երկինքը կը փառաւորուին, ինչպէս այսօ-
րուան նահատակուող թագուհին» : Իշխանը
խռովեցաւ և որոշեց քրիստոնեայ դառնալ .
Աթանաս զինքը և անոր որդիքը մկրտեց, զօր-
քերն ալ իշխանին հետեւեցան : Բարբարոսը
երկիւղած քրիստոնեայ մ'եղաւ՝ թէնիփիլոս
կոչուելով, որդիքն ալ Մովսէս և Երանոս :
Հայ գերիները Աթանաս քահանային հետ ա-
զատ արձակուեցան :

Թագաւորը լսելով թէ իր զօրապետը ամ-
բողջ բանակով քրիստոնեայ դարձեր է,
նախ՝ անոյշ խօսքերով ու յետոյ սպառնալի-
քով փորձեց ետ կեցնել թէսփիլոսը իր նոր
հաւաաքէն . և վերջապէս յուսահատած՝ բո-
լորն ալ սպառնել հրամայեց : Իշխանին եր-
կու որդիքը, Մովսէս և Երանոս, կրցան ու-
րիշներու հետ փախչիլ և բարձր լերան մը
ծայրը ապաստանիլ, ուր ճգնաւորներու
խղիկներ կային : Սակայն բարբարոսները
շուտով հասան ետեւնէն և զամէնքն ալ նա-
հատակեցին՝ հոն բնակող կրօնաւորներուն
հետ, և յետոյ դէզ մը ձեւացնելով՝ այրեցին
նահատակաց մարմինները, որով և լեռը Գի-
գափայտ կոչուեցաւ : Ասոնց յիշատակը մարտ
30ին կը կատարուէր, ըստ այլոց՝ 29ին :

* *

Այս մեր պատմածը Դ Յայսմաւուրէն է .
Բ և Գ Յայսմաւուրները մարտի 29ին կը
գննեն ասոնց յիշատակը, և ունին հետեւեալ
տարրելութիւնները :

Այն զօրավարը, որ յետոյ թէնիփիլոս կո-
չուեցաւ, թագուհին նահատակելէն առաջ
սպառնեց Աթանաս քահանան, որ Երուսա-
ղէմէն եկած էր, անոր երկու ընկերներով,
ու Ս. Մեսրովի աշակերտներէն ալ մի քա-
նին, որոնք Խաչենոյ երկրին մէջ կը ճգնէին :
Դարձեալ՝ ուր որ ապաստանեցան Մովսէս և
Երանոս՝ հոն ճգնաւորներ չկային, այլ վեր-
ջը լսելով սրբոց նահատակուիլը լերան վրայ,
գնացին և վանք մը շինեցին հոն :

Հաւանօրէն կրնանք հաստատել, թէ այս
գէպքը՝ նոյն է Մովսէս Կաղանկատուացւոյ
պատմածին հետ : Եօթներորդ դարը գեռ չը
սկսած, կ'ըսէ, բարբարոսները քանդեցին
կատարոյ վանքը, շինուած Գիղափայտ լե-
րան ծայրը, և հոն յայտնուեցան սրբոց նըշ-
խարներ, որոնք Ս. Գրիգորիսի աշակերտած
էին, և անոնց մէջ կը յիշուին յանուանէ Ս.
Մովսէս, Ս. Դանիէլ և Ս. Եղիա, իրը Մաս-

քութաց Անհսան թագաւորին որդիքը։ Առանց յիշատակը կը կատարուէր սեպտեմբեր 8ին։

ՍՄԲԱՏ ԲՈՂՄԱՅՈՂԹ

Սմբատ Բագրատունի իշխանը, ընդհանուրապէս Բազմայադր անուամբ ճանչցուած, Յայսմաւուրները տօնելի կը հաշակեն յուլիս 9ին։ Մօրիկ հայկազն կայսեր (582-602) և Պարսից Խոսրով Արքուէզ թագաւորին (590-627) ժամանակակից էր, երբ հայրենի աշխարհնիս, երկու մեծ պետութեանց մէջ բաժնուած, հզօր ձեռքի մը պէտք ունէր՝ սպառապուռ աւերման վտանգէն աղատելու համար։ Այդ ուժեղ ձեռքը եղաւ Սմբատ «յաղթահասակ և կորովի, միանգամայն և աստուածասէր» իշխանը, որ Մուշեղի հետ միացած՝ շատ քաջութիւններ ըրաւ ի նպաստ Խոսրովու, որնց փոխարէն թագաւորը շատ պարզեւներ տուաւ իրեն և իր Աշու և Վարալտիրոց որդիքներուն, և վերջապէս մարդպան դրաւ զի՞նքը Հայոց և Վրկան աշխարհին։ Սմբատ նախ Վրկան գնաց, ուր բազմաթիւ աղգայիններ կային, որոնք Պարսից

մէջ ծնած և սնած, անտեղեակ էին իրենց մայրենի լեզուին։ Ի՞նչպէս ուրախացան անոնք, երբ իմացան թէ իրենց աղգակից քաջ և առաքինի Սմբատն էր՝ որ պիտի իշխէր այնուհետեւ այն կողմերուն վրայ։ Հզգացին անկէ վերջը օտարութեան լուծին ծանրութիւնը. երջանկութեան դարագլուխ մը բացուեցաւ, երբ իշխանը ամէն հոգ տարաւ նիւթեկան բարօրութեան հետ՝ բարոյապէս ալ երջանիկ ընելու իր հպատակ աղգայինները։ Վարժարաններ հաստատեց, ուր ժողվեց անոնց զաւակները և հրամայեց որ մայրենի լեզուն սովորին։ Խնդրեց Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսէն՝ որ Վրկանի մէջ եպիսկոպոսական թեմ մը հաստատէ, և Արէլ անունով մէկը եպիսկոպոս գնել տուաւ։ Տարի մը ետքը Տիղբոն գնաց Խոսրով թագաւորին մօտ, ուր շատ պատիւներու հետ՝ հրաման ալ ստացաւ Դուին քաղաքին մէջ եկեղեցի մը շինելու։

Երբ Սմբատ Դուին դարձաւ, վախճանած զտաւ Մովսէս կաթողիկոսը և անոր փոխանակ դրաւ Ռշտունեաց Արքահամ եպիսկոպոսը։ Յետոյ մկան կառուցանել Ս. Գրիգոր եկեղեցին կոփածոյ քարերով, Մեծին Վարդանայ կառուցած փայտաշէն եկեղեցին

քակելով։ Ամայն պարսիկները բողոքեցին Խոսրովու ըսելով, թէ Սմբատայ շինած եւ կեղեցին վնասակար է բերդին։ Թագաւորը թէ և հրամայեց քակել եկեղեցին, բայց պատուիրեց որ բերդէն քիչ մը հեռու անխափան ուրիշ մը շինեն, ինչպէս կը փափագէր Սմբատ, որ աւելի սիրտ առած՝ մեծ և հոյակապ եկեղեցի մը կանգնեց Լուսաւորչին առունով։

Այս ատենները մեր եկեղեցին դանազան կրօնական խնդիրներով յուղուած ըլլալով, Դուին քաղաքին մէջ ժողով մը գումարել տուաւ վրդոված հոգիները խաղաղելու համար։ Երբ այսպիսի բարեկարգութեանց զրադած էր Սմբատ, Հեփթաղները յարձակեցան Պարսից սահմաններուն վրայ, և Խոսրով՝ Տիգրոն կանչեց դարձեալ Սմբատը, որ յաջողութեամբ վերջացուց պատերազմը, ցիրուցան ընելով թշնամոյն բանակը և անոնց թագաւորը սպաննելով։

Սմբատայ յաղթութեանց շնորհիւ ծաղկեցաւ աղքերնիս, կրօնքը տեսակ մը գերիշխանութիւն ստացաւ նոյն իսկ հեթանոսաց աշքին, վանքերը բագմացան՝ որբութեան և դիտութեան լոյսերը սփռելու մեր աշխարհին վրայ, — ահա ինչ որ գործեց Սմբատայ սու-

րը ի նպաստ մեր աղգին։ Ութ տարի մարզպանութիւն ընելէն վերջը, Տիգրոնի մէջ կընքեց իր առաքինի և փառաւոր կեանքը, 602 թւին։ Մարմինը Կոդ գաւառը բերուեցաւ և Գարոնի մէջ թաղուեցաւ մեծաշուք հանդիսով։ Ամբողջ աղգը լացաւ այսպիսի քաջ և առնիքափի իշխանի մը մահը, որ անդարմանելի կորուստ մ'եղաւ իրեն։

Պատմութիւնը մեղի իշխանիս մեծագործութիւնները միայն կ'աւանդէ. սակայն իր տօնը կամ յիշատակը՝ որ կը կատարուէր ժամանակու եկեղեցւոյ մէջ, ենթագրել կուտայ թէ ինչպիսի բարի գործերով և առաքինութիւններով զարդարուած էր, որոնց վրայէն եթէ չենք կրնար վերցնել լուսւթեան քօղը, բայց այնու հանդերձ չենք խղճեր զինքը սուրբ իշխաններու կարգին մէջ դասել։ Որքան ծածկուած, այնքան մեծ կ'երեւին այն առաքինութիւնները, որոնցմով սուրբ եղաւ Սմբատ փառքերու և պատիւններու մէջ, առանց մարտիրոսական պսակի։

* * *

Պատմութիւնը (Յովհ. կթ., Ասողիկ, Վարդան, Կիրակոս, Ամբուէլ) այսշափ կ'աւանեներու մէջ, առանց մարտիրոսական պսակի։

դէ մեզի Ամբատայ գործերու և կենաց մասին։ Սակայն Սերէոս մեծ փոփոխութիւն կը բերէ անոր կենաց նկատմամբ, փոփոխութիւն մը՝ զոր կը զգայ բնականաբար հայկ. եկեղեցւոյ պատմութիւնը, որուն քննութիւնը գրբուկիս ծրագիրէն դուրս կը մնայ։

Սերէոս, որ մանրամասն կը խօսի Ամբատայ վրայ, յետագայ պատմիչներու միակ աղբիւրը եղած է։ Ամբատայ կարգէ դուրսուժելութեան մասին Հերակլի պատմիչը ԺԴ. զլիուն մէջ հետեւեալը կը գրէ, եթէ հեղինակէն հնարուած շշամարինք զայն։ Երբ Ամբատ ուրիշներու հետ միացած՝ Ցոյներէն ապստամբիլ կը մտածէր, մատնիչներու բերնով Մօրիկ կայսեր ականջը հասաւ անոր խորհուրդը, և Ամբատ Պոլիս տարուեցաւ։ Վաղ Ամբատը կրկիսին մէջ ձգուեցաւ՝ զազաններու հետ կոռուելու համար. առաջին անգամ դիմացը արջ մը հանուեցաւ, որ հայուն բանցիով անշարժ գետին ընկաւ. յետոյ ցուլ մը և առիւծ մը, որքնք առանձին առանձին անոր դիմացը հանուեցան, անդէն Ամբատէն սպաննուեցան։ Վաջայազթը յոգնած՝ նստեցաւ մեռած առիւծին վրայ. կայսրուհին, որ հանդիսատես եղած էր, խնդրեց որ քաջին կեանքը չնորհուի, և ալնոլիս ազատեցաւ։

Ամբատայ Հեփթաղներու դէմ պատերազմ միլը և անոնց թագաւորը սպաննելը, նոյն Սերէոսն է որ կը պատմէ ԼԸ գլխոյն մէջ։

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱԱԷՐ

Յովհան իմաստասէր, մեր ամենէն մեծ գէմքերէն մին, — ոչ միայն իր բարձր աստիճանով, այլ նաև իր սուրբ, զիտնական և լուսամիտ անձն, — Տաշրաց գաւառի Օձուն գիւղին մէջ ծնաւ, Եղարու կիսուն։ Ծննդեան ձիւդ թուականը չզիտցուիր։ Մանուկ հասակէն սիրեց սրբազն զիտութիւնը և վիճակը, իր առաքինի ծնողաց խօսքերէն յօրդուած։ Քիչ ատենի մէջ գերազանցեց ոչ միայն իր ընկերները, այլ նոյն իսկ իր վարժապետը՝ Թէկոդորոս Քարենառորը, որ այն ժամանակի ամենէն սուրբ և զիտուն անձն էր։ Թէ ո՛քան սէր և համարում ունէր իր վարժապետին վրայ, կրնանք անոր խօսքերէն իմանալ. «վարժապետ վեհագոյն ունէի», կ'ըսէ իր ինքնազիր վարքին մէջ, յԱստուծոյ կարգեալ ինձ, հայր միանդամայն և հրահանգող հոգեկան վարժութեանց՝ զիմն թէկոդորս, ըստ մերումս՝ աստուածաշնորհ պատշաճեալ լեզուի»։

Յովհաննէս իր վարժապետէն ոչ միայն գիտութիւն՝ այլ նաև ճգնութեան և առատուածահաճոյ կենաց միջոցները սորզեցաւ։ Երբ ՇԱՇ թուականին Եղիա կաթողիկոսը վախճանեցաւ, այն բարձր աթոռին ուրիշ արժանաւոր մը չգտան բաց ի Յովհաննէն, որ նախ դժուարեցաւ թողուլ այն սիրելի միայնարանը, որ իր մաքուր հոգւոյն միակ երջանկութիւնը կը կազմեր. բայց վերջապէս տեղի տուաւ ամբողջ ազգի մը թափանձանքին, Աստուծոյ ձայնը նկատելով անոր մէջ։

Հայրապետական գահին վրայ բարձրանաւէն վերջը՝ կարծես փոխուեցաւ Յովհաննէս, այլ եւս այն մենասէր, աղքատ ճգնաւորը չէր։ Եկեղեցական պաշտամանց միջոց չքեզ կերպարանք մը կ'առնուը, երբ փառաւոր զգեստներ հագած, անոյշ իւղերով օծուած, մօրուքն ալ սուկով զարդարած, ոսկի գաւազան ի ձեռին, հայրապետէ աւելի՝ թագաւորակերպ կ'երեւէր տեսնողներուն։ Այս արտաքին փառաւորութիւնը՝ «տօնասէր ժողովրդեան» համար էր, ինչպէս կ'ըսեն Յայսմաւուրք։

Բայց անոր ներքին կեանքը այն էր՝ ինչ որ անցուցած էր աղքատ խղիկն մէջ։ Կաթողիկոսական գահը չէր կրցած չափաւորել անոր խիստ պահերը և ծոմերը, նոյն ճշդ-

նասուն Յովհաննէսն էր։ Եթէ այն չքեզ զգեստներէն ներս թափանցէինք, պիտի տեսնէինք մարմնոյն վրայ տանջող խարազ մը, և անկից ալ ներս՝ խոնարհ հոգի մը։

Հայրապետին փառահեղ կերպարանքը և վայելուշ հասակը կը գիւթէին ամենուն սիրտը, և անոր համբաւը թռաւ հայրենիքի սահմաններէն անդին։ Վլիթ ոստիկանը փափաքեցաւ տեսնել կաթողիկոսը իր չքեզ զգեստներու մէջ։ Յովհաննէս ոստիկանին ինդիրը չի զլացաւ, և չքեղապէս ընդունուեցաւ անկից։ Յետ խօսակցութեանց՝ Վլիթ ըստ հայրապետին։ «Կը զարմանամ, ձեր Փրկուուը այնքան աղքատ ու խեղճ էր, ի՞նչպէս զուք՝ անոր աշակերտները՝ այդպէս կը փառաւուրուիք»։ Յովհաննէս, յետ փաեմ լուսթեան մը, բացատրեց այն պատճառները՝ որոնք կը ստիպէին զինքը այն փառաւոր երեւութին տակ ծածկուիլ. կերջը բացաւ կուրծքը՝ որ ծածկուած էր խարազով, և մէջքը՝ երկաթագամ զօտիով։ Ոստիկանը սարսափած ետ քաշուեցաւ, և սուրբին ոսքը ընկած՝ «իրաւցընէ այր Աստուծոյ ես դու» գոչեց, և անոր օրհնութիւնը խնդրելով, կրկին պատուով տեղը ուղարկեց հայրապետը։


Յովհան, իր ձիքերով Ա. Աթանասին և

մանաւանդ անուանակից Ոսկեբերանին նմանելով, պէտք էր վշտերով ալ նմանիլ անոնց : Նախանձը թափեց անոր վրայ բոլոր թոյնը, ամէն տեսակ զրպարտութիւնք տեղացին վրան, որոնց դէմ ուրիշ գէնք չզործածեց նա՝ բայց լուռթիւն և համբերութիւն, որոնցմով յաղթանակեց թշնամիներուն : Յեւ տասը տարի կաթողիկոսական պաշտօնը վարելու՝ իր տեղը Դաւիթ Արամոնացին դրաւ, և ինքը զնաց առանձնանալու իր ծննդավայրին մօտ : Օր մը երբ կը պատարագէր, ամառուան ամենէն տաք օրերուն, երկու օձեր դիմացի բլուրէն սողալով կուզային դէպ ի մատուռը . սպասաւորող կրօնաւորը զարհուրած գոչեց . գարձաւ հայրապետը, խաչակընքեց և անոնք անշարժ կեցան, և յետոյ սուրբին գաւազանին հարուածով քարացան : Գրեթէ տարի մը ապրեցաւ Յովհան Անարանին մէջ և ապա հանգեաւ ի Քրիստոս, յետ պայծառացնելու մեր եկեղեցին տօներով, չարականներով և ուրիշ բարեկարգութեամբ, և ճոխացնելու ազգային մատենադարաննիո՞նառերով, մեկնութիւններով ու այլ և այլ գրքերով :

* *

Մինչեւ Հ. Զամշեանի դարը, կը կարծուէր թէ Յովհան Իմաստասէր Քաղկեդոնի ժողովոյն հակառակորդներէն էր, որով միշտ ատելի եղած էր մի քանի տղէտներու, մանաւանդ Միարանողներուն, որոնք իրենց ժամանակի հնարուած պատմութիւնները կը կարդային և Յովհաննէս Տիկորեցին կը շփոթէին Օձնեցւոյն հետ : Հ. Զամշեան իր ընդարձակ քննութեամբ այդ մթութիւնը փարատեց (հմմ. Պատմ. Հայոց Բ. էջ 571-672), այնպէս որ ընթերցողը անկարող կ'ըւլլայ այլ եւս կրկնելու Վարդան և Կիրակոս պատմիչներուն և վերջին դարերու Յայսմաւուրաց սխալները այս նկատմամբ, և այս կէտիս մէջ զիհնել ընդդէմ Հ. Զամշեանի ուրիշ բան չնշանակեր, բայց եթէ կատարեալ պակասութիւն զիւնական անկեղծութեան : Հոս չենք ուզեր Հ. Զամշեանին փատերը կրկնել . միայն այս կը յիշեցնենք, որ Օձնեցին՝ Քոթենաւորին աշակերտն էր, Քոթենաւորին, կ'ըսեմ, որ Մայրագոմեցւոյն դէմ զրած ճառով ինքզինքը քաղկեդոնեան կը հոչակէ : Ուրեմն ի՞նչպէս կրնար Օձնեցին

այնքան գովիել Գոթենաւորը և մինչեւ վերջը
անոր հաւատարիմ աշակերտ մնալ, եթէ ին-
քը հակառակորդ մ'ըլլար Քաղկեդոնի ժո-
ղովին: Օձնեցւոյ վարքին աղբիւրները եր-
կուքի կը բաժնուին, առաջին՝ Յովհ. Պատ-
մաբանը, որուն հետեւած է Գ. Յայսմաւորը.
Երկրորդ աղբիւրն է Վարդան, որուն հե-
տեւած են Կիրակոս և Բ. Յայսմաւորը: Յով-
հաննէս Պատմաբանը, որ ամենէն հարազատ
աղբիւրն է Օձնեցւոյ վարքին, բնաւ ակնար-
կութիւն չըներ վերջին տարին պաշտօնէն
Հրաժարած ըլլալուն և առանձնանալուն, ինչ-
պէս կ'ըսէ երկրորդ աղբիւրը. այլ կ'ըսէ թէ՝
11 տարի կաթողիկոսութիւն ընելով վախ-
ճանեցաւ. այսպէս նաեւ Գ. Յայսմաւորը,
թէ և կ'աւելցնէ թէ «յետ մահուան թաղե-
ցաւ յանապատին իւրում»:



ԵՐԿՐՈՐԴ ԱՏՈՄԵՍՆԻՑ

ԳԵՂՈՐԾ ԱԿԵՍՑԻ ԵՒ ԽՈՍԹՈՎ ԴԱԲԵՂԵԱՆ

Իններորդ դարը՝ մեր երկրին մարտիրո-
սական դարն եղաւ: Արեան հեղեղներու փո-
խուեցան մեր սիրուն առուակները և գետե-
րը՝ անդադար ջարդերէն և սպանութիւննե-
րէն, «զոր լեզու ոչ բաւական լինի պատ-
մել, կ'ըսէ մեր պատմաբան կաթողիկոսը, և
ոչ ընդ զրով բավանդակել»: Ահաւոր մղձա-
ւանջ մը կը տագնապէր ամբողջ ազգը, ա-
մէն կողմ աւերածի հետքեր կ'երեւին: Սա-
կայն հայերը սուրի և կրակի գէմ անվեհեր
կեցան. մահը՝ կեանք կը նշանակէր, երբ
հաւատը համար էր: Հագարացի սոսուար
բանակ մը արշաւեց մեր երկիրը 853 թուա-
կանին Բուզայի առաջնորդութեամբ: Սար-
սափը տիրեց ամենուրեք. թշուառ ժողովուր-
դը թողուց տուն ու քաղաք, լեռանց ծայ-
րերը և անապատներու մէջ ապաստանեցաւ.
ով որ հաւատքին վրայ հաստատուն կը մնար,

անոր բաժինն էր՝ մահ, տանջանք և գերութիւն։ Շատ քիչերն եղան՝ որ ուրացան հաւատքնին և կեանքը ընտրեցին։ Բուզա շատերուն հաստատամութիւնը տեսնելով, դայրութէն կրակ կտրեցաւ և սկսաւ չարչարել, որոնք կարծես տանջանքներուն անդպայ, աչքերնին երկինք վերուցած կ'աղօթէին, և մէկ սիրտ մէկ հոգի եղած՝ հարիւր յիսունը միասին նահատակուեցան մէկ անդամով։ Այս մարտիրոսաց խմբին մէջ եօթը նշանաւոր անձինք կային, որոնց գլխաւորն էր Ատոմ Աղբակացին՝ Որսիրան զիւղէն։ Ասոնք այնչափ յաջողակ և ճարտար էին զէնք գործածելու մէջ և այնչափ կայտառ և վայելչահասակ, որ հաղարացի իշխանին սիրտը շարժեցին, որ ամէն հնարք ի գործ զրաւ, անթիւ խոստումներ և սպառնալիք՝ զիրենք որսալու համար. սակայն ի զուր. որովհետեւ կար ուրիշ մը, որ յաւիտենական փառքի ճանապարհը առջեւնին բացած՝ իրեն կը քաշէր անոնց սիրտը և միտքը։

Ապանալիքներու անմիջապէս յաջորդեց տանջանքը։ Հրապարակը Գողգոթայի պատկեր մ'եղաւ, երբ խաչերը կանգնուեցան և եօթը հայ նահատակները անոնց վրայ բարձրացան։ Ատոմ քաջալերեց ընկերները ըսե-

լով. «Յիշեցէք, եղբարք, անթառամ պատկաները՝ որ կը սպառեն մեզի երկինքը, և մի վախնաք ժամանակաւոր մահուընէ»։ Վերջը հետեւեալ եռանդուն աղօթքը ըրաւ խաչին վրայէն. «Յոյս իմ Փրկսառու, ընդունէ զիս և ընկերներս քեզի հաճոյական պատարագ, զոր կ'ընծայենք ի պատիւ փառաւոր անուանդ, և խառնէ զմեղ գոււ երջանիկ վկաներուդ թուին մէջ, որոնք քու սուրբ անուանդ համար չարչարուեցան»։ Եւ այսպէս աղօթքի և հոգեւոր օրհնութեանց մէջ աւանդեցին իրենց մաքուր հոգիները։ Շատ քիչերը կը յիշուին վկայաբանութեանց մէջ, որ այսպէս իրենց Փրկչին խաչակից ըլլալու բազզը ունեցած ըլլան։

*

Ասոնց նահատակութիւնէն քիչ օր ետքը ոստիկանին առջեւ բերուեցան երկու իշխաններ ալ, գերդ Ոկեացի և լուսրով Գարեղեղեան։ Ասոնց ուրացումը Բուզայի համար միայն կրօնական շահ մը պիտի շըլլար, այլ իր գործին յաջողութեան ձեռնոտու պիտի ունենար երկու քաջ և խմատուն իշխաններ. անոր համար խոստումները աւելի փայ-

լուն եղան այս անգամ, և սպառնալիքը աշելի խիստ։ Առկայն իշխանները արհամարձելով Բուզայի առաջարկը, վայրկեան մ'իսկ չդեղեւեցան իրենց ճշմարիտ դաւանանքէն, և քիչ ատենի մէջ ընդունեցան մարտիրոսասական պսակը 843 թուականին։

Այլազգի մը ականատես ըլլալով այս գեղեցիկ նահատակութեան, ամենուն առջեւ գոչեց բարձրածայն։ «Քրիստոնեայ եմ»։ և երբ ուրիշ քրիստոնեայներ կը յորդորէին դինքը լուել, նա աւելի եւս կը բարձրացնէր ձայնը և կը կրկնէր։ «Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ»։ Գրահիմները բարկանաւով՝ գարկին սրով և զլուխը կտրեցին։ Հասաւ գիշերը, և երեք նահատակները ծածկեցիր աստղագարդ պատանքով։

* * *

Այս Ատոմեանները երրորդ պիտի կոչէինք, եթէ Փարակեցոյ պատմածը և Առփերքի ՃՌհատորին մէջ նկարագրուածը՝ տարբեր անձնաւորութիւններ և դէպեհը ըլլային։ որուն հակառակը ցուցուած է Բազմավիպի 1899 սեպ. — 1900 մայիսի թիւերուն մէջ։

Այս երկրորդ Ատոմեանց յիշատակը տօ-

նելի սրբոց հետ կը կատարուէր Մեհեկան ամսոյն 25ին (մարտ 3), ինչպէս Կ'աւանդէ Յովհաննէս Զ կաթողիկոսը, որ պատմութեանս աղբիւրն է։ իսկ Թոովմա Արծրունին միայն վերջին երեք նահատակներուն պատմութիւնը կ'ընէ մանրամասն։ Ասովիկ՝ Ատոմեանց յիշատակը Մեհեկանի 27ին կը դնէ, որ է մարտ 5ին։ Բ Յայտմաւուրը մարտ 3ին կը դնէ Ատոմեանց, վերջին երեք նահատակաց և Ամբատ խոստովանողին տօները։ իսկ Դ Յայտմաւուրը, առանց Ատոմեանց վրայ խօսելու, ասլրիլ 21ին կը դնէ միայն Գէորգայ, Խոսրովու և այլազգի նահատակին յիշատակը։ իսկ աէր Իսրայէլ (ըստ Աւգերեանի) մայիս 2ին կը դնէ։

ԱՄԲՈՅՏ ԽՈՍՏՈՎՈՒՈՂ

Ե Խ Ի Բ Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ա Կ Ի Ց Ն Ե Բ Ը

Ամբատ Բազրատունիի անունը մեծ տեղ մը կը զրաւէ մեր պատմութեան մէջ, իրը քաջ և քաղաքագէտ իշխան, իրը հայր Աշոտ առաջինի՝ հիմնադրին Բազրատունեաց թագաւորութեան, և Խոստովանող անունով ճանչուած և մեծարուած։ Հոս պիտի չյիշենքիր

քաջութիւնները և կատարած մեծ դերը այնպիսի խառնաշփոթ ժամանակներու մէջ, երբ թշնամւոյն սուրը և կրակը աւեր կը դարձընէին մեր անդէն և անտէր աշխարհը. այդ՝ պատմութեան կը թողունք: Պիտի խօսինք հոս իր նահատակութեան մասին, թէ ինչպիսի արութիւն և հաստատամտութիւն ցոյց տուաւ իր հաւատքին մէջ, ոչ փառքերէն շլանալով և ոչ տանչանքներէն վախնալով, մինչեւ վերջը հաւատարիմ մնաց Քրիստոսի գրօշին, ցաւերու և շղթաներու մէջ աւանդելով հոգին:

Անհամար զօրքով հասեր էր Բուղա և տիւրած մեր երկրին ամրութիւններուն. բոլոր քաղաքները զարհուրած՝ գոներնին բացերէին անոր առջեւ:

Իշխաններէն ոմանք անձնատուր եղած, ուրիշները անասիկ բերգերու մէջ ամրացած, զոթորկին անցնելուն կը սպասէին, բայց անցնելիք չունէր: Այդ գժուարին ժամանակներուն՝ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսը վախճանեցաւ, և Սմբատ Բագրատունի սպարապետ՝ Զաքարիա անոնց անձ մը կաթողիկոս արքանաւոր վարձքը ընդունելու այնչափ արիւնչեղութեանց փոխարէն: Բուղայի ուզեկիցներուն մէջ միայն Սմբատն էր՝ որ ազատ էր շղթաներէ, և կ'երթար իրը իր հաւատարմութեան վարձքը ընդու-

գեւոր գլուխը, տեսաւ որ անկարելի էր զէնքով ու բանութեամբ քիմագրել արարացի ստիկանին, ինքնակամ Բուղայի մօտ գնաց, ուզելով զէթ քաղցրութեամբ ամոքել այն վայրադ սիրուը, որ արեան անյագ ծարաւը կը զգար: Բայց Սմբատ յոշկամս գործիք եղաւ Բուղայի ձեռքը: Արդէն մատնութեան մը զոհ եղած էր Սիւնեաց Վասակ իշխանը, անոր վրայ աւելցաւ Ստրներուն՝ Խաչենոյ իշխանը, որ մինչեւ այն ատեն իր քաջութեամբ Բուղայի ժանիքներէն ազատած, վերջապէս անոր թակարդին մէջ ընկաւ անզգուշութեամբ: Բուղա գեւ զոհ չէր՝ բաւական արիւն թափած չըլլալով, յարձակեցաւ Ուտի գաւառին վրայ, պաշարեց Գարդման բերդը, բոնեց տեղւոյն կտրիմ իշխանը և շղթաներով կապկաեց, և յետոյ անվախ տիրեց մնացած տեղերուն: Տուս աւանն ալ պաշարելով բոնեց Ստեփանոս կոն իշխանը, և ուրիշ բազմաթիւ գերիներով Դուին քաղաքը գնաց, անկէց ալ Բաղտատ՝ Զաքր ամիրապետէն իր արքանաւոր վարձքը ընդունելու՝ այնչափ արիւնչեղութեանց փոխարէն: Բուղայի ուզեկիցներուն մէջ միայն Սմբատն էր՝ որ ազատ էր շղթաներէ, և կ'երթար իրը իր հաւատարմութեան վարձքը ընդու-

նելու և յետոյ փառքով և ընծաներով հայրենիք դառնալու, ինչպէս կը յուսացնէր զի՞նքը Բուզա:

Սակայն Զափր՝ Ամբատայ յուսացածին հակառակը ըրաւ, զի՞նքն ալ կապել հրամայեց և միւսներուն հետ բանտ դրաւ:

Հազիւ քանի մ'օր անցած՝ բացուեցաւ վիայաբանական տեսարանը: Կապուած իշխանները տարուեցան ամիրապետին առջեւ, որ դաժան երեսով ասալարկեց անոնց՝ ուրացութիւն կամ մահ. «Եթէ թողուք հաւատքնիդ, ըստւ, փառքով ու պատուով ձեր աշխարհը կը դարձնեմ զձեզ. իսկ եթէ ոչ՝ զարհուրելի տանջանքներով պիտի սպաննեմ զամէնքդ ալ և երկիրնիդ անապատ պիտի դարձնեմ»: Քանի մ'օր կրնուեցաւ այս տեսարանը, մինչեւ որ իշխաններէն ումանք, իրենց երկրին և ընտանեաց կրելիք նեղութիւններէն զարհուրած և ուշաթափ, առժամն ուրացան իրենց հաւատքը, վերջը իրենց յանցանքը արցունքով և արեամբ քաւելու յուսով: Սակայն երեք մեծ իշխանները՝ Ամբատ, Ստեփանոս Կոն և Գրիգոր Մամիկոն, Աստուծոյ խնամոցը յանձնելով հայրենիքը՝ չուրացան դՔրիստոս: Ստեփանոս Կոն 855ին նահատակուեցաւ դառն տան-

ջանքներու մէջ: Իսկ Գրիգոր Մամիկոննեան, որ քաջ և անուանի ցեղին իշխաններուն վերջին ճիռն եղաւ, բանտէն կրցաւ փախչիլ և ապաստանիլ Գրգանածակ՝ կոչուած տեղը, ուր կը ճգնէր երբեմն Ա. Թաթուլ. և հոնինքն ալ ճգնաւորի մը պէս ապրելով, եօթը օրէն վախճաննեցաւ Խոստովանող անունը ժառանգելով: Ամիրապետը լսելով Գրիգորի փախչիլը, զրեց Ամբատայ որդւոյն Աշոտի՝ որ Գրիգորը բանէ և իրեն դրկէ. ան ալ մեռած գտնելով զլուխը միայն զրկեց:

Միայն Ամբատ մնաց տեսարանին վրայ, զոր չկրցան ազատել ո՛չ Աշոտ որդւոյն թախանձանքը և ոչ իր ըրած այնքան հաւատարիմ ծառայութիւնները: Շատերը, նոյն իսկ մեր իշխաններէն, Բուզայի հետ կը յորդորէին Ամբատը որ ուրանայ կրօնքը. բայց նա միշտ կը պատասխանէր. «Զեմ կրնար թողուկ կրօնքս և Քրիստոս, զոր աւազանին չնորհքով ընդունած եմ»: Ամիրապետը և Բուզայ յուսահատած՝ ուրիշ միջոց չգտան անորկամքը ճկելու՝ բայց տանջանք և մահ: Այն զարհուրելի օրերը՝ Ամբատայ համար ուրախութեան ժամեր եղան. նա կ'ուզէր ապրել միայն չարչարուելու և տանջուելու համար՝ որով պիտի բազմացնէր իր արդիւնքները:

Խոստովանողին մարմնէն արիւն կը հոսէր և
աչքերէն յորդ արցունք։ Այդ արցունքը և
արիւնը ոչ միայն քաւեցին անոր յանցանքա-
ները, եթէ ունէր, այլ և մարտիրոսական
պատկը կազմեցին անոր գլխուն շուրջը, եր-
կինքը՝ Վարդանանց դասակից ըլլալով, և
երկրիս վրայ՝ Խոստովանող անուանը անժա-
նանալով։

*
* *

Նահատակներուս պատմիչը Յովհաննէս
կաթողիկոսն է, որուն մանկութեան տտեն
կատարուեցան յիշուած գէպերը, և նոյնը
աղբիր եղած է Յայսմաւուրներուն – որոնք
Սմբատայ յիշատակը մարտ 2ին կը դնեն –
և յետաղայ պատմիչներուն։

ԱՇՈԾ Յ. ԲՈԳԻՄԱՏՈՒՆԻՒՄ

Նահատակութեան թուականը դեռ կը շա-
րունակուէր. Հայ աշխարհը պէտք կը զգար
մարդու մը, որ պարզէր իրեն փոթորկալից
երկինքը։ Այս անձն եղաւ Աշոտ Ս. Բագրա-
տունի, Սմբատ Խոստովանողի որդին, որուն
վրայ մեր ունեցած ծանօթութիւնները՝ քա-
ռաքական կեանքին հետ կը սկսին։

Երբ հայրը շղթայուած կը տանջուէր Պաղ-
տատի բանտերուն մէջ, Աշոտ՝ որ չորս հինգ
տարիէ ի վեր կ'իշխսէր Բագրատունեաց ցե-
ղին, Բուզայէն հրամանագիր մ'ընդունեցաւ
Գրիգոր Մամիկոնեանը սպաննելու, որ փա-
խեր՝ հայրենիք եկեր էր և բնական մահուամբ
մեռած էր։ Աշոտ, կտրել տալով անոր գլու-
խը, Պաղտատ դրկեց, հաւտացնելով Բու-
զայի թէ զիխատեց իշխանը՝ երբ Յունաս-
տան կը փախչէր։ Նոյնը պիտի ընէր Գրի-
գոր Մամիկոնեան ալ, եթէ կենդանի ըլ-
լար ու գիտնաք՝ թէ իր զիխոյն փոխարէն
Աշոտ թագ պիտի ընդունէր ամիրապետէն,
հայրենիքը հանգստութիւն պիտի գտնէր,
և ուրացող նախարարները պիտի զրկէին ի-
րենց ճշմարիտ կրօնքը։ Յիրաւի այս երեքն
ալ եղան։ Աշոտ 860 թուականին ամիրապե-
տէն իշխանաց իշխան կարգուեցաւ, տխուր
ձմրան տակ ապրող հայրենեաց գարունը
հասաւ, հալածանքները գաղրեցան, ողբերը
և կոծերը վերջ առին, և 862ին մեր վտա-
րանդի նախարարները իրենց բնիկ հողին
վրայ կոխեցին։

Աշոտի փառաւորութեանց համբաւը լսուե-
ցաւ մինչեւ հեռուները, ամէնքն ալ կը զար-
մանային անոր խելքին և քաջութեան վրայ։

Բայց մօտիկ օտարազգի իշխաններէն ոմանք,
Զահապ, Եմենիկ, Կայսիկ և ուրիշներ, կամ
նախանձէն կուրցած կամ աւարի աչք տըն-
կած, յարձակեցան Աշոտի սահմաններուն
վրայ. սակայն անոր զէնքին և արութեան առ-
ջեւ չդիմանալով՝ սախառւեցան խոնահիլ,
հարկատու ըլլալ, ընծաներով շահիլ Աշոտի
դառնացած սիրտը և ետ գառնալ: Անկէ վերջը
խաղաղութիւնը տիրեց՝ ուր որ կը հասնէր Աշո-
տի իշխանութիւնը. սէր և հաշտութիւն ըրին
նոյն իսկ հայ իշխանները, որոնք փառասէր
ձկուումներով զիրար կը բզբքաէին: Աշոտի
փառաւորութեանց և մեր ազգին երջանկու-
թեան ուրիշ բան չէր պակսեր՝ բայց միայն
արքունի թագը: Գէորգ կաթողիկոսը և նա-
խարարները միացան արժանաւոր փարձա-
տրութիւն մ'ընելու Աշոտի առաքինութեանց.
Յիսէ ստիկանին միջոցով խնդրեցին ամիրա-
պետէն՝ որ Աշոտը իրենց թագաւոր դնէ:
Յիսէ վերագարձաւ շքեղ թագով մը և ար-
քայական զգեստներով, և 885ին, աննման
փառաւորութեանց մէջ, ծիրանի հագուեցուց
և թագ դրաւ Աշոտի զլուխը, և կաթողիկո-
սը օծեց ցինքը: Յունաց կայսրը՝ Վասիլ Արշա-
կունին, որ կարծես մինչեւ այն ատեն իր ա-
րենակիցը պատուելու համար ապրած էր,

վասն զի քիչ վերջը մեռաւ, ուրախակցու-
թիւն յայտնեց՝ թագ մը և մեծագին զան-
ձեր զրկելով:

Աշոտ 889 թուականին իր իշխանութեան
սահմանները զննելէն ետքը՝ Պոլիս զնաց
լեռն իմաստաէրին, ինչպէս կը յիշէ՝ բաց
ի ուրիշներէն՝ նաև կոստ. Պերփեռումէն
կայսրը իր աշխարհազութեան մէջ, «մեծ
և տիտաննեան հայ, երկայնաձեռն և երկու
ձեռքով յաջողակ» կոչելով Աշոտը, որ Բիւ-
զանդիսոնի ամենէն ճոխ և փառաւոր հան-
գէններուն մասնակցելէն ետքը՝ շատ ընծանե-
րով իր երկիրը դարձաւ: Շիրակայ մօտ,
մահարեր հիւանդութիւն մը զինքը անկողին
ձգեց: Ճշմարիտ քրիստոնէի մը հաւաաքով
և եռանդեամբ ընդունելով վերջին Խորհուրդ-
ները՝ կնքեց իր արդիւնաւոր կեանքը, թա-
գաւորելու երկնքի մէջ ալ՝ բազմած երկու Սըմ-
բատներու — Խոստովանող հօրը և Նահատակ
որդուոյն — մէջտեղ: Աշոտ 71 տարեկան վախ-
ճանեցաւ, քսան և հինգ տարի իշխանական
գաւազանը՝ ձեռքը, և հինգ տարի թագը՝
զլուխը: Բոլոր պատմիչները ներբռող մը կը յօ-
րինեն՝ երբ անոր նկարագրին վրայ կը խօսին.
բաւական ըլլայ միայն ականատես Յովհան-
նէս կաթողիկոսին խօսքերը յիշել, որով կը

Ներկայացնէ մեզ Աշոտը «անձնեայ, թիկանաւէտ, մրայօն, արեան բիծ մ'աչքին մէջ, ինչպէս յակինթ մը մարգարտին մէջ... մհծ-իմաստ, քաղցրաբան և զգաստ» :

* *

Աշոտի յիշատակը՝ մայիս 28ին կը դնէ Դ Յայսմաւուրը, իսկ Բ՝ օր մը առաջ (27ին): Բ Յայսմաւուրը կը սիսալի կամ կը շփոթի անուանց նմանաձայնութենէն՝ երբ կը զրէ. «Սուլտանն Արդըլլա առաքեաց թագ նմա (Աշոտոյ) ի ձեռն Յուսփայ զօրավարին», մինչդեռ Յովհաննէս կաթողիկոս, Վարդան, Կիրակոս և ուրիշներ՝ ջիսէ կ'անուանեն, և Աշոտի թագ զրկողին համար կ'ըսէ կիրակոս թէ «յետ Զափրի առնու զթազն Մահմէտ և ապա Աչմատ, ապա Որդուս և ապա Միհմէտ, սա իշխանաց իշխան կացոյց զԱշոտ, և ապա թագ ետ նմա» : Ուրիշ քննելի կէտ մ'ալ Աշոտի մասին՝ իր իշխանութեան, թագաւորութեան և մահուան թուականն է, որուն հետ միացած են ժամանակակից կաթողիկոսներու և ուրիշ դեպքերու թուականները: Աշոտ, ընդհանուր պատմութեան համեմատ, Զաքարիա (854-876) և Գէորգ (876-897)

կաթողիկոսներու հետ վերաբերութիւն ունեցած է, ինչպէս նաև Փոտ պատրիարքին (858-867), Վասիլ կայսեր (867-886) և Լեւոն իմաստակիրի (886-891) հետ: Արդ, մեր բնիկ պատմիչներէն Ասողիկ և Վարդան կը զրեն, թէ Աշոտ 887ին թագաւորած է, որ է՝ Վասիլի մահուանէն տարի մը ետքը: Կիրակոսի հրատարակիչն ալ այսպէս ընդունելով, պատմըլին «Սա (Վասիլ) թագ առաքեաց Աշոտոյ ի վերայ իսմայելականին» խօսքերուն՝ հետեւեալ ժանօթութիւնը կը դնէ. «Յառաջ քան զթագաւորելն Աշոտոյ մեռեալ էր Վասիլ»: Բայց մենք՝ Հ. Զամշեանի հետեւելով Աշոտի թագաւորելը դըրինք 885 թուականին, ժամանակակից Յովհ. կաթողիկոսի համաձայնելու համար: Իսկ թէ Աշոտ ո՛րչափ տարի իշխեց, ազգային պատմիչները չեն միաբանիր իրարուհետ: Բայց մենք անոր ժամանակակից երկու պատմիչներուն (Յովհ. կաթ. և Թոովմ. Արծըրունի) խօսքերուն վրայ հիմնուած, հետեւեալ որոշ եղբակացութեան կը յանգինք. այսինքն, Աշոտ հինգ տարի իշխան եղաւ Բագրատունեաց ցեղին (855-60), քսան և հինգ տարի՝ իշխանաց իշխան բոլոր ազգին (860-85), և հինգ տարի ալ՝ թագաւոր (885-90):

ՄԱՇՏՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

Մաշտոց այն անձերէն է, որոնք թէ և ապագային մէջ անհշան պիտի տպրին, բայց հզօր աղղեցութիւն մը կը գործեն իրենց ժամանակին վրայ: Մաշտոցի ծննդավայրը եղաւ՝ Եղիվարդ գիւղը, իսկ հայրը՝ Գրիգոր անուամբ առաքինի քահանայ մը: Հօրը մահուանէն քանի մ'օր վիրջը (859ին) ձգեց աշխարհ, քսան և եօթը տարեկան հասակին, և առանձնացաւ Մաքենոցաց գանքին մէջ, ուր Թէոդորոս վարդապետէն սրբազնուանց մէջ հմտանալէն ետքը՝ քահանայ ձեռնաղբուեցաւ: Հոն տասնըմէկ տարի խիստ կեանք մ'անցուց . աղօթք, ճգնութիւն և ընթերցումն, — ասոնք էին անոր սովորական զբաղանքը: 872ին գնաց Սեւան կղզին, ուր վանահայր ընտրուեցաւ հակառակ իր բոլոր ջանքերուն և օտարներուն զրպարտութեանց: և այս դէպքը՝ հաւասարազօր է մեծներողի մը անոր անուրանալի առաքինութեան: Երկու տարի ետքը, 874 թուականին, հիմնեց Սեւանի մէջ Երկոտասան առաքելոց և Տիրուհոյ Առտուածածնի եկեղե-

ցիները, Աշոտ Ա, ի գոտեր Մարիամու խընդրանօք: Մաշտոց վանք մ'ալ չինեց, և հոն կրօնաւորներ ժողվելով՝ անոնց առջեւ դրաւ Ա. Բարսղի կանոնները ու հայր կրօնաւորաց կոչուեցաւ: Արաս, Աշոտ Ա, ի եղբայրը, 891 թուին գժտուելով Գէորգ Գառնեցի կաթողիկոսին հետ, Մաշտոցի ամբաստանագիր մը ուղղեց, խոստանալով զինքը կաթողիկոս գընել՝ թէ որ միաբանի գահընկէց ընելու Գէորգը: Արաս սիսալեցաւ, այս նամակը պէտք էր ուրիշ փառասէր Մաշտոցի մը ուղղել: Ճգնաւորին պատասխանը խիստ յանդիմանութիւն մ'եղաւ, արդարացնելով կաթողիկոսը:

894 թուականին սաստիկ գետնաշարժ մը Գուին քաղաքին մէջ անհամար չէնքեր ու կեանքեր կործանեց. Մաշտոց փութաց Սեւանէն գեղեցիկ մխիթարական թուղթ մը զրկելու, որ սպեղանի մ'եղաւ տխուր և վիրաւորեալ սրտերուն:

Տարիքէն և ճգնութիւններէն մաշած ու ծերացած ըլլալով Մաշտոց, օրէ օր մահուան կը սպասէր, երբ յանկարծ եպիսկոպոսները և քահանայք շուրջը կը ժողվին և կ'ուզեն բազմեցնել զինքը Լուսաւորչի աթոռին վրայ: Մաշտոց, ինչպէս կը վայլէր սուրբ և առա-

քինի անձի մը, հրաժարեցաւ այն բարձր պատիւէն, բայց ի դուրս : Դուին տարին զինշը 898ին և կաթողիկոս օծեցին . բայց հազիւ վեց ամիս միայն կաթողիկոսութիւն ընկէն վերջը, իր մեծ անուանակցին պէս, բոլոր աղջը սուրգի մէջ ձգեց իր մահուամբը : Հոգին՝ երկինք թռւաւ ճգնաւորներու դասին մէջ թիւ մ'աւելցնելու, իսկ մարմինը՝ Գէորգ Գառնեցի կաթողիկոսին քով հանգչեցաւ «Տրդատայ հրաշալի թաղտին մօտ, կ'ըսէ Կիրակոս, որուն վրայ վայելուչ եկեղեցի մը շինեցին» :

* *

Մաշտոցի կենսագիրն է իր աշակերտը և յաջորդը Յովհ. Զ. կաթողիկոսը և միւս աշակերտը Ստեփանոս, որ 894ին Սեւանայ մէջ Մաշտոց գերք մը օրինակեց, և յիշատակարանին մէջ իր վարդապետին վարքը զրելով, հետևեալ տեղեկութիւնները կու տայ. «Յայսմ ամի (894), յորում կարդեցի զսակաւաւոր զրումս, էր ամք կենաց նորա (Մաշտոցի) սակաւ ինչ քան զվաթսուն ամ. իսկ որ մեկնեալ էր ի կերակրոց և ի բոլոր իսկ հեշտութեանց մարմնոյ՝ երեսուն և երեք ամք.

և ի շինութենէ տեղւողս քսան և երկու ամք» : Ստեփանոս ուրիշ տեղեկութիւն մ'ալ կու տայ մեզի, այն է՝ թէ Մաշտոց շինած է ոչ երկու եկեղեցի միայն (ըստ Օրպելեանի), այլ երրորդ մ'ալ՝ Ս. Ստեփանոս անուամբ : Մաշտոց՝ հայ մատենագրութեան մէջ ալ իր տեղը ունի՝ թուղթերով և զանազան զրուածներով, որ մասամբ երկրայական են : Մէկ թուղթը, ինչպէս կ'աւանդէ Յովհ. կաթողիկոս, անոնց հակառակ էր՝ որոնք Քաղկեդոնի և Շիրակավանու (Զաքարիա կաթողիկոսին ու ըով եղած) ժողովքներուն դէմ կը խօսէին : Ուրիշ թուղթ մ'ալ, ինչպէս կ'աւանդէ Ստ. Օրպելեան, Գէորգ կաթողիկոսին խնդրանօք զրած է, խաղաղելու համար այն խռովութիւնը, որ յուղուած էր Յունաց, Վրաց և Աղուանից մէջ հաւատաքի խնդիրներու համար . այս երկու թուղթերն ալ մեր ձեռքը չեն հասած : Առ Դունեցիս և առ Արաս զրած թուղթերը՝ Յովհ. կաթողիկոսին պատմութեան մէջ կը դտնուին :

ՍՄԲԱՏ Ա. ՆԱՀԱՏԱԿ

Սմբատ՝ Աշոտ Ամ որդին և Սմբատ Խոստովանողի թռոն էր։ Թագաժառաւանդ և հօռը ոգնական ըլլալով՝ փոքրարքայ կը կոչուէր։ Անոր առաջին գործը որ կը յիշատակուի՝ ապստամբ Գուգարմերու վրայ լրած յաղթութիւնն է, 888 թուականին։ Երբ Շամշատէ բերդին մէջ կը հանգչէր իր զօրքերով, լսեց հօրը մահը և դէպ ի Շիրակ փութաց։ Իրեն ընդառաջ ելաւ Գէորգ կաթողիկոսը, մխիթարեց և 890ին զինքը թագաւոր օծեց։ Հակառակ իր Աքաս հօրեղբօր ջանքերուն, որ Կարսի մէջ թագաւորել կ'ուզէր, իր թագաւորութիւնը հետզհետէ կը զօրանար։ Սմբատ տարի մը ետքը խնդրեց ամիրապետէն՝ որ իր թագաւորութիւնը հաստատէ։ նա ալ Ափշինի ձեռքով իրեն թագմը զրկեց։ Հրամայեց Սմբատ որ բոլոր իշխանները և եպիսկոպոսները իր շինած Ա. Փրկիլ եկեղեցւոյն մէջ ժողվին, և հոն Գէորգ զինքը կրկին օծելով՝ թափօրով արքունիքը տարին։ Յունաց կայսրը՝ Լեւոն Հայկազն ալ (886-911) փութաց պատուել իրեն ազգա-

կից թագաւորը, և թանկագին գանձերու հետ զրկեց թագաւորական ծիրանի, զինքը սիրելի որդի անուանելով։ Սմբատայ Յունաց հետ հաստատած սէրը կատղեցուց Ափշինը, բայց նա կրցաւ ոստիկանին զայրութը իջեցնել, խոստանալով այդ բարեկամութեան ձեռքով վաճառականութիւնը ծաղկեցնել և յունական հարստութիւնները Արաբացւոց անցընել։ Մինչդեռ Ափշին ընծաներով իր սէրը կը հաստատէր, Դուին քաղաքին արաբացի իշխանը ապստամբեցուց չայերը թագաւորին գէմ, և գոները փակեց Սմբատայ առջեւ։ Սմբատ զայրացած՝ արուարձանը այրեց, քաղաքն ալ սովի բռնեց։ Իշխանը և իր որդին փորձեցին գիշերը ծածուկ փախչիլ՝ բայց բանուեցան, և Դուին ալ խոնարհեցաւ Սմբատայ առջեւ։

Ուրիշ յաղթանակ մ'ալ Ափշինի վրայ տարւ, որ առանց պատերազմ՝ հրատարակելու յարձակեցաւ Սմբատայ վրայ։ Պատերազմը սկսաւ, գաշտը թշնամեաց գիտակներով ծածկուեցաւ, և Ափշին ստիպուեցաւ հաշտութիւննդրել։

Ներքին երկպառակութիւններն ալ պակասչէին. ամէն նշանաւոր ցեղ կ'ուզէր իրեն թագաւորը ունենալ։ Այսպէս Սիւնեաց և

Արծրունեաց իշխանները, ոխերիմ մրցակիցներ իրարու, գլուխ քաշելով Ամբատէն՝ արարացի սստիկաններուն օգնութեամբ իրենք զիրենք թագաւոր հռչակեցին : Այս շփոթութեանց մէջ կը ծփար աշխարհը, երբ 896ին հարկ եղաւ որ Միջազետաց Ահմատ սստիկանին դէմ պատերազմի երթայ Սըմբատ՝ հայ իշխաններով և վաթուն հաղար զօրաց բանակով . և թէպէտ Գագիկ Արծրունին մատնեց Ահմատին Հայոց բանակը, բայց նորէն Ամբատ յաղթական վերադարձաւ :

Երրորդ անգամ մ'ալ զրգուեցաւ Ափշին և ստուար բանակով մը պաշարեց Կարսի անառիկ բերդը, ուր Ամբատայ նախահոգութեամբ պատսպարտաւծ էին թագուհին և նախարարներուն կանայք . Ափշին տիրեց բերդին երգում ընելով վնաս չհասցնել . բայց թագուհին և ուրիշ մի քանի իշխանուհիներ իրեն քով պահեց : Ամբատ, որ Կաղզուան կը գտնուէր այն ատեն, շատ տրտմեցաւ այս գուժը առնելով . բայց նոյն տարւոյն մէջ Ափշին արձակեց Ամբատայ կինը և միւս նախարարներուն կանայքը :

Հասաւ Հայոց սիրուն գարունը, բնութիւնը զուարթացաւ, դաշտերը և բլուրները ծաղիկներով զարդարուեցան, և ահա փոթորկա-

լից ամպի նման եկաւ Յուսուփի, մեծ բանակով մը Ամբատայ սահմաններուն մէջ մըտաւ, մեր երկիրը աւեր ու մոխիր դարձնելու մտքով հետը բերելով նաև Յովհաննէս կաթողիկոսը՝ շլթաներով կապուած : Յարձակումը Սիւնեաց գաւառէն սկսաւ 909 թուականին : Ամբատ աճապարեց՝ պատերազմի պատրաստուեցաւ, Նիգ գաւառին մէջ երկու բանակները զիմացէ զիմաց ճպկատեցան : Յուսուփի առաջին անգամ չուարեցաւ, տեսնելով թըշնամեաց բազմութիւնը . բայց երբ Ամբատայ զօրքերուն մէկ մասը վախով, ուրիշներն ալ նենգութեամբ ձգեցին փախան, սիրու առաւ Յուսուփի և ինքը տարաւ յաղթանակը :

Ոստիկանը միայնակ տիրելու համար, գնաց պաշարեց Ամբատ թագաւորը՝ որ կապոյտ կոչուած անառիկ բերդին մէջ ամբացեր էր : Յուսուփի զօրքերը չարաչար կոտորեցան բերդին մէջ եղած հայերուն հարուածներէն . խորամանգ ստիկանը տեսնելով թէ իր զօրքը անխնայ կը չարգուի, ըստաւ իր հապատակ հայ զօրքերուն . — « Տեսէք, ինչ քաջութեամբ կը կռուին ձեր աղգակիցները . առաջ անցէք և անոնցմէ քաջագոյն զըտնուեցէք » : Ասոնք ալ սկսան գետին թաւալիլ ամրոցէն ելած հարուածներէն : Յուսուփէ-

ցաւ Ամբատ՝ տեսնելով իր արենակիցներուն
մահը թշնամեաց բանակին մէջ. որոշեց անձ-
նատուր ըլլալ՝ զանոնք ազատելու համար :
Հայերը Յուսուփէն երդում առին, որ իրենց
և թագաւորին կեանքին չի դպչի, եթէ անձ-
նատուր ըլլան. ոստիկանը երդուընցաւ, և
միայն առաջին օրերը հաւատարիմ գտնուե-
ցաւ երդման, բայց յարմար առթի մը կը
սպասէր Ամբատը սպաննելու : Գուշակելով
զայս թագաւորը՝ խնդրեց Յուսուփէն զրո-
սանքի համար Շիրակ երթալ. բայց քանի
մ'օր ետքը ետ կանչուեցաւ Ամբատ և ու-
րիշ գերիներու հետ Գուին տարուեցաւ :
Յուսուփ՝ պալատի տեղ զնտանին գոները
բացաւ Ամբատայ առջեւ, միայն ումազ մը
չուր և պատառ մը չոր հաց տալով ամէն օր,
և ամէն տեսակ տանջանք և չարշարանք տա-
լով՝ որ հաւատքը ուրանայ : Օր մը բանտին
մէջ կ'աղօթէր Ամբատ, ուրախ իր տանջանք-
ներուն համար, երբ անձանօթ մը ներս մը-
տաւ և երկար ժամանակ իրեն հետ գաղա-
նի խօսեցաւ. ծպտեալ քահանայ մ'էր՝ որ
զինքը խօստովանցուց և հաղորդեց : Ամբողջ
տարի մը այսպէս տանջելէն վերջը, Յուսուփ
հրամայեց զինքը հրապարակ բերել. խուռն
բազմութիւնը լեցուեր էր արդէն արդար թա-

գաւորի .մը ողորմ մահը դիտելու համար :
Հաղիւ նեղ ճամբայ մը կը բանային, ուսկից
կ'անցնէր Ամբատ տասը դահիճներու հետ :
Գահիճները՝ Ամբատայ արցունքով թըր-
ջուած թաշկինակը բերանը դրին և բռնու-
թեամբ ներս մղեցին զայն. ծանր բեռներ
դրին անոր զլիուն վրայ, նախատեցին և
տանջեցին զինքը ամէն կերպով: Յետոյ գըլ-
խատեցին Գլկին, ու մարմինը խաչի վրայ կա-
խեցին՝ ծայրայեղ ատելութեամբ գրգռուած :
Բայց Յատուած փառաւորեց իր վկան. ինչպէս
Յովէ. կաթողիկոս ականատես անձերէ լած-
է, Ամբատայ մարմնոյն վրայ լոյս ծագե-
ցաւ, և շատ հեթանոսներ դարձան քրիստո-
նեայ եղան, տեսնելով որ նահատակին ա-
րիւնով ներկուած հողը տկարները և ախտա-
ժէտները կը բժշկէր: Քանի մ'օր առաջ Մու-
շեղ արքայորդին ալ նոյն բռնաւորէն թու-
նաւորուած ըլլալով, հայր և որդի Բագա-
րան բերուեցան և հոն թաղուեցան :

* *

Ամբատայ նահատակութեան ականատես
պատմիչն է Յովէ. կաթողիկոսը, որ նոյն-
պէս ժամանակին բռնաւորէն շատ նեղու-

թիւններ կըած է : Այս պատմիչը թողմա Արծրունի՝ Ամբատայ նահատակութեան բնաւակնակութիւն մ'իսկ չըներ, և միայն Ահմատի գէմ ըրած պատերազմը կը յիշէ : Ասողիկ (էջ 147-52) կը գրէ թէ՝ Ամբատայ օրով Հայաստանը խաղաղ էր, և թէ անիկայ շինեց Եիրակայ մէջ Ամենափրկիչ եկեղեցին : Իսկ Վարդան (էջ 87) կը գրէ . «Պատուական թագաւորն Ամբատ ի Յուսուփայ ոստիկանէն խեղդամահ լեալ ի Գուշին վասն Քրիստոսի, նշաւակի ի փայտի» :

Ամբատայ հայրը Աշոտ, ինչպէս ըսինք, վախճաննեցաւ 890 թուականին, որուն կը համաձայնին մեր բոլոր պատմիչները բաց ի Յովհաննէս կաթողիկոսէն, որով 24 տարի թագաւորած կ'ըլլայ : Սակայն Յովհ. կաթողիկոս 22 տարի կու տայ, 892էն հաշուելով, երր Ամբատ հաւատուեցաւ Արատայ հետ և Ավշինի միջնորդութեամբ Ճափար ամիրապետէն թագ ընդունելով հանդիսապէս կրկին օծուեցաւ :

Յ Յայսմաւուրը ասոր յիշատակը ապրել 16ին կը դնէ, անոր հետ նաեւ երկու Գընունիներու և Աիքայէլի յիշատակը . մինչդեռ Դ Յայսմաւուրը վերիններուն յիշատակը մայիս 27ին կը դնէ, իսկ Ամբատայ՝ մայիս 4ին :

ԳՐԻՐԳԷՆ ԵՒ ԳԱԼԻՒԹ ԳՆՈՒԿԻՓ

ԵՒ ՄԻՔԱՅԷԼ,

Բազմաթիւ գերիներուն մէջ, զորոնք Յուսուփին տարաւ հաւատքնին ուրանալտալու համար, կը գտնուէին երկու Գնունի եղբայրներ, Գաւիթ և Գուրգէն : Յուսուփի շատերը նահատակելէն վերջը, առջեւը կանչեց երկու Գնունի պատանի իշխանները, որոնց առոյգ հասակը ի գութ շարժեց րոնաւորը : Ոսկեհուռ զգեստներ, ծիրանիներ, սրբնթաց նժոյգներ, և ինչ որ երիտասարդի մը սիրտը կրնան զրաւել, նոյն իսկ իր տէրութեան կէսը, անոնց առջեւ զրաւ Յուսուփի, և փոխարէն ուրիշ բան չէր ուզեր՝ բայց միայն ուրանան հաւատքնին :

Այս շլացնող առարկայները՝ քրիստոնեայ աշքերու արհամարհու նայուածքին միայն արժանացան . Գնունիները ուրիշ պատակներու հիւսուփիը կ'երեւակայէին մտքով, և բըռնաւորին ամէն խոստումին և սպանալիքնե-

բուն պատասխանը կ'ըլլար, «Քրիստոնեայ ենք» : — «Գթացեք ձեր ընտանեաց, ձեր առոյգ հասակին, ընդունեցէք կրօնքս», կը կրկնէր Յուսուփի . — «Քրիստոնեայ ենք» կը պատասխանէին միշտ պատանի իշխանները : Բոնաւորը յուսահատած՝ հրամայեց զլիատել զիրենք հրապարակին մէջ բազմութեան առջեւ :

Որտաշարժ տեսարան մ'էր՝ որ բացուեցաւ դիտող խառնաղանձին . Դաւիթ դահիճին առջեւ ծունդ դրաւ խնդիրը մ'ընելու : Ճպիտ մ'երեւաց անհաւատաներու գէմքին վրայ, մինչ Հայերը պազած մնացին, կարծելով թէ Դաւիթ պիտի ուրանայ հաւատքը . փոքրիկ Գուրգէնն ալ ափշած՝ նայեցաւ եղբօրը թէ ինչ կ'ընէ : Այն ատեն Դաւիթ խնդրեց գահիճներէն որ նախ Գուրգէնը նահատակին, որ չըլրայ թէ հաւատքը ուրանայ իր մահը տեսնելով, և յետոյ եղբօրը գառնալով ըստաւ . «Եղբայր սիրելի, նախ գուն ընծայուէ Քրիստոսի, զոհ մը ըլլալով անոր՝ որ մեռաւ մեղի համար» : Գուրգէն վազեց դէպ ի սուրը, և զըլուխը ընկաւ նոռան պէս . բայց շրթունքը դեռ կը թրթուր և սիրուը կը բարախէր Յիսուս անունով :

Դահիճը դարձաւ Դաւիթին և ըստաւ . «Ան-

շուշտ եղբօրդ ողորմ մահը համազեց զքեզ ուրանալ հաւատքդ» . — «Մօտեցուր սուրը, մօտեցուր, ըստ Դաւիթ, կ'ուզեմ փութալ զինքը պսակուած տեսնել երկնքի մէջ» ... և ընկաւ եղբօրը մօտ 917 թուին :

Պատմութիւնը այս նահատակներուս հետ կը յիշատակէ նաեւ Միքայէլ դիւցաղ մ'ալ, Գուզարաց աշխարհէն, որուն յիշատակը այս Գնունիներուն հետ կը կատարուէր մայիս 27ին :

Ցուսուփի առջեւ անհամար հայ գերիներ բերուեցան, որոնք ոստիկանին ո՛չ խստացած փառքերէն վացան և ո՛չ տանջանքներէն վախցան, երբ նա կը ստիպէր զիրենք ուրանալ հաւատքնին : Այս անգամ բըռնաւորը նոր կերպով մը մտածեց նահատակել, քրիստոնեայները . հրամայեց զինուորներուն բոլորակ մը կազմել գերիներուն շուրջը և անխնայ զամէնքը ջարդել : Այս բոլորակին մէջ էր Միքայէլն ալ, տասներեօթը տարեկան պատանի մը, «զուարթատեսիլ և գեղեցիկ երեսօք» : Զինուորներուն աշքը անոր վրայ յառեցաւ, և խկոյն բոլորակին դուրս հանեցին, յուսալով թերեւս անուշ խօսքերով ուրանալ տալ հաւատքը : Պատանին բաժնուած տեսնելով ինք

զինքը նահատակներու խումբէն՝ տիրեցաւ,
և արցունքու աշքերը երկինք բարձրացնե-
լով՝ Փրիստոսի օգնութիւնը խնդրեց, և վա-
գեց բողոքակին ներսը՝ սուրին տակ ինկաւ։

* *

Այս նահատակները Յովհ. Զ. կաթողի-
կոոին օրով կատարուեցան։ Կաթողիկոսը,
յետ պատմելու ասոնց դիւցազնական մահը,
կ'աւելցնէ։ «Այսպէս ամենեքեան սոքա
սուրբք որ առ ի յինէն պատմեցան, յիրաւի
տարեւորական տօնախմբութեամբ պատուին
միշտ յեկեղեցիս օրբոց։ օր յիշատակի սոցա
սահմանեալ մարերի ամսոյ, որ օր 27», այն
է՝ յունիսի 3ին։ Սակայն Ասողիկ, որ իր
առջեւ ունէր Յովհաննու պատմութիւնը,
ասոնց յիշատակը նոյեմբեր 20ին կը դնէ։
իսկ Վարդան պատմիչ ու Դ Յայսմաւուրը
«ի 20 մարերի» (մայիս 27ին) կը դնեն։

→ զ. զ. →

ԱՇՈՏ Գ ՈՂՈՐՄԱՆ

Աշոտ Ողորմած՝ Աբաս թագաւորին որդին
էր և Ամբատ նահատակին թոռը։ Իր հօր
մահուան լուրը (951ին) պատերազմի և աս-
պատակութեան հրաւէր մ'եղաւ թշնամինե-
րուն, որոնց դէմ ելաւ Աշոտ երկու հազար
հոգւով Շիրակի մօտերը և քաջարար վանեց
զանոնք։ Յարձակումները մեղմացան կամաց
կամաց, և քանի մը տարի ետքը Աշոտ ութ-
ուն հազար զօրքերու կը հրամայէր։ Ինը
տարի վերջը (961ին), նախարարները հիա-
ցած Աշոտի քաջութեան և իմաստութեան
վրայ, Անանիա կաթողիկոսէն խնդրեցին որ
թագաւոր օծէ Աշոտը։ Աննման շքեղութեամբ
կատարուեցաւ օժման հանդէսը Անիի մէջ, —
ուր զրուեցաւ առաջին անգամ թագաւորա-
կան գահը, — ի ներկայութեան Աղուանից
Փիլիպոս թագաւորին և Յովհաննէս կա-
թողիկոսին։

Համտուն անունով արար զօրավար մը
ապստամբելով ամիրապետէն՝ Աշոտի վրայ
եկաւ և հարկ պահանջեց։ Աշոտ մերժեց հար-
կապահանջները, Համտունի վրայ վաղեց

զօրքով, յաղթեց և բռնեց սպաննեց ապըստամբը։ Ամիրապետը՝ Աշոտի քաջութեան փոխարէն՝ թագ և շատ պարզեւներ զրկեց, և հաստատեց զինքը թագաւորութեան մէջ։ Շահնշահ անունը տալով։

Խաղաղ տարիներուն մէջ՝ որ յաջորդեցին, Աշոտ բազմաթիւ շինութիւններ ըրաւ, Անի բերդը ընդարձակեց և մայրաքաղաք ըստաւ, պարիսպները նորոգեց և ամէն մէկ բուրդին մէջ մատուռ մը շինեց. նոյնպէս հիւանդանոցներ և աղքատանոցներ կառոյց և առատ թոշակ կապեց անսնց։ «Իր խոհեմութեամբ և ողորմածութեամբ, կըսէ ժամանակակից պատմիչը Ասողիկ, գերազանցեց քան զամէնը. վասն զի բորսոները, կաղերը, կոյրերը իրեն քով ժողվելով՝ զոմանս իշխան, ուրիշները իշխանաց իշխան կամ կիւրապաղատ կոչելով կ'ուրախանար։ Աւելի կը փափաքէր կարմիր քոսերը և վիրաւորները իր աշքին առջեւ ունենալ, քան թագաւորական ծիրանիները և փայլուն զարդերը. իր բաժակը թագաւորական ըմզելիով անոնց կը նուիրէր. . . . Այնչափ առատաձեռն էր, որ ինչքը աղքատաց բաժնելով՝ մահուան ատեն գանձատան մէջ դրամ չէր մնացած»։

969 թուականին, կաթողիկոսական աթու-

ռին շուրջը մեծ շփոթութիւն մ'ելաւ. ոմանք կ'ուզէին գահընկէց լնել Վահանը, որ օրինաւոր կաթողիկոսն էր, կրօնական խնդիրներու մէջ Յունաց և Վրաց հետ միաբանելուն համար։ Աշոտ այս խռովութեանց առջեւն առնելու համար, հրամայեց ժողով գումարել՝ որ խաղալին յուղուած ոգիները. բայց ի զուր. երկու հակառակ կողմերն ալ պինդ մնացին իրենց կարծիքներուն վրայ, մինչեւ որ ժամանակը կարգադրեց ամէն բան։ Նոյն ժամանակները՝ (973ին) Յովհաննէս Զմշկիկ հայազգի կայսրը պատերազմի գացած ըլլարով Տիգրանակերտի կողմերը բնակող այլազգիներուն գէմ, որոնք իր բանակին վնաս հասուցած էին, Յոյները զըրգաեցին կայսրը՝ որ Պարսից բաժնին մէջ բնակող Հայերէն ալ վրէժ խնդրէ։ Կայսրը գիւրահաւան գտնուեցաւ անոնց խորհրդին, և երբ կը պատրաստուէր վրէժ խնդրելու, մեր Աշոտ թագաւորը փութաց նուիրակներով և ընծաներով կայսեր սիրտը տոնուլ, և այսպէս իրարու հետ սէր և խաղաղութիւն հաստատեցին երկու համազգի միապետաները։

Աշոտ քսանելիինդ տարի թագաւորեց. իր օրով զրեթէ պատերազմ և արիւնչեղութիւն շեղաւ հայ հողին վրայ։ Հայր մ'եղաւ բոլոր

ազգին, մանաւանդ աղքատներուն և թշուառներուն, որոնց ցաւերը սփոփեց և արցունքը սրբեց իր գորովոս սրտով և արքայավայել տուրքերով: Իրեն թագին հետ՝ խոնարհ սիրտ մ'ունէր. ծիրանիին տակ՝ խարազ կը հազնէր. ճգնաւորի մը չափ ժուժկալ կերակուրներու և քունի մէջ, իր առաքինութիւններով գարմանալի եղաւ նոյն իսկ եկեղեցականներու, և պատմութիւնը Ողորմած անունը յատկացուց իրեն: Արդարներուն քունը ննջեց 977 թուականին, և երկինք գնաց խառնուելու Տրդատներու և Թէոդոսներու դասին մէջ:

*

Ինչպէս որ Յայսմաւուրները զանց չեն ըներ խօսիլ Աշոաի տիկնոջ Խոսրովանոյշի վրայ, որ իր առաքինի վարքով և բարի գործերով փայլեցաւ, այսպէս մենք ալ չենք ուզեր անցնիլ՝ առանց յիշատակութիւն մ'ընկերու իրեն:

Խոսրովանոյշ՝ իրեն օրինակ առած էր Աշոտը, անոր նման ինքն ալ սաստիկ գութ և գորով ունէր աղքատաց և հիւանդներու վրայ, և անոնց ամէն պէտքերուն կը հաս-

նէր: Հոյակապ եկեղեցիներ կանգնեց, և 961 թուականին սկսաւ հիմնել Ամահին և Հաղբատ վանքերը, իրարմէ մէկ ժամ հեռաւորութեամբ. ասոնք յետոյ աղդային հըսչակաւոր վանքեր եղան, առաքինի և գիտնական վարդապետներ հասցնելով, և թագուհւոյն անունն ալ հոչակուեցաւ և անմահացաւ. այս վանքերուն անուանյ հետ: Խոսրովանոյշ Աշոտի մահուան վրայ երեք տարի ալ ապրեցաւ, և աշխարհի վրայ անթիւ երախտապարտ անձեր թողլով, կնքեց իր մահկանացուն 980 թուականին:

Աշոտ, — զոր Հ. Ամիշան Գաղղիոյ Ա. Լուդովիկոսի հետ կը համեմատէ, ինչպէս Խոսրովանոյշն ալ՝ Հունգարիոյ Ա. Եղիսաբեթին հետ, — կը հանդի՛ Անի քաղաքին աւերակներուն մէջ, Ա. Գէորգ եկեղեցւոյ մէկ անկիւնը, Աշոտ բագաւոր Հայոց տապանազրով. անոր զլիսուն վերեւ կը բարձրանայ ուրիշ դամբան մ'ալ, «թերեւս զուգակցի նորին Խոսրովանոյշ դշխոյի» (Շիրակ 30-4):

Իր վարուց աղբիւրներն են Դ Յայսմաւուրը, Ասողիկ, Ուռհայեցի, Վարդան և

այլք : Ըստ Վարդանայ՝ Աշոտ թագաւորեց Ն
թուին (— 951), մեռաւ Նիեթուին (— 976),
համաձայն Ասողիկի և Ուսհայեցւոյ, որով
քանըհինդ տարի թագաւորած կ'ըլլայ :

Հակառակ բոլոր պատմիչներուն, Կիրա-
կոս՝ Հազրատ և Սանահին վանքերուն
շինութիւնը յոյն կրօնաւորներու կ'ընծայէ,
իսկ Թովմ. Վանանդեցի՝ Արասայ՝ Բայց
անշուշտ կը սխալին. որովհետեւ Ամեսն,
որ Սանահին վանքին առաջին վանահայր ե-
պիսկոպոսին աշակերտն է, Աշոտ Ողորմածի
տիկնող Խոսրովանոյշի կ'ընծայէ վանքին
շինութիւնը, Ս. Բարաղի ճառերու յիշտա-
կարանին մէջ, զոր կը ճանչնայ նաեւ Ասո-
ղիկ : Ըստ Վարդանայ՝ Սանահինի Ս. Ա-
տուածինը, — թերեւո Ս. Աստուածա-
ծին եկեղեցին միայն, — յոյն կրօնաւորներէ
շինուած էր :

Ս. Նիկոն

Սուրբ Նիկոն, Վարդապետ ապաշխարու-
թեան կոչուած, տասներորդ դարուն սկիզբը
ծնաւ Պոնտոսի մէջ, հայազգի ազնուական
ընտանիքէ մը : Դեռ պատանի էր՝ երբ դադ-

տուկ թողուց հայրենի տունը և զնաց Ու-
կերար ըսուած վանքին մէջ փակուեցաւ, ուր
տասներկու տարի մնաց : Մեծաւորները տես-
նելով անոր եւանդուն հոգին և աստուա-
ծային բաներու հմտութիւնը, յանձնեցին
իրեն որ երթայ Աստուծոյ խօսքը քարոզէ
ժողովրդեան : Այնպիսի յաջողութեամբ կա-
տարեց իր պաշտօնը, որ անկարելի էր խո-
րապէս չզգացուիլ՝ երբ երկնային բաներու
վրայ կը խօսէր : Յետոյ քարոզութեան զըր-
կուեցաւ իր բնիկ հայ աշխարհին խորերը,
ուսկից կրետէ կղզին անցաւ, որ այն ատեն
Սարակինուներու ձեռքն էր : Իր բոլոր քա-
րոզները ընդհանրապէս Յովհաննու Մկրտչի
պէս «Ապաշխարեցէք»ով սկսելուն համար
անունն ալ մնաց Ապաշխարեցէք (Métanoïte)
կամ Վարդապետ ապաշխարութեան : Այն
օծութիւնը՝ որով կը բացատրէր Աւետարա-
նին առածները, սիրելի կ'ընէր զանոնք նոյն
իսկ այլակրօններուն, որոնք կը վագեին ա-
խորժով մտիկ ընելու անոր քարոզներուն,
և անոնցմէ շատերը կը դառնային քրիստո-
նեայ կ'ըլլային, ինչպէս նաև բազմաթիւ մե-
ջաւորներ Աստուծոյ ճամբրուն մէջ եկան :

Քսան տարւոյ շափ այն կղզին մէջ բնա-
կելէն վերջը, զոր գրեթէ բոլորովին կերպա-

րանափոխ ըրաւ, անցաւ Պեղոպոնէս, Աքար-
յիս և Եպիւռոս գաւառները, ուր մեծամեծ
արդիւնքներ առաջ բերաւ իր քարոզութեամ-
բը։ Մեռաւ Պեղոպոնէսի վանքի մը մէջ
998 տարւոյն։ Ս. Նիկոն թողոցած է ձաս
ի վերայ կրօնի Հայոց և քանի մը ուրիշ ձա-
ռեր, որոնք գեռ ձեռագիր կը պահուին Պա-
րիզու ազգային գրատան մէջ։ (Migne, Հատ.
ԽԱ. մա. Բ.)։

* *

Ս. Նիկոնի վրաուց առաջին աղբիւրն է
յոյն Յայսմաւուր մը, զոր լատիներէն թարգ-
մանեց Յակոր Սիրմոնդոս Յիսուսեանը. Բա-
րոնիսս ասկէց կ'առնու, երբ կը խօսի Ս.
Նիկոնի վրայ իր Տարեգիրմերուն Ժ Հատո-
րին մէջ։ Այս բոլոր յիշուած հեղինակները
հայ կը ճանչնան զՍ. Նիկոն. Մալաքիա-
դպիրն ալ իր կաթողիկոսաց ցանկին մէջ,
Սարգիս Ա.ի վրայ խօսելով, Ս. Մակար
և Ս. Սիմէոն հայկազուններուն հետ կը
յիշէ նաեւ Ս. Նիկոնը. «Ասոր կաթողիկո-
սութեան ատեն, կ'ըսէ պատմիչը, փայլեցան
երեք կրօնաւորներ, Նիկոն՝ որ զնաց Կրետէ
կղզին և զայն պայծառացուց, և այլն»։ Յոյ-

ները կը տօնեն Ս. Նիկոնը նոյեմբեր 26ին,
նոյնակն լատինք նոյն օրը կը յիշատակեն
անոր վկայաբանութեան մէջ։

Ս. ՄԱԿԱՐ ՀԱՅԿԱԶՆ

Տամներորդ դարու կիսուն՝ Միքայէլ ա-
նունով հայ իշխան մը, իր Մարիամ բարե-
պաշտ կնոջ հետ թողուց հայրենի տունը
և մեկնեցաւ գէպ ի Անտիոք, ուր կը գըտ-
նուէին ուրիշ ազգայիններ ալ։ Ոյն ժամա-
նակ քաղաքին եպիսկոպոսը կը կոչուէր Մա-
կարիսս։ Այդ բարեպաշտ ընտանիքը Աշոտ
Ողորմածի թագաւորութեան օրով որդի մ'ու-
նեցան. մկրտող եպիսկոպոսը, որ իրեն ազ-
գականն էր, իր անունն ալ տղուն հետ ան-
մահացնելու աղոտումով մը՝ Մակար դրաւ
անունը. և իր ձեռքին տակ մեծցնելով մա-
նուկը, ոչ միայն մայրենի լեզուն՝ այլ նաև
յունարէն և ասորերէն լեզուները սովորեցաց
անոր։ Մակար, հասակին հետ զարգացնելով
միտքը և հոգին, քահանայ ձեռնազրուե-
ցաւ իր խնամակալ եպիսկոպոսէն։ Մանուկ
հասակէն այնակն սիրած էր առաքինութիւ-
նը, և այնչափ հետամուտ՝ գործով ալ կա-

տարելու, որ զինքը տեսնողները կը կարծէին առաջինութեան պատկերը տեսնել։ Ականաւ տես լատին պատմիչը հիացած՝ այսպէս կը զրէ Մակարի վրայ. « Թագաւորական ազնիւ գոհար, մեծ պարծանք հայ ազգին, զոր ոչ թէ ճարտար արուեստաւորի մը ձեռքը, այլ ամենուն ճարտարապետը Աստուած իր թագին վրայ հիւսեց. փառք եղաւ ծնողին, յոյս՝ սիրելիներուն, Մակար պանծալի մանուկը, իր աշխարհի մեծամեծներու տոհմէն սերած» , և այն։

Մակար զրեթէ երեսուն տարեկան էր, երբ մահացու հիւանդացաւ քաղաքին եպիսկոպոսը, որ անկողնին մօտ կանչելով իր անուանակիցը, օրէնեց վերջին անգամ, և իր պաշտօնը անոր յանձնեց։ Մակար՝ եպիսկոպոս ըլլալու տարիքը չունէր դեռ. բայց ինչ փոյթ, երբ իրեն սպանչելի վարքը տարիքին պակասը կը լեցնէր, և տարիներէ ի վեր ինքն էր՝ որ կը կարգադրէր ծերունի եպիսկոպոսին գործերը։

Մակար ի սկզբան սաստիկ ընդգիմացաւ եպիսկոպոս ձեռնադրուելուն. բայց վերջապէս համակամեցաւ, մտածելով որ անով պիտի կարենար գոհացում տալ իր աղքատասէր սրտին։ Այնուհետեւ աղքատները, կաղերը

և կոյրերը ամէն օր կը վազէին ողորմութիւն և բժշկութիւն խնդրելու եպիսկոպոսէն, և Աստուած այնպիսի չնորհք մը տուած էր Մակարի, որ երբ ինքը անձամբ աղքատներուն պէտքը կը մատակարարէր, անմիջապէս կը բժշկուէին կաղերը և կոյրերը։ Այդ բանը միայն Մակար չէր գիտեր. բայց ժողովուրդը երբ գիտցաւ թէ իրենց եպիսկոպոսը հրաշագործ սուրբ մ'էր, սկսան ամէն կողմէ հիւանդները, կաղերը, կոյրերը՝ անոր ոտքը բերել, որոնք կատարեալ առողջութիւն զըտնելով, կը հռչակէին զինքը իրբեւ «այր Աստուծոյ»։

Մակար տեսնելով թէ ժողովուրդը շատ կը պատուէ զինքը, մտածեց հեռանալ քաղաքէն, անձանօթ տեղ մ'երթալ՝ ասպրիլ օտարութեան մէջ։ Չորս աղդակից և ազգական ընկերներու հետ, որոնց անուններն էին Յովհաննէս, Պետրոս, Դաւիթ և Կոստանդին, մուրացիկ ձեւանալով ուխտի գնաց գէպ ի սուրբ երկիրը 4000 թուին. միայն զգեստ մը, գօտի մը և գաւազան մ'ունէր՝ ծայրը խաչ, որով ամէն անցած տեղերը հրաշքներ կը գործէր։ Հազիւ Երուսաղէմ հասաւ, սկսաւ անխտիր քարոզել՝ որ հեթանոսները դառնան քրիստոնեայ ըլլան, քրիս-

տոնեաներն ալ ապաշխարեն։ Անհաւատները ուզելով լռեցնել այդ անծանօթ պանդուխտին լեզուն, որ զիրենք կը յանդիմանէր, բռնեցին և բանտ դրին, և գետնին վրայ խաչաձեւ տարածելով՝ պրկեցին ձեռքերը, և մերկ կուրծքին վրայ տաքցուցած մեծ քար մը դրին։ Մակար՝ Աստուծոյ օգնութեամբ ազատեցաւ այդ և ուրիշ տանջանքներէ, և անհամար հրաշքներ գործելով՝ շատ հեթանոսներ դարձի բերաւ։ Երբ ժողովուրդը հոն ալ սկսաւ դինքը փառաւորել, թողուց Երուսաղէմը և իր ընկերներով Եւրոպա անցաւ. որ քաղաքներէն որ կ'անցնէր, առաքինութեան օրինակներով և գործած հրաշքներով կ'ափշեցնէր ժողովուրդը, և բոլոր հիւանդները իրեն երախտապարտ կ'ընէր՝ կատարելապէս բժշկելով զանոնք։

1011ին Բելձիքայի Գանդ քաղաքը հասաւ, և զոն Ա. Բաւոնի վանքին մէջ բնակեցաւ։ Քաղաքացիք ամբողջ տարի մը վայելցին հայ պանդուխտին ըրած հոգեկան և մարմնական բարիքները, որուն սրբութեան անունը ամբողջ երկրին մէջ սփռուած ըլլալով, մօտիկ քաղաքներէն ալ կու գային հիւանդներ և անդամալոյներ և անոր ազօթքով կը բժշկուէին։ Յաջորդ տարին, 1012

թուրին սկիզբները, աւերիչ ժանտախտը բոլոր թելձիքան սուգով պատեց։ Մակար միայն զուարթ էր այն համաճարակ աղետին մէջ. անձնանուէր և արի՝ ամէն կողմ՝ կը վաղէր հիւանդներուն օգնելու, մեռածները թաղելու, վշտացածները միխթարելու, և իր ներկայութիւնը միայն բաւական էր՝ սիրու տալու օրհասականներուն և վրգոված խիզները հանդարտելու։ Մակարին զոհը կատարեալ եղաւ՝ երբար ինքն ալ նոյն ժանտախտէն բռնուեցաւ. գուշակեց մարգարէական հոգւով մեռնելու ժամը և ըսաւ իր մօտը եղողներուն. «Ժանտախտը իմ մահուանս հետ պիտի վերջանայ»։ Եւ յիրաւի ճիշդ գուշակած օրը և ժամը, 1012 տարւոյն ապրիլի 10ին, աւանդեց մաքուր հոգին, և ժանտախտը անմիջապէս կանգ առաւ սուրբին մարգարէածին համեմատ։

Մակարի մեռնելէն զրեթէ 50 տարի վերջը, 1067ին, Գանդ քաղաքին բնակիչները երախտապարտ գտնուելով սուրբին, որուն բարեխօսութեամբը ազատած էին ժանտախտէն և ուրիշ տարափոխիկ հիւանդութիւններէ, անոր մարմինը հասարակաց գերեզմանէն փոխազրեցին առանձին տապանի մը մէջ, և նշխարներուն մէկ մասը ցրուեցին

եկեղեցիներու մէջ, խորաններ և մատուռներ շինելով յանուն հայ սուրբին, և քիչ ատենէն Հոռմայ Քահանայապետները սրբոց կարգը դասեցին զինքը, յիշատակը տօնելով ապրիլ 10ին:

* * *

Ա. Մակարի վարքը գրեցին երկու կրօնաւորներ. առաջինը, որ Ա. Բաւոնի վանքին Երիմրուգ արբային հրամանով գրեց, կենակից էր Ա. Մակարայ. և երկրորդը, Սիւգեր արբային հրամանով, որ ներկայ էր սուրբին նշխարներուն փոխադրութեան (1067): Վերջինս, որ անշուշտ տառը կամ քսան տարեկան հասակին տեսած էր մեր սուրբ ծերունին՝ Ա. Բաւոնի վանքին մէջ, այսպէս կը վերջացնէ իր գրութիւնը, Մակարի վրայ խօսելով. «Ոչ ոսկի Սովերայ, այլ ծաղիկ ընտիր հայ աշխարհին, և սուգ երկրին Սոսրւոց, փառք Փլանդրացւոց և վայելութիւն Գանդ քաղաքին, որ և այժմ թագաւորէ յերկինս, երբեմն պանդուխտ գոլով և նժղեն յերկրի վասն Աստուծոյ»: Բոլլանդեանք իշրենց սրբոց վարուց հաւաքածոյին մէջ հրատարակեցին այս երկու կրօնաւորներու զրու-

թիւնները, ուսկից քաղած է Հ. Զամշեան՝ հայ պատմութեան Բ. Հատորին համար: Մաղաքիա դպիրն ալ կը գրէ իր կաթողիկոսաց պատմութեան մէջ (Սարգիս Ա. Կթ.) «Մակար՝ կամաւ հրաժարեալ ի պատրիարքութենէն Անտիոքյա, գնաց յարեւմուտու և փոխեցաւ յերկիրն Ֆիամինկի յամի տեառն 1012»:

Ա. ԳՐԻԳՈՐ ՀԱՅԿԱԶՆ

Ա. Գրիգոր՝ ծննդեամբ հայազգի, ծաղկած է Փ. գարու վերջերը Եւրոպիոյ մէջ: Իր ծնողաց անունը և աստիճանը մեզի անծանօթ են, բայց պէտք է հարուստ եղած ըլլան՝ որ կրցան զինքը երեւելի վարժապետներու յանձնել: Պատանի հասակէն՝ կը փայլէր վրան զարմանալի խոնարհութիւն մը, խօսակցութեանց մէջ՝ անուշ, Աստուծոյ՝ եղբարց և աղքատներուն միրով վառուած, ամէն առաքինութիւններով զարդարուած էր: Երբ ծնողը մեռան, իր բոլոր ինչքը աղքատներուն բաժնեց, հեռացաւ հայրենիքէն, ու Նէոկեսարիոյ մօտ գտնուող վանքերէն մէկուն մէջ առանձնացաւ. հոն զարմացուց մեծաւ

ւորները եւ ընկերները իր գերազանց առաքինութիւններով և գիտութեամբ։ Նիկոպոլսոյ — այժմ՝ Շէպին Գարա-հիսար կոչուած՝ Փոքր Ասիոյ մէջ — եպիսկոպոսը լսելով Գրիգորի համբաւը, իրեն քով կանչեց զինքը, իր խորհրդականը ըրաւ և քիչ ժամանակէն քահանայ ձեռնագրեց։ Եպիսկոպոսին մահը լայն ասպարէզ մը բացաւ Գրիգորի առջև, որ որչափ կը ծածկէր իր առաքինութիւնները խոնարհութեան քողին տակ, այնշափ աւելի ժողովրդեան ուշադրութիւնը գրաւելով՝ եպիսկոպոս ընտրուեցաւ Նիկոպոլիս քաղաքին։ Գրիգոր բարձր իշխանութիւնը առնելէն ետքը՝ մեծ գործեր ակաւ։ Մանիքեցի աղանդաւորները իր թեմէն դուրս հանեց, այրիները, որբերը և խեճերը պաշտպանեց հարստահարող բռնաւորներուն դէմ։ Բայց Գրիգոր քան ամէն պատիւ և բարիք գերաշ դաս համարելով իր հոգւոյն փրկութիւնը, թողուց եպիսկոպոսական ծանր բեռը, եւ երկու յոյն կրօնաւորներու հետ հեռացաւ քաղաքէն անծանօթ աշխարհ մը երթալու համար։

Իտալիա և Գաղղիա շրջելէն ետքը՝ Օրէանի վիճակին թվային կամ թիւտիվին քաղաքը հասաւ, և լսելով թէ մղոն մը հե-

ռու Ս. Մարտինոսի մատուռ մը կայ, Հոնքնաց խրճիթ մը շինեց՝ տեղւոյն Լուիդ իշխանուհոյն հրամանով։ Երեք տարի խիստ կրօնաւորի մը կեանք վարեց, խելքէ՝ մտքէ վեր ճգնութիւններով զարմացնելով նոյն իսկ ամենէն ճգնասուն կրօնաւորները։ Անոր կերակուրը՝ քիչ մը գարիէ հաց էր, կամ եփած արմատներ և ջրոյ մէջ կակցցած ոսպ-շարթուան մէջ երկու անգամ միայն կ'ուտէր։ Գրիգորի համբաւը իրեն ձգեց խուռն բաղմութիւն մը, ոչ միայն մերձակայ քաղաքներէն, այլ նաև հեռաւոր աեղերէ, որով գունդագունդ ուխտի կ'երթային, իրենց հետ պարէն և փոքրիկ ընծաներ տանելով։ Սուրբը կ'ընդունէր զանոնք՝ պարզապէս ընծայաբերը չտրտմեցնելու համար, և յետոյ աղքատներուն և կարօտելոց կը բաշխէր, կամ իրեն հիւզը այցելողներուն առջև կը դնէր։ Օր մ'ալ հարուստ մէկը եկած էր սուրբը տեսնելու, և ուրիշներու հետ սեղանի հրաւիրուեցաւ։ Հարուստը՝ այն աղքատիկ ճաշը իրեն նախատինք համարելով, յանձն շառաւ և իր տեղը մեկնեցաւ։ Հազիւ թէտուն հասաւ, իսկոյն դիւահարեցաւ և ուզեց ինքզինքը գետը նետել։ Գրիգոր՝ առանց ներկայ կայ ըլլալու այս եղածին իմացաւ խեղճին վի-

Ճակը՝ աղօթեց եւ գիւահարը քժշկուեցաւ.
մեծատունը իմանալով թէ Ս. Գրիգոր իրեն
օգնութեան հասած էր, կրկին գնաց անոր
շնորհակալ ըլլալու և թողութիւն խնդրելու:

Գրիգոր փոքր իրմիթին մէջ մեծ ապրեցաւ՝ թէ իր վարքով, թէ ըրած գարձերով և թէ մեծ ճգնութիւններով, և ԺԱ. գարու սկիզբները երկինք թռաւ մարտ ամսոյն 16ին, մեծ ցաւ պատճառելով ամենուն՝ որ զինքը ճանչցեր էին:

Հաւատացեալները՝ որ արգէն իրը մեծ սուրբ մը կը պատուէին Գրիգորը, անոր մարմինը Ս. Մարտինոսի մատուռին աւագ խորանին առջև ամփոփեցին: Բայց Բիւտիվիէի իշխանուհին Լուիի՝ չքեղ թափօրով Գրիգորի մարմինը իր քաղաքին Ս. Սողոմոն եկեղեցւոյն մէջ փոխադրել տուաւ. եւ ինչպէս Օրլէանու եկեղեցւոյն որրոց վարքին մէջ նշանակուած է, մինչև հիմայ նոյն եկեղեցւոյն մէջ կը հանգչի հայկաղն Գրիգորի մարմինը, որ իր հետ տարածեց Եւրոպիոյ նոյն իսկ խոր տեղերը մեր ազգին անունը:

Ս. Գրիգորը, զոր Գաղղիացիք կը կոչեն
S. Grégoire d'Arménie և իտալացիք S.
Gregorio d'Armenia — ոչ Լուսաւորիչը
— լատին եկեղեցին կը տօնէ մարտ 16ին
(Հմիտ. Migne, հատոր ի Ա, մո. Բ):

Գրիգորի վարուց պատմութիւնը քաղեցինք Migneի բառգիրքէն եւ Հ. Ալշանի ըստ բաւականի Ընդարձակ զրութենէն, որուն ազրիւր եղած է անշուշտ իր յիշած Օրլէանու եկեղեցւոյ մէջ գտնուած Վարք սրբոցը «ուր Ս. Գրիգորի տօնը, կ'ըսէ, ի 16 մարտի կրկին անգամ նշանակուած է»:

Գրիգորի համբաւը տարիներէ ետքը Հայաստան ալ հասաւ. անոր ազգականները Եւրոպա եկան զինքը տեսնելու յուսով, բայց վախճանած գտան: Գրիգորի վարուց անանոն զրիչը անոնցմէ առեր է իր տեղեկութիւնները սրբոյն արևմուտք գալէն առաջ վարուց նկատմամբ:

Ս. ԱՒՄԵՌՆ ՀԱՅԿԱԶՆ

Ախմէոն ծնած է 956 թուականին։ Հայրը, ըստ նոր վկայութեանց, Եկտոր կը կոչուեր և մայրը՝ Երանեակ. ծննդալայրն էր Արշամուշատ Եփրատի քով՝ որ հիմայ աւերակ է։ Եկտոր՝ հարուստ և աղնուական էր, իշխանական տունէ, և կը յուսար թէ Ախմէոնը իրեն արժանաւոր ժառանդ պիտի ըլլար։

Տարիքին հետ կը զարգանար Ախմէոն հոգեսիրութեան մէջ, և դեռ պատանեակ՝ կը զգար թէ ինքը աշխարհի կոչում չունի, Աստուած զինքը ուրիշ բանի որոշած էր. ծնողաց թախանձանքն եղաւ միայն որ ստիպեց զինքը յանձն առնուլ ամուսնանալ Աստղիկ անունով աղնուականի մը աղջկան հետ։ Աակայն Աստուած գործը ուրիշ կերպ գարձուց. Ախմէոն, Ակեսիանոսի օրինակին հետեւով, հարսնիքի օրը հանեց ճոխ և իշխանական զգեստները, և ծառայի հագուստով՝ զիշերը ժածուկ փախաւ տունէն ու դնաց հայ կրօնաւորներու վանք մը, որոնք

Ս. Բարսղի կանոնները կը պահէին։

Յետ քանի մը տարի խիստ ճգնութեամբք հիացնելու իր կրօնակիցները, ուղեց փառքերէ և պատիւներէ փախչիլ և բոլորովին առանձնացած ապրիլ՝ Աստուածոյ հետ միայն կենակցելով, Թերայիդի հին ճգնաւորներուն նման։ Գնաց մօտը գտնուող Երասխ գետին ափունքը, և երկու աշակերտներու հետ առանձնացաւ խրճիթի մը մէջ։ Հոն չունէր ոչ համեղ կերակուրներ, ոչ անուշ ըմպելիներ, զորոնք վայելած էր ժամանակաւ տանը մէջ. իրեն ամէնօրեայ կերակուրն էր քիչ մը ցամաք հաց, բանջար և ընդեղէն. խմած ջուրն ալ այնչափ սակաւ՝ որ ծարաւն անգամ չէր անցներ։ Այս առանձնութեան տարիներուն մէջ Ախմէոն այլ և այլ հրացքներ գործեց, որոնցմէ ամենէն զլխաւորն եղաւ իր Ատեփանոս աշակերտը յարուցանելն։ Ախմէոնի համբաւը տարածուեցաւ չորս բոլորտիքը, խուռան բազմութիւն մը կը վազէր բժշկութիւն կամ ուրիշ հոգեստ նպաստներ խնդրելու։ Մտածեց Ախմէոն օտար երկիր երթալ ուր պատիւ և գովեստ ընդունել գժուար պիտի ըլլար. ուստի իրբե մուրացիկ պանդուխտ մը Երբուսաղէմ գնաց, ուր տան մը մէջ եօթը դիւահարներու հանդիպելով, աղօթքով առողջացուց զանոնք։

Այս ժամանակի Երուսաղեմայ Արքէն հայ եպիսկոպոսը, լսելով ազգակցին առաքինի վարուց համբաւը, իր մօտ կանչեց և լսածէն աւելի գտաւ, ոչ միայն սուրբ մը՝ այլ եւ հրեշտակ մը: Սիմէռն տեսնելով թէ հոն ալ ոկտաւ անունը հռչակուիլ, ուխտը և ջերմեռանդութիւնները կատարելէն ետքը մեկնեցաւ Եւրոպա, և նախ գնաց Հռոմ, ինչպէս բոլոր քրիստոնէից՝ այսպէս ալ ազգայիններուն երկրորդ ուխտատեղին: Հռոմ հասնելէն քանի մ'որ ետքը, գնաց ներկայացաւ Բենեդիկտոս¹ քահանայապետին, երբ եպիսկոպոսներու և եկեղեցականներու բազմութեամբ նստած էր Լատերանեան Ա. Յովհաննես եկեղեցւոյն մէջ: Սուրբը յետոյ առանձնացաւ եկեղեցւոյ մէկ անկիւնը և ոկտաւ աղօթել: Հոն գտնուող կղերիկոսներէն մէկը անոր մօտեցաւ, զննեց և ստուգեց անոր հայ ըլլալը և սկսաւ նախատել զինքը հերետիկոս կոչելով. քոլը գտնուողները սաստեցին կղերիկոսին որ լռէ. բայց նու աւելի մա բորբոքած բարձրածայն կ'աղաղակէր թէ՝

1. Բենեդիկտոս է (975-984), ինչպէս կը համարի Հ. Ալիշան, որ ժամանակագրական տեսակետով ալ աւելի կը յարմարի:

այդ մարդը պէտք է քարկոծել կամ ողջ ողջ այրել: Սիմէռն լուր կեցած՝ թէ եւ աշնոր ըսածը չէր հասկնար, բայց կը զգար թէ կը նախատէր զինքը. սակայն անխոռվ իր աղօթքը առաջ կը տանէր, և ուրիշ պատասխան շունէր անոր՝ բայց քաջցր ժպիտ մը: Այդ աղմուկը Քահանայապետին ականջը հասնելով, խստիւ հրամայեց կղերիկոսին որ լռէ, և քննել տուաւ հայ պանդուխտը, թէ արդեօք ո՛ և է մոլորութիւն մը ունի:

Նոյն տարին ուրիշ հայ եպիսկոպոս մ'ալ Հռոմ գտնուելով, որ իտալերէն լեզուն բաւական կը խօսէր, Սիմէռնի թարգման եղաւ: Սուրբը իր ուղիղ գաւանութիւնը ընելին ետքը, Նիկիական հանգանակն ալ կըրկնեց, և քննիչները գոհ մնացին: Քահանայապետը իրեն կանչեց Սիմէռնը, պաշտուեց և սիրեց զանիկայ, մանաւանդ տեսնելով անոր ուղիղ հաւատաքը, հասուն միտքը, խոնարհ և հեղ կերպարանքը: Զարախօս կղերիկոսը տեսնելով թէ պանդուխտ հայը Քահանայապետէն պատուեցաւ, այսահարած գետին ինկաւ բազմութեան առջև ու փրփրեցաւ: Սիմէռնի գութը շարժելով անոր վրայ, աղօթեց և խաչակնելով բժշկեց իր նախաւ

տողը։ Քահանայապետը աւելի եւս զարմացաւ հրաշագործ Սիմէռնին վրայ. մեծարեց զինքը, առանձին բնակութեան տուն մը տուաւ, ուր կը յաճախէին հիւանդները եւ ախտաժէտները հայ կրօնաւորէն բժշկութիւն գտնելու, որուն փոխարէն շատ պարգեւներ և դրամ կու տային. բայց Սիմէռն չէր առնուր, և կը պատուիրէր որ աղքատներուն, որբերուն եւ պանդուխտներուն բաժնեն։ Գրեթէ ամբողջ տարի մը Հռոմ բնակեցաւ, և տեսնելով թէ հոն ալ ժողովուրդը կը խանդարէ իր միայնութիւնը, գիշեր մը ծածուկ փախաւ անկէ։

Սիմէռն երբ Պոսկանայի ծովեղերքէն կ'երթար կրօնաւորներու վանք մը մտնելու համար, դիմացը ստահակ երիտասարդներ ելան, և տեսնելով այն խեղճ և անծանօթ մարդը, սկսան նախատել զինքը, յիմար կանչելով և նոյն իսկ յանդգնեցան ծեծել։ Եղածը տեղւոյն եպիսկոպոսին ականջը հասնելով, և մանաւանդ լսելով թէ նախատուողը հայազգի Սիմէռնն էր, որուն անունը Հռոմէն հնչուած էր ամբողջ Խտալիոյ մէջ՝ իրեւ հրաշագործ սուրբի մը, բռնեց ու պատժեց այն ստահակ երիտասարդները՝ մութ բանտի մը մէջ դնելով։ Սուրբը երբ իմացաւ այս

բանը, զիշերը գնաց բանտին դրան առջև աղօթեց, և ահա բանտին դռները բացուեցան յանկարծ իրեն առջև. ներս մտաւ ու խրատեց որ անկէ վերջը շնախատեն պանդուխտները և արձակեց զանոնք։ Զարմացաւ եպիսկոպոսը Սիմէռնի ըրածին վրայ, եւ իրեն կանչելով՝ այլւայլ հարցումները ըրաւ ինչ մարդ ըլլալը գիտնալու համար։ Սուրբը, պատճառ բերելով թէ խտալերէն չէր գիտեր, չի պատասխանեց անոր հարցումներուն որ շյայտնուին իր առաքինութիւնները. և քանի մը օրէն թողլով այն քաղաքը, Բիզա գնաց։ Ճանապարհին վրայ վիշապի կերպարանքով գեւ մը գիմացը ելաւ, իրը թէ ուզէր զինքը կլեւ. Սիմէռն աղօթք մը մրմիջելով՝ անխոռվ ճանապարհը շարունակեց. և երբ գեւը մօտենալով հարցուց. «Ո՞ր կ'երթաս, թշուառ միայնակեաց»։ — «Հոն՝ ուր Փրկիչս կ'առաջնորդէ», պատասխանեց սուրբը, և խաչակնքելով հալածեց գեւը։ Բիզա հասնելով՝ աղքատի մը տունը իջաւ և հոն անցուց նոյն օրը։ Երկրորդ օրը երբ անկից կը մեկնէր Սիմէռն, անծանօթ մարդ մը հանդիպեցաւ՝ իշու մը երասանակէն բռնած, և ըսաւ. «Եկուր, հայրիկ, նստէ՛իշուկիս վրայ և տանիմ զքեզ ուր որ կ'ու-

զես»։ Սիմէռն հնազանդեցաւ և կենդանւոյն վրայ նստած՝ անծանօթ մարդուն առաջնորդութեամբ վոկանաքաղաքը հասաւ, ուր հրէի մը տունը սթելանելով՝ քարոզութեամբ եւ հրաշագործութեամբ անոր ընտանիքը և ուրիշ բազմաթիւ հրէաներ քրիստոնեայ դարձուց, և խնդրեց տեղույն եպիսկոպոսէն որ զանոնք մկրտէ։ Որչափ փառքէն կը փախչէր Սիմէռն, ան ալ այնչափ ետևէն կը վաշզէր։ Ստիպուեցաւ այն քաղաքէն ալ հեռաւնալ և զիւղ մը գնաց, ուր մի քանի հիւանդներ և չերմոտներ բժշկեց։

Երբ մօտեցաւ Բարդոն լերան, Սիմէռնի ուղեկիցը ըստաւ. « Աստուած տեսիքը մէջ պատուիրեց ինծի մինչև հոս բերել զբեզ», և սուրբին օրջնութիւնը առնելով՝ ետ դարձաւ։ Հետիոտն շատ տեղեր ըրջեցաւ Սիմէռն եւ շատ բժշկութիւններ ըրաւ խտալիոյ մէջ, յետոյ Գրազիա անցաւ և բենեղիկտեանց Ա. Պետրոս կոչուած վանքի մը մէջ երեք ամիս հիւանդ պառկեցաւ։ Երբ Սպանիա հասաւ, կիրակէ առաւօտ մը գետէ մը անցանելու միջոց լսեց եկեղեցւոյ զանդակներու ձայնը, որ պատարագի կը կանչէր հաւատացեալները։ Հոն, գետին եղերքը, կոյր մը նստած էր մինակ. սուրբը մօտեցաւ ու

ըստաւ. « Եղբայր, լուանք ձեռքերնիս եւ եւ րեսնիս զետին ջրով և երթանք պատարագ տեսնելու»։ Միամիտ կոյրը հնազանդեցաւ և երեսը լուաց, այն ատեն Սիմէռն իր թաշկինաւ կով սրբեց անոր աշբերը, և ահա կոյրը առաջին անգամ դիմացը մարդ մը տեսաւ, որ նոյն իսկ իր բարերարն էր։ Մարդը այդ բարիքին ուրիշ փոխարէն չլրցաւ ընել, բայց եթէ մինչև վերջը Սիմէռնէն անբաժան մնալ։ Երկուքը միասին ուխտի զնացին Գոմբոստելլա քաղաքը՝ Ս. Յակոբ առաքելոյն նշանաւում է։ Հրաշագործ Սիմէռնի անունը մինչև Սպանիոյ թագաւորին¹ ականջը հասած ըլլալով, զինքը պալատը կանչեց եւ խնդրեց որ բժշկէ իր զիւահար գուստը։ Սուրբը թագաւորին խնդիրքը կատարեց, աղջիկը առողջացուց աղօթքով, և հրաժաւը երկով թագաւորին տուած ընծաներէն, Գաղզիա անցաւ՝ նոյնպէս քարոզելով անդադար և հրաշներ գործելով. անկից ալ իտալիոյ Մանտուա քաղաքը՝ գնաց, որուն մօտերը Բենեղիկտեան վանք մը կայ շինուած։ Սիմէռն այս վանքը ընտրեց իրեն վերջին բնա-

1. Հ. Ալշան՝ Վերեմունդ Բ թագաւորը կը համարի. (Հմատ. Բազմ. 1885, էջ՝ 28):

կարան և սիրով ընդունուեցաւ նոյն ժամանակի Վեներանդոս աբբայէն։ Հաղիւ երկու տարի ապրեցաւ այս վանքին մէջ, ուր բոլոր օրը ազօթքով կ'անցունէր և ամենուն առաքինութեան օրինակ եղաւ։

Ժամանակակից կրօնաւոր մը հիացած հայ սուրբին վրայ կը զրէ. « Եզ նա ձշմարիտ աստուածապաշտ, խաղաղասէր, եղբայրասէր, պահող լոււթեան բերանոյ, ողորմած և բարեգութ առ աղքատս, արժանաւոր մշակ յայգւոջ Տեառն, հեղ և խոնարհ ի քաղաքավարութեան, քաղցր ի խօսակցութեան, հաստատուն ի հաւատս, յազօթս անդադարելի, ի պահս հանապազորդեան, ի հսկմունս անխոնն »։ Ամբողջ աւագ շաբաթը առանց ուտելու կ'անցընէր, միայն հինգչարթի օր քիչ մը խաշած բանջար կ'ուտէր. ամենուն հետ հասարակաց հոգեւոր պարտքերը կատարելէն վերջը՝ հայկական արարողութեամբ ժամասացութիւնն ալ կ'ընէր ամէն օր։ Շատ անգամ հրաման կ'առնուր մեծաւորէն եւ մուրալու կ'ելլէր, և ինչ որ կը ժողվէր՝ աղքատներուն կը բաժնէր։

Տեղոյն Վոնիփակիսու իշխանը մեծ համարում ունէր Սիմէռնի վրայ և կը խնդրէր որ ստեղ իր պալատը այցելէ. բայց Սիմէռն

հազիւ յանձն կ'առնուր իշխանին խնդիրը կատարելու, այն ալ՝ հնազանդութենէն ըստիպուած։ Խոր ձմեռուան մէջ օր մը երբ անտառէն անցնելով Վոնիփակիսոի պալատը կ'երթար, բոկոսն ազքատ և ցաւագար ծերունիի մը հանդիպեցաւ, որ ցրտէն կը գողգղար։ Սիմէռն խկոյն կոշիկները հանեց և անոր տուաւ. երբ աղքատը հարցուց թէ « Դու Բնէլ պիտի հազնիս »։ — « Փու Բնէլ փոյթդ » պատասխանեց, և այնպէս բոկոսն իշխանին պալատը գնաց։ Ուրիշ օր մ'ալ տեսաւ բոլոր քաղաքը տակնուվրայ եղած, Վոնիփակիսոի գառագիղէն առիւծ մը գուրս փախած ըլլալով. սուրբը անվախ գնաց գտաւ առիւծը, բոնեց բաշերէն և վանդակին մէջ փակեց։ Անդամ մ'ալ երբ վանքին եղբայրներէն մէկը խողուելու վրայ էր, հացի կտոր մը կոկորդը մնացած ըլլալով, Սիմէռն խաչակնքեց եւ մահառիթ պատառը գուրս հանեց։

Այսպիսի առաքինի և հրաշագործ կետնք մ'անցընելով Սիմէռն, իր մաքուր հոգին Աստուծոյ առանդեց 1016 տարւոյն յուլիսի 26ին։ Մարմինը նոյն վանքին գերեզմանատան մէջ թաղեցին, ուսկից խարխափելով իրեն գիմող կոյրերը՝ լուսաւորուած ետ կը դառ-

նային, նոյնպէս կաղերը և հիւանդները կը
բժշկուէին իրենց ցաւերէն:

Սուրբին մեռնելէն քանի մը տարի ետքը,
կրօնաւորները եւ Վոնիփակիոս իշխանը Հռոմ
նուիրակ զրկեցին՝ ինդրելու Բենեդիկտոս Ը
(1012-24) քահանայապետէն, որ կարենան
խորան մը շինել Ավմէոնի անուամբ ու Քահանա-
յապետը թոյլ տուաւ որ նոյն իսկ եկեղեցի
շինեն հրաշագործ Ավմէոնի անուամբ և ա-
մէն տարի տօնը կատարեն: Լեռն Թ
(1049-1055) և Ազեքասնզր Բ (1061-73)
քահանայապետներն ալ իրենց նախորդին
կոնդակը հաստատեցին: Վոնիփակիոս իր
հօր շինած եկեղեցին քակեց և տւելի ընդ-
արձակ մը շինեց՝ Ա. Բենեդիկտոս եւ Ա.
Ավմէոն անուամբ, և վանքին կրօնաւորները
ամէն տարի յուլիս 26էն սկսեալ՝ առան-
ձին ժամերգութեամբ ութօրեայ կը կատա-
րեն Ա. Ավմէոնի յիշատակը:

* * *

Սուրբին վարքը առաջին անգամ զրեց
իրեն կրօնակից բենեդիկտեան մը, որուն Ե-
րուսաղեմի Արսէն պատրիարքն ալ համառօտիւ
այլ և այլ ժամոթութիւններ տուած է. այս

զրութիւնը Բոլլանդեանք տպեցին (Զ հատ.
յուլիս 26, Էջ 324-37), ուսկից կը քաղեն
Հ. Զամիեան (Պատմ. Բ, Էջ 850) և Գեր.
Ստեփ. Ագոնց (Եւրոպա, Բ, 596): Հ. Ալե-
շան ալ 1851ին Մանտուա երթալով այցե-
լեց Ա. Ավմէոնի եկեղեցւոյն և լի հմտու-
թեամբ զրեց սուրբին վարքը . (Բազմ. 1884, Էջ 5):

Ա. Ավմէոնի մարմինը հիմայ կճեայ տա-
պանի մը մէջ ամփոփուած՝ զրուած է խո-
րանին վրայ, հետևեալ լատին արձանագրու-
թեամբ. Simeoni monaco — patrono cae-
lesti — sospitatori — sodales sui —
Ավմէոնի միանձնելու երկնաշոր պաշտպանի—
արագահասի — լիները իշր:

Անոր պատուական զլուխը կը պահուի ար-
ժաթեայ անօթի մը մէջ: Այս վանքին մէջ
կը պահուին գարձեալ սուրբին հագած խա-
րազը, հայերէն լեզուով սաղմոսագիրք մը,
աւետարան մը, և լատին լեզուով — ոչ
բնագիրը — Արսէն պատրիարքին թուղ-
թը: Ավմէոն՝ Մանտուա քաղաքին շրջաբնակ
ժողովրդեան պաշտպանն է. երբ անձրեկի
կամ պարզ օդի պէտք ունենան, սուրբին
զլուխը խորանին վրայ կը գնեն և ջերմեռան-
դութիւն կ'ընեն. Աստուած ալ հայ սուրբին

բարեխօսութեամբ կը կատարէ անոնց խընչ
դիրքը:

Ա. ԴԱԼԻԹ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

Ա. Դաւթի մանկութեան հանգամանքները
անծանօթ են մեզի. սակայն կարևոր կէ-
տերը յայտնի են, այսինքն թէ հայազգի էր,
սնած իր բնիկ հայրենի տանը մէջ, իշխանի
մը կամ զօրավարի մը որդի, դաստիարա-
կուած բարեպաշտ մօր մը ձեռքով: Օր մը
եկեղեցւոյ մէջ լսելով Քրիստոսի աւետարա-
նին խօսքերը, « Եթէ կամիս կատարեալ լի-
նել, երթ, վաճառեալ զինչս քո, և տուր աղ-
քատաց, և եկ զինի իմ, և ունիցիս գանձս
յերկինս», վասուեցաւ մեծին Անտոնի պէս,
թողուց ծնողքը, տունը, ստացուածքը, եւ
ձեռք առաւ պանդիտութեան ցուպը: Կախ
և առաջ ուխտի գնաց Երուսաղէմ, անկէ
Հռոմ անցաւ, և յետոյ ուզեց Ապանիոյ
Գոմբոստելլա քաղաքը երթալ՝ Աիմէոնի
նման այցելելու Ա. Յակոր առաքելոյն նշխար-
ներուն: Ապայն երր իտալիոյ Լուգդա քա-
ղաքը հառաւ, 1050 թուականին մայիսի
սկիզբները, զգաց թէ ալ անկարող էր Ապա-

նիա անցնիլ, և նոյն քաղաքին Ա. Միքայէլ
եկեղեցւոյն մօտ անկելանոցի մը մէջ բնա-
կեցաւ. մինչև հիմայ այս անկելանոցը Դաւ-
թի անուամբ կը կոչուի (Անկելանոց Տաւի-
նոյի): Աթա անունով հարուստ և առաքի-
նի տիկին մը, որ անկելանոցին մօտ կը
բնակէր, լսելով պանդուխտ հայուն տառ-
քինի վարքը, և խղճալով անոր վրայ, կամ որ
աւելի հաւանական է, ուզելով մօտէն ա-
կանատես ըլլալ Դաւթի առաքինութեանց,
առաջարկեց անոր որ իր պալատին մէջ բը-
նակի: Դաւթի փոքր խցիկ մ'ընտրեց և հոն
ձգնեցաւ, առանց ոտքը սեմէն դուրս դնե-
լու, անդադար աղօթելով և շաբթուան մէջ
հաղիւ երեք անգամ քիչ մը հաց և ջուր
առնելով: Քանի մ'օրէն ժանր հիւանդութիւն
մը զինքը մտհուան անկողինը ձգեց. զգաց
Դաւթի թէ երկնքի ճանապարհը բացուած-
էր առջելը, և կանչեց բարեպաշտ Աթան, օրհ-
նեց զինքը, շնորհակալ եղաւ. եւ երեք օր
առաջ զուշակելով մահուան օրը եւ ժամը,
1050 տարւոյն յունիսի 3ին, մաքուր հո-
գին աւանդեց Յիսուսի ձեռքը, յետ քսան
մէկ օր Աթայի տանը մէջ բնակելու:

Բարեպաշտ տիկինը՝ որ համոզուած էր
արդէն թէ սուրբ մը կորսնցուց, որովհետեւ

— ինչպէս ժամանակակից Յովսէփ Զիվիթալի պատմիչը կը զրէ — Աստուած յայտնած էր, թէ պանդուխտ Դաւիթը տանը մէջ ընդունելուն համար՝ երկինքը վարձք պիտի առնուր, արտասուեց սուրբին մահը և յուղարկաւորութեան շքեղ հանդիսով թաղել տուաւ մօտը գտնուող Ա. Միքայէլ եկեղեցոյն գերեզմանատան մէջ։

Սուրբին մահուանէն ետքը անթիւ հրաշենք եղան անոր գերեզմանին վրայ, որոնց զիսաւորները յիշենք։

Կին մը, շատ ժամանակէ ի վեր տեսատես, օր մը Ա. Միքայէլ եկեղեցւոյն գերեզմանատան մէջ պտըտելու ատեն, յոգնած՝ ինկաւ դամբանի մը վրայ և քնացաւ։ Յանկարծ իրեն կը մօտենայ ծանօթ մարդ մը, — հայ պանդուխտն էր՝ քանի մ'օր առաջ վախճանած, — և զինքը կը յանդիմանէ անհամեստ գիրքով գերեզմանին վրայ նստելուն համար։ Կինը զարհուրած՝ ոչ պանդուխտին յանդիմանութենէն, այլ ուրուականի մը տեսիլէն, կը զոչէ բարձրաձայն։ Այդ ձայնը զինքը խոր քունէն արթըն ցնելով՝ հասկցաւ որ տեսիլ մ'էր, եւ նոյն պահուն զգաց՝ թէ բոլորովին առողջացած էր. մեծ խնտումով եկեղեցի վաղեց, Առ-

տուծոյ և Ա. Դաւթի շնորհակալ ըլլալու։ և ուխտեց մինչեւ վերջը պատուել սուրբին գերեզմանը ու շուտով եղած հրաշեն ալտարածեց։

Լուգգա քաղաքին Անսելմոս եպիսկոպուսը 1061ին Ազեքսանդր Բ անունով Հռոմայ քահանայսպետ ընտրուեցաւ, առանց ձգելու Լուգգա քաղաքին եպիսկոպոսական տիտղոսը. սա՝ եղած հրաշեները հաստատելէն ետքը՝ հրամայեց որ սքանչելագործ Դաւթին մարմինը եկեղեցի փոխազրեն։ Փոխադրութենէն մէկ քանի օր ետքը Ա. Թայի աղախիններէն մէկը գիւահարելով վախ և սարսափ կ'ազդէր շատերուն. անոր բժշկութեան ուրիշ հնարք չկար՝ բայց եկեղեցի տանիլ Ա. Դաւթի գերեզմանին վրայ. բայց անկարելի կ'ըլլար զսպել դիւհարը, օր աւելի կը կատղէր, գետին կ'ինկնար փրփրած և ինքինքը կը խածնէր։ Վերջապէս օր մը հազար նեղութեամբ հազիւ կրցան եկեղեցի մտցընել դիւհարը, օր անմիջապէս թմրած գետին ինկաւ, և նոյն միջոցին Դաւիթ երկցաւ անոր, քաջալերեց և հրամայեց գերեզմանին մօտենալ։ Քիչ ետքը սթափած եւ զգաստացած ոտք ելաւ, պատմեց տեսիլը,

եւ թէ ինչպէս գերեզմանին մօտենալուն
պէս՝ գեղար ելաւ իրմէ և կարգէ դուրս ան-
դորրութիւն մը զգաց :

Որ մը, խուլ ու համբ պանդուխտ մը
ողորմութիւն խնդրելու համար Ա. Միքայէլ
եկեղեցին մտաւ. տեսաւ բարեպաշտներու
բազմութիւնը՝ որոնք խորանի մը առջև
մոմեր վառած ծնրագիր կ'ալոթէին ջեր-
մեռանդութեամբ. ինքն ալ ծնրագրեց եւ
իր պէտքերը խնդրեց անձանօթ սուրբէն:
Մի քանի օր ջերմեռանդութիւնը կըկնելէն
ետքը՝ խօսել եւ լսել մկաւ ի գարմանս
ամենուն. և ի ցոյց իր երախտագիտութեան
առ սուրբն՝ յանձն առաւ մինչև մահը Ա.
Միքայէլ եկեղեցւոյն աւելածուն ըլլաւ:

Լուգգացի ազնուական մը սաստիկ ջեր-
մէն բոնուած շատ ծախքեր ըլլաւ անօ-
գուտ տեղ. բարեկամները յորդութեցին
զինքը Ա. Դաւթի գերեզմանին ուխտի եր-
թալ. նա ուխտեց և խոստացաւ փառաւոր
պաստառ մը շնորհել սուրբին գերեզմանը
ծածկելու համար: Երբ եկեղեցի զնաց՝ ա-
նոյշ քուն մ'եկաւ վրան, և երբ արթնցաւ՝
արդէն բժշկուած էր:

Նոյն եկեղեցւոյ կանոնիկոսներէն մէկն ալ
կը փափագէր հրաշագործ Դաւթին մասունքը

ունենալ. ուստի գիշեր մը ծածուկ զնաց,
ու տապանը բանալով՝ երբ փոքր նշխար
մ'առնելու համար ձեռքը երկնցուցած էր, ան-
երևոյթ զօրութիւն մը բռնեց զայն. խեղճ
կանոնիկոսին ամբողջ գիշերուան մէջ ըրած
ճիգը անօգուտ եղաւ: Առաւօտը քահանանե-
րը և ժողովուրդը զարմացան՝ երբ կանոնիկոսը
հոն կապուած տեսան, եւ լսելով եղածը՝
յանդիմանեցին կանոնիկոսը և Ա. Դաւթէն
խնդրեցին որ ներէ անոր. սուրբը լսեց ա-
նոնց ալօթքը:

Այս հրաշբները և ուրիշ շատերը, որոնք
անոր ընդարձակ վարքին մէջ մանրամասն
կը պատմուին, հռչակեցին Դաւթի անունը
իրը Աբանելագործ. և Աղեքոանդր Գ քահա-
նայապետը 1459ին Դաւթը սուրբերուն կար-
գը դասեց, և այն ժամանակէն չեղ հան-
դիսով մկան տօնել լուգգա քաղաքին թեմին
եկեղեցիները:

Նոյն քահանայապետը հրամայեց որ Դաւ-
թի մարմինը մարմարիոնէ տապանի մը մէջ
փոխազրեն. անոր վրայ արձանագրութիւն
մը քանդակելով՝ դարձեալ նախկին տեղը
զրին, որ է Ա. Ղուկասու խորանին քով:

Երեք չորս դար ետքը, 1547ին, Ա. Մի-
քայէլ եկեղեցւոյն աւագերէցը հարկ համա-

բեցաւ տապանը բանալ՝ որ հաւատացեաւ ները սուրբին մարմինը տեսնեն։ Տասներկու ժամ Ա. Դաւթի մարմինը եկեղեցւոյն մէջ բաց մնաց, ուր խռնուեցան բարեպաշտները իրենց պաշտպան սուրբը տեսնելու, որ Հոգւոյն սրբոյ անօթ մ'եղած էր և մարմինն ալ անապական մնացած։ 1592ին Մարտինու Ճիշի աւագերէցը սեպտեմբեր Յին, սուրբին մարմինը աւագ խորանը փոխազրելու համար՝ ստիպուեցաւ տապանը բանալ և վեց ժամ եկեղեցւոյ մէջ բաց թողուց։ Գրեթէ 50 տարի ետքը, 1646ին իգնատիոս աւագերէցը ուղեց այնպիսի տապան մը շինել, որ ժողովուրդը միշտ կարենայ տեսնել սուրբին մարմինը. տապանին առջևի կողմը ապակի դրաւ և Ա. Դաւթին հագուց պանդուխտի գեւստները, որոնք մինչեւ այն ատեն կը պահուէին։

Այս փոխադրութեան հանդիսին Լիվունոյի հայ վաճառականներն ալ Լուգգա հրաւիրուեցան, որոնք ի պատիւ իրենց հայրենակցին՝ ամպհովանին բռնեցին և իրենց անունները հոն արձանագրեցին։

* *

Լատին եկեղեցին Ա. Դաւթի յիշատակը յունիս Յին կը կատարէ։

Նոյն օրը ջերմեռանդներու խոռոն բաղմութիւն մը Ա. Միքայէլ եկեղեցին կը վազէ։ Շատերն ալ երբ ուխտի կ'երթան հայկազն Դաւթին, եկեղեցւոյն աւագերէցը սուրբին զիխարկը — որ նկարագին համեմատ՝ տաճկական քիչին է — ուխտաւորներուն զլուխը կը դնէ։ Ժամանակաւ գուքսերը եւ իշխանները համբուրելով զայն իրենց զլուխը կը դնէին, որ հայկազն մեծ սուրբը ամրապնդէր իրենց իշխանական թագը։ Ա. Դաւթի որչափ որ հայրենիքն հեռու է, սակայն շատ ազգայիններ իր նշխարներուն այցելած են և ջերմ համբոյներ տուած անոր տապանին, և անուննին ալ արձանագրած են հոն։

Բոլլանդեանք Ա. Դաւթի վարքը կը պատմեն Ա. հատորին մէջ (Էջ 327). Նոյնպէս Բարոնիոս ծիրանաւորը իր Տարեկիներուն մէջ, որոնցմէ քաղած է Գեր. Ստեփ. Ագոնց իր աշխարհագրութեան մէջ (Եւրոպա, ԲՀատ.՝ Էջ 522-528)։ Ֆերահեան Յովսէփ Գերապայծառն ալ Ա. Դաւթի գերեզմանին

ուխտի երթալէն ետքը՝ Աքանչելագործ հայ-
կաղունին վարքը մանրամասն գրած է (հրա-
տարակուած ի Վենետ. Ս. Ղազար, 1883):

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ

Աղէտներու դարագլուխ մը կը սկսէր մե-
ջի համար հաղարական թուականին։ Մէկ
կողմէն՝ բարբարոսներու սուրը և միւս կողմէն
թոռնդրակեցւոց աղանդը ահաւոր նախճիր կը
գործէին, հաւասարապէս վտանգելով մեր
թէ աշխարհը և թէ կրօնքը։ Այդ ժամանակ-
ներուն էր (1019 տարեթուին), որ Սարգիս
կաթողիկոսի մահուամբ դատարկ մնարով
հայրապետական աթոռը, Անիի ժողովուրդը
ոչ մէկը աւելի արժանաւոր կը գտնէր այն
գահուն՝ բաց ի Պետրոս վարդապետէն, որ
եղբայրն էր Խաչիկ կաթողիկոսին։ Պատմու-
թիւնը աւելորդ նկատած է Պետրոսի նախ-
կին տարիներուն վրայ խօսիլ։ այս գէպը
արդէն բաւականէն աւելի կը խօսի անոր
սրբութեան և գիտութեան մասին, որոնք
սանդուխն եղան անոր՝ կաթողիկոսական ա-
թոռին վրայ բարձրանալու։ Հայրապետա-
նոցը նոր փայլ մը կը ստանայ՝ բարոյապէս

ու նաև նիւթապէս։ կաթողիկոսին կ'ընկե-
րէին միշտ 12 եղիսկոպոս, 60 քահանայ,
500 երէց, և աէք էր նա 500 գիւղերու։
Այս ամէնքը փառասէր մը պիտի երեցնէին
Պետրոսը, եթէ հրաշք մը այդ կարծիքը
չէրքէր հասարակաց մարէն։

1022ին Վասիլ Բ կայսրը Վրաստան
կ'երթար・բոլոր դրացի տէրութիւնները ա-
նոր ընդառաջ կ'ուղարկէին իրենց թագաւոր-
ները։ միայն մեր Յովհաննէս-Սմբատ թա-
գաւորն եղաւ, որ իր արժանապատութեան
գէմ նկատելով զայն, կաթողիկոսը զրկեց
ընդառաջ։ Յաղտեաց գաւառին մէջ միասին
հանդիպեցան կաթողիկոսը, Վասիլը, և
Զրօրէնեաց տօնը։ Կայսեր փափաքին համե-
մատ, տօնը հայկական արարողութեամբ
պիտի փառաւորուէր։ Արդ, երբ Պետրոս
Ճորժիսի վրայ խաչակնեց և սուրբ միւռոնը
ցանեց, գետը կեցաւ, ալիքները կանգ առին
օրհնութիւն առնելու համար։ և նոյն օրը
Պետրոս՝ ավշած բազմութենէն մկրտուեցաւ՝
Սուրբ և Գետադարձ անուններով։ Այնուհե-
տեւ պատիւ չմնաց որ չընէր կայսրը մեր
կաթողիկոսին։ Բայց մինչդեռ Յոյները զինքը
կը պատուէին իրը Գետադարձ, Հայերը զայ-
րացած իր երկար բացակայութեան վրայ՝

նոր կաթողիկոս մ'ունենալ կ'ուզէին՝ անդարձ
հայրապետին տեղ :

Երբ Անի հասաւ, յետ երկար գադարներ
ընելու Սեբաստիոյ և Կարսի մէջ, ժողովուրդը
այնչափ զրգուռած գտաւ, որ ստիպուեցաւ
Վասպուրականի Զորոյշանքին մէջ առանձ-
նանալ: Բայց նենգոտ Յովհաննէսը զինքը
կանչեց և Բյնիի մէջ փակելով՝ Դիոսկորոսը
կաթողիկոս ընտրեց: Արգելանքը տարի ու
կէս միայն տեսեց. Դիոսկորոս, անարժան ձեռ-
նադրութեանց պատճառով ատելի գարձած,
գահնկէց եղաւ՝ Աղուանից կաթողիկոսին
նախագահութեամբ եւ 4000 անձինքներէ
գումարուած ժողովէ մը: Պետրոս արգելա-
նոցէն հայրապետարան փոխադրուեցաւ: Շատ
տարիներ յարատեեց իր փառաւորութեան
մէջ, նոյն իսկ Անիի՝ Յոյներուն վաճառուե-
լէն վերջն ալ, վասն զի գիտէին Յոյները
թէ Պետրոս կամակից էր վաճառումին, ինքը
ըլլալով այդ գաշնակիրը Յունաց տանողը:
Անիի հայ բնակիչներուն հետ գժտուած այս
պատճառով, կասկածելի եղաւ քիչ ժամա-
նակէն նաև Յոյներուն. Կամենաս նոր քա-
ղաքապետը աքսորեց զինքը մայրաքաղաքէն:
Պետրոս՝ Արծն քաղաքը քաշուեցաւ. բայց հոն
ալ նոր դէպք մը՝ չար ապազայ մը գուշակեց

իրեն: Եվիրատայ մէջ ջրօրհնեաց հանդէսը
կատարելու ժամանակ, Հայերուն հետ այլ-
ազգի մ'ալ ջուրին մէջ ցատքեց. Երբ կա-
թողիկոսը կ'ուզէր արգիլել, նա պատաս-
խանեց թէ կ'ուզէր մկրասուիլ: այն ժամա-
նակ փոքրաւորը միւռոնի շիշը կոարեց ու միան-
գամայն օծեց խաչը և այլազգին. բայց ապա-
կին անոր ձեռքին մէջ մտնելով՝ խառնուեցաւ
արինը միւռոնին և ջուրին հետ: Ժողովուրդը
կը խօսէր նոյն իրիկուն այս չարագուշակ
նշանին վրայ, երբ յանկարծ կայսեր նուի-
րակները բռնեցին. Պետրոսը՝ Գաղտառիմի
մէջ արգիլեցին, և յետոյ Կոստանդնուպոլիս
զրկեցին իր Խաչիկ քենորդոյն հետ: Կայս-
ըրը, Ատոմ՝ Արծունիի երաշխաւորութեամբ,
զինքը Սեբաստիա զրկեց, ուր Ս. Նշան
վանքին մէջ աղօթքով և ճգնութեամբ ան-
ցուց վերջն տարիները, մինչև 1058 թուա-
կանը: Տուղրիկ աւերտումներուն ժամանակը՝
ծերունի հայրապետը տիսուր լուրերուն չկա-
րողանալով գիմանալ, 40 տարուան ալէկո-
ծեալ հայրապետութենէ մը վերջը վախճանե-
ցաւ, յանձնելով իր անունը՝ պատմութեան,
«Մարտիրոսաց, Հանգստեան և Մանկունք»
շարականներն ալ գրականութեան:

* * *

Այս վարուց նախկին աղբիւրն է Լաստիւ վերտցի (Էջ 15, 18, 19, 51, 52, 53, 72), որ վտակ մը ձեւնալով՝ յաջորդ պատմութիւններուն մէջ կը տարածուի, և կը պըդտորի Վարդանէ և Կիրակոսէ անցած ժամանակ: Օրինակ մը. գետաղարձութեան հրաշքը իր նախնական ձեխն մէջ, զոր կը պահէ Լաստիվերտցի, ուրիշ բան չէ՝ բայց եթէ խաչէն արձակուած լոյս մը՝ գետին մէջ ձգուելու պահուն: Գետաղարձը՝ Ս. Նշանի վանքին մէջ կը հանգչի այժմ, բայց նշխարներուն մաս մը փոխաղբուած է նաև Վարագայ վանքը:

ԳԵՐՈԳ ՄԵՂՐԻԿ

Սուրբ, գիտուն և գործունեայ վարդապետը Գէորգ՝ ծնած է Վաստուրական գաւառին Անալիւր գիւղին մէջ 1043 թուականին: Մեր պատմիչները զինքը Մեղրիկ կը կոչեն՝ իր «Քաղցրուսոյց վարդապետութեան» համար: Գրեթէ տասնըհինգ տարեկան հասակին ձը-

գեց աշխարհի զրօսանքները և Սեւանի մէջ կրօնաւորեցաւ: Ամբողջ յիսուն տարիներ փակուած մնաց ջրեղէն անապատի այդ ովասիս ին մէջ, որուն երկինքն ալ, երկիրն ալ միշտ լուսութեան դատապարտուած են: Այս կղզիին մէջ շատ բնակելուն համար Սեւանցի ալ կը կոչուի: Միօրինակ տարիները կը բոլորէին Գէորգայ կեանքին շուրջը, բայց ինքը իւրաքանչիւր տարիին միշտ կը փոփոխէր, իր ճգնութիւնները, ծոմերը, պահքերը աւելցնելով և քունն ալ նուազեցնելով, այնպէս որ կիրակամուատի գիշերները ոսքի վրայ կեցած՝ երկնային մտածումներով կ'անցընէր:

Գէորգայ համբաւը հոչակուեցաւ, հասաւ նոյն իսկ Կիլիկիոյ խորը՝ վանքերուն մէջ, եւ ամէն կողմէ զրելով կը հրաւիրէին որ գէթ մէկ՝ երկու օր իրենց այցելէ, կատարեալ կրօնաւորութիւն սովորցնելու համար: Գէորգ բարձրագոյն հրամանէ սահմուած՝ այցելեց Կիլիկիոյ վանքերուն, անոնց կանոններ հաստատեց, մանաւանդ՝ ինչպէս որոշակի կը յիշուին՝ Գրագարկի և Արտոյ անապատին ներքին կեանքը բոլորովին կերպարանափոխեց, այնպէս որ քիչ ժամանակէն բոլոր միաբանները՝ մէկ մէկ Գէորգներ եղան, և կիրակա-

մուտները հսկելով կ'անցընէին։ Ծոմերը եւ
պահքերը խստացուցին։

Այսպիսի սուրբ և արդիւնաւոր կեանքը
կնքեց Գէորգ Եօթանասուն տարեկան՝ 1413ին,
աօրինակ բազմաց եղեալ և հայր խստովա-
նութեան ամենայն Հայստանի այցու։ Ինչ-
պէս կ'ըսէ Մ. Ուռհայեցին։ Զինքը Դրա-
զարկի վանքին մէջ թաղեցին, ուր իրեն գե-
րեզմանակից եղաւ իր Կիրակոս աշակերտը։

Յայսմաւուրները յուլիս 30ին կը զնեն
Գէորգի յիշատակից։ Ուռհայեցին, որ ժամա-
նակակից կը համարուի, մեծ գովեստով կը
խօսի սուրբ վարդապետիս վրայ, նոյնպէս
Սամուել Անեցին, Վարդան և Կիրակոս։

Գ. Ո Հ Ա. Ր Ի Ն Ե Ա. Ն Ք

Սեբաստիոյ Ալիրաս ամիրային օրով
(1417ին), Դաւիթ անունով հայ իշխան մը
գերի բռնուեցաւ իր երէց օրդւոյն գետ,
երբ Ակիւթացիք Սեբաստիոյ վրայ յարձա-
կեցան։ Դաւիթ և իրեն Այս որդին ուրա-

ցան հաւատքնին։ բայց անոր միւս չորս
որդիքը, Գոհարինե, Ուատիոս, Ծամիդես եւ
Տուշիոս, իրենց բարեպաշտ մօր ձեռքին տակ
կտրիճ քրիստոնեաներ մնացին, և 1435ին
Ալիրասի բանակին մէջ զինուորեցան։ անկէ
վերջը կարելի չէր որ ծածուկ մնար անոնց
զգուանքը այլազգիներու կրօնքէն և կերա-
կուրներէն։ Ալիրասին հրամանով Դաւիթի
հինգ որդիներն ալ իր առջև բերուեցան։
երբ ամիրան Հարցուց թէ ի՞նչ կրօնքի կը
հետեւին, Ալիրաս՝ որ ուրացած էր արդէն,
«Քո հաւատքդ ունինք», ըստու Ամիրան
զիրենք ետ զրկեց։ չորս փոքր եղբայրները
տրտմած տուն հասան, սկսան լալ և կոծել
թէ ի՞նչպէս մարտիրոսական պսակին շար-
ժանացան։ Ուստիոս՝ Ս. Նշանի վանքին մէջ
կրօնաւոր եղաւ, միւսներն ալ իրենց հա-
ւատքը պաշտպանելու առթի մը կը սպա-
սէին։

Զարախօսութիւնը մի քանի օր վերջը
կրկնուեցաւ ամիրային առջև։ բայց նա
հարցաքննութիւնը ուշացուց, վասն զի նոյն
օրերը Կամասի վրայ պիտի գիմէր։ Երբ
անկից գերիներով և աւարով ետ գարձաւ,
շղթայակապ անոր առջև տարուեցան Գոհ-
հարինեանք։ Ուատիոս համարձակ «Քրիւ-

տոնեայ ենք» ըսաւ. այլազգիները իսկոյն ամիրային ակնարկը կատարեցին, որ հրամայեց քարերով և բռնցիով ծեծել անոր բերանը:

Ալիրաս՝ մեծէն սկսեալ հարցուց թէ արդեօք յանձն կ'առնո՞ւն ուրանալ հաւատքնին և մահուանէ աղատիլ: Ամենքն ալ մահը ընտրեցին: Այն ժամանակ ամիրան հրամայեց փոս մը փորել, մինչեւ մէջը թաղել Գոհարինէն, ու նետի հարուածներով վիրաւորել զայն: Այս միջոցին, զինուորները Գոհարինեանց տունը աւերելով՝ անոնց որդիքը և ստացուածքը առջևին բերին, որպէս զի ընտանեաց խեղճութիւնը տեսնելով ուրանան հաւատքնին. բայց անոնք զիրարքաջալերելով՝ հաստատուն մնացին: Ալիրաս զայրացած՝ հրամայեց որ Գոհարինէն Ալիր Հեղեղատին մէջ նետեն:

Առջեւ բերել տուաւ Տուկիոսը եւ Ծամիդէսը.

— «Եթէ ուրանաք հաւատքնիդ, ըսաւ, Գոհարինէն կ'աղատեմ և զինքը իշխան կը դնեմ, Ռատիոսն ալ աղատ կը թողում»:

— «Քու փառքդ ալ՝ պատիւդ ալ քեզի ըլլան, եթէ զմեզ մեր ձշմարիս կրօնքէն ետ պիտի կեցնեն», պատասխանեցին միաբերան:

Հրամայեց Ալիրաս որ առջեւ բերեն Գոհարինէն և Ռատիոսը. առաջինը արդէն հոգեվարք էր, իսկ Ռատիոս արիւնլուայ եղած՝ հաղիւ ոտքի վրայ կը կենար, վասնզի երկու ժամէ ի վեր զինուորները զինքը փոկերով կը կենար:

— «Տեսէք, ըսաւ բռնաւորը, ձեր Փրիստոսը զձեզ չի փրկեց. դուք ձեր անհնաղանդութեամբ զձեզ կը դատապարտէք»: Եւ անոնց ստացուածքը զինուորներուն և իշխաններուն բաժնեէն ետքը՝ սուրբ դահինն տուաւ ու ըսաւ. — «Կարէ ատոնց գլուխները, առանց մէկուն խնայելու, եւ նախ Ռատիոսը, որ ատոնց կորուստին պատճառ եղաւ»:

Գոհարինեանք զիրարք խրախուսելով՝ քաջութեամբ նահատակուեցան Փրիստոսի սիրոյն Համար: Հաւատացեալները գիշերը ծածուկ առին նահատակներուն մարմինները և Քառակոչսի կոչուած ճանապարհին մօտ թաղեցին, և յուղիս 28ին անոնց տօնը հաստատեցին Գոհարինեամբ կոչելով, երէց եղբօրը անունով:

*

Գոհարինէի որդին՝ Թէոդորոս, Հօրը նաշ
հատակուելէն վերջը, Աերաստիոյ մօտ Ա.
Նշանի վանքին մէջ կրօնաւոր եղաւ։ Տեղ-
ւոյն սրբութիւնը և անոր մեծ առաքի-
նութիւնը չկրցան զինքը ազատել մատնիշ-
ներու լեզուէն։ Եոյն Ամիրաս ամիրային
առջև ամբաստանուեցաւ հաւատքին համար.
նոյնպիսի խոստումներ և սպառնալիք եղան
անոր, ինչ որ առաջ հօրը, հաւատքը ուրա-
նալու համար. բայց նա այնպիսի բաներէ
գեղեղող մարտ չէր։ Տանջանք, բանտ և դա-
հիճներ աւելի ևս ամրացուցին անոր հա-
ւատքը, և «Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ
պիսի մեռնիմ» խօսքէն դուրս ուրիշ պա-
տասխան չունէր իրեն եղած հարցումներուն։
Յուսահատեցաւ ամիրան, դատաւորները ետ
քաշուեցան, զրպարտիչները յոգնեցան. եւ
Թէոդորոս, միշտ ամուր, կէտաշափ մ'ան-
դամ տեղիք չտուաւ։ Այն ատեն դահիճնե-
րը առաջ անցան, տմարդի կերպով գետին
ձգեցին հեղուկ և սուրբ տրեղան, և սկսան
կոխուածել, աքացի և բանցի հարուածել, եւ
նախատել զանիկայ։ Բայց ի զուր էր ամէն
բան։ Վերջապէս սուրը մերկացաւ պատե-

նէն, շողաց ու կտրեց սուրբին զլուխը։ Աե-
րաստացի հարուստ մը չատ դրամ տալով
ամիրային, ամփոփեց երանելի նահատակին
մարմինը և պատուով թաղել տուաւ Ա.
Նշանի վանքին մէջ։

**

Դ Յայսմաւուրը յուլիս 30ին կը գնէ
Գոհարինեանց յիշատակը և նահատակու-
թեան տարին ՇիԴ (=1075) թուականին։
մինչդեռ Բ Յայսմաւուրը և Զամշեան՝ յուլիս
28ին կը գնեն, և նահատակութեան տարին
1136ին, որոնց համաձայն է Ա. Նշան վան-
քին կրնեդակը կամ ժամանակադրութիւնը։

Թէոդորոս արեղայի մարտիրոսութեան
պատմութիւնն ալ նոյն աղբիւրներէն է։ Նա-
հատակութեան տարին է 1150 թուականը.
իսկ յիշատակը կը կատարուէր յունիսի
22 ին։

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՌԵՐ

Ս. Գրիգոր Լուսաւորչէն վերջը Առտուած
մեր կաթողիկոսներուն մէջ յարոյց ուրիշ
Գրիգորներ ալ, որոնք վարուց սրբութեամբ
մէկ մէկ լուսաւորիչներ եղան մեր ազգին,
և իրենց նախնոյն ըրած բարեկարգութիւնները
վերստին նորոգեցին : Ինչպէս նա
ամրող աշխարհ մը հեթանոսութեան վէճն
դուրս հանեց, այսպէս ալ ասոնք տգիտութեան,
ապականութեան եւ զեղծումներու
անդունդէն դուրս հանեցին իրենց ժողովուրդը,
լուսաւորելով անոնց միսքը և հոգին : Ամէնքն ալ զրեթէ միւնոյն ժամանակի
մէջ փայլեցան, լուսաւոր համաստեղութեան
մը նման, տեղի տալով միայն որ Շնորհալին
առաջ անցնի իրենց միջէն՝ ինչպէս արեգակ
մը աւելի բարձրէն սփառելով իր լոյսը :

Այս համաստեղութեան մէջ առաջին կը
ներկայանայ Գրիգոր Բ Վկայասէր (1065-
1106) : Արդէն իր անուան մեծագոյն դու-
վեստն է վկայասէր մակդիրը . ջերմ սի-
րող մը սուրբերուն և մարտիրոսներուն, ա-
նոնց արեան հետ կը խառնէր իր արաւ-

սուքը . բովանդակ կեանքը հիսուածք մը ե-
ղաւ անոնց վարքը ուսումնասիրելու եւ ա-
նոնց նմանելու : Աա՝ որդի էր Գրիգոր Մա-
գիստրոսին, որ իր գիտութեան և լաւու-
թեանց համար ընդունեցաւ այդ տիտղոսը
Յունաց կայսրէն, և կոռուցաւ Մանիքեցւոց
դէմ թղթերով և զէնքով, իրը իշխան և իրը
քրիստոնեայ մատենագիր : Այսպիսի հօր մը
ամէն յատկութիւնները ժառանգելով Վա-
հրամ, — վասնդի առաջ այսպէս կը կո-
չուէր Գրիգոր, — անոր մահուընէն վերջը՝
երկրին իշխանութիւնը ձեռք առաւ : Ասկայն
աշխարհային պատիւնները իրեն համար չէին,
շուտով ձանձրացաւ անոնցմէ և թողով ա-
մէն բան՝ վանք մը քաշուեցաւ, իր հոգւոյն
փրկութիւնը միայն հոգալու :

Եօթը տարիներէ իվեր կաթողիկոսական
աթոռը գատարկ էր, Յոյներուն յարուցած
այլեւայլ խոչընդակներուն պատճառով : Մեր
Գաղիկ Բագրատունի թագաւորը այդ բա-
նին գարման տանելու համար, ժողով մը
գումարեց եպիսկոպոսներու, և հայրապե-
տական աթոռին ուրիշ արժանաւոր անձ
չգտան բաց ի Վահրամէն, որ թէպէտ շատ
զժուարութեամբ իր կրօնաւորական խոնարհ
զգեստը թողուց, սակայն ազգին բոլոր ակն-

կալութիւնները լիուլի իրագործեց։ Աւելի
օրինակով՝ քան թէ երկայն իրաւաներով
կ'ուզէր ուղղել ուրիշները։ արտաքին պերճուն
թիւններէ փախչող, եթէ հարկ ըլլար տեղ
մը երթալ՝ չետիւոտն կը քալէր։ զգեստի
մասին, որով կը զարգարուէին ժամանաւ
կին եկեղեցականները, ինքը ամենազարդ
էր։ Նոյնպէս կերպակուրի մէջ սակաւապէտ էր։

Այս սուրբ հայրապետը ինքինքը պան-
դուխում մը կը նկատէր երկրիս վրայ, ինչ-
պէս իրօք ալ այնպէս ենք. հաստատուն
տեղ մը չունէր բնակութեան, ուր որ իր
հօտը կարօտ կը տեսնէր՝ հոն կ'երթար, եւ
կը հայթայթէր անոնց պէտքերը. ինչ ալ
կրէր իւր ժողովրդեան համար՝ ոչինչ կը
համարէր, միայն թէ անոնց օգուտ մը ըրած
ըլլար։ Բայց իրեն մեծագոյն խնամքը եղաւ
սուրբերուն առները կարգաւորել, անոնց վար-
քերը զրել, թարգմանել կամ ծանր նուէր-
ներով ուրիշներուն թարգմանել տալ. այս
գործիս համար մէկ բանի չէր խնայեր։ Փա-
փաքեցաւ սուրբ տեղերը այցելել, բայց գեռ
չմեկնած՝ իրեն փոխանորդ կարգեց Բարսեղ
եպիսկոպոսը, որ Անիի մէջ կը նստէր, եւ
ինքը զնաց Երուսաղէմ։ Հոն յետ ջերմաջերու
իղձերը և արտասուրքը թափելու Ա. Գերեզ-

մանին վրայ և կրօնաւորաց կեանքը ուսում-
նասիրելու, նաւով կոստանդնուպոլիս գնաց,
ուր շատ Հայեր կային։ Թէ Աւելքս կոմմե-
նոս կայսրը և թէ պատրիարքը սիրով ըն-
գունեցան զինքը, և շատ գոհ մնացին իրմէ,
մանաւանդ երբ տեսան որ յունական լեզուի
եւ գպութեան հմուտ էր, պատկառելի եւ
խոհեմ իր ամէն գործին մէջ։ Հոս յաճախ
խօսեցաւ անոնց հետ կրօնական միութեան
վրայ, բայց յաջող ելք մը չունեցաւ. այդ
խնդիրը պահուած էր՝ իր յաջորդները եւ
թոռներն ալ յոդնեցնելու։ Բաւական ժա-
մանակ մնաց Պօլսոյ մէջ, եւ իր առջև ամէն
գրատուն բաց էին, որով անխօնջ աշխա-
տութեամբ թարգմանեց շատ վկայաբա-
նութիւններ եւ սուրբերու ներբողներ։ Երբ
գործը վերջացուց, մաքին մէջ կասկած մը
ծագեցաւ Յունաց խորամանգութեան վրայ,
թէ գուցէ այդ թարգմանութիւնները իրեն
չտան. ուստի քովը կանչեց իր քեռորդին Գրի-
գոր արքեպիսկոպոսը, և հրամայեց որ ամէն
բան առած՝ առաջուց մեկնի գէպ ի Պաղես-
տին, իսկ ինքը խոստացաւ անմիջապէս ա-
նոնց հետեւիլ։

Այդ պիտի ըլլար՝ բայց տարբեր պարա-
գաներով, ինչպէս որ Աստուած կարգաւո-

բած էր։ Վասնզի ծովը սաստիկ ալէկոծեալ ըլլալով, հովը բանութեամբ մղեց տարաւ նաւը դէպ ի եգիպտական ափունքը։ Ճամշորդները զարհուրեցան այդ յանկարծական փոփոխութենէն, որովհետև այլազգեաց ձեռքն էին նոյն ժամանակ այդ կողմերը։ Ուրիշ հնարք չկար, պէտք էր նաւէն եղնէին. ուստի նորօրինակ միջոց մը մտածեցին, այսինքն՝ բոլոր եկեղեցականները հագան իրենց շքեղ զգեստները, գոյնզգոյն շուրջառներ և զարդեր, ինչպէս աշխարհականներն ալ իրենց պատշաճ փառաւոր զգեստներով զարդարուեցան։

Երբ այլազգիք նաւին մօտեցած կը նայէին, զարմացան այս տարօրինակ տեսսիլին վրայ եւ իսկոյն իրենց հազարապետին իմացուցին, որ գալով յարգանքով զանոնք նաւէն հանեց և ով ըլլանին հարցուց։ Անոնք պատասխան տուին թէ՝ մենք Հայոց հայրապետին աղդականները և սպասաւորներն ենք. ինքը քիչ ատենէն պիտի հասնի, և միասին պիտի երթանք Սինա լեռը տեսնելու եւ պիտի այցելենք ճգնարանները և յետոյ պիտի դառնանք մեր աշխարհ։

Հազարապետը զիրենք խալիֆային զրկեց, որ սիրով և պատուով ընդունեցաւ, եւ ի-

մանալով անոնց ով ըլլալը, եւ մանաւանդ լսելով որ կաթողիկոսն ալ քիչ ատենէն պիտի հասնէր՝ շատ ուրախացաւ։ Քիչ ատենէն Վկայասէրը հոն կը հասնէր ընկերակցութեամբ պատուաւոր մարդիկներու, որոնք զինքը զիմաւորելու եկած էին խալիֆային և Գրիգոր արքեպիսկոպոսին կողմէն։ Նոյն իսկ խալիֆայն ընդառաջ ելաւ մեծ հայրապետին, և ուրախ սրտով մը կը համբուրէր անոր աշը, ճակտին ու աչքին վրայ կը գնէր զայն, և վերջապէս ամէն տեսակ մեծարանք մատուցանելով կը ջանար յայտնել իր մեծ ուրախութիւնը, համարելով զանոնք Աստուծմէ զրկուած պատգամաւորներ։ Յետոյ առանձին տուն պատրաստելով, ծառաներ տուաւ անոնց և պարգևներով ճոխացուց զամէնքը։

Շատ օրեր անցնելէ վերջը՝ սուրբը հրաման ուզեց իր աշխարհը դառնալու. խալիֆայն, հիացած անոր սրբութեան, քաղցը վարձունքին և ամէն բարի յատկութեանց վրայ, չէր ուզեր թողուլ, և Աստուծոյ պարզե մը կը համորէր անոնց զալուստը։ Երկար թախանձանքներ անլուսնելի ըլլալով, աւելցուց կաթողիկոսը՝ թէ Եգիպտոսի մէջ Հայեր չկային. խալիֆայն խոստացաւ հոն Հայեր

ժողվել, և իրաւցնէ քիչ ժամանակի մէջ տասը հազար տուն հայ ժողվեց. այն աշտեն Վկայասէրն ալ իր քեռորդի Գրիգոր արքեպիսկոպոսը կաթողիկոս ձեռնադրեց Եղիպտոսի վրայ՝ ի գոհացումն այդ բարի այլ աղջիներուն, և ինքը դարձաւ իր աթոռը:

Յետոյ վանք մը քաշուելով Սեաւ լեռան վրայ, հոն կը ճգնէր Ս. Գրոց ընթերցման և աղօթքի պարապելով. միայն անդամ մը Քեսուն եպիսկոպոսանիստ քաղաքը գնաց, հոն իրեն տեղ կաթողիկոս օծեց իր ազգական թարսեղը, և անոր յանձնեց իր երկու փոքրիկ հրեշտակները՝ երկու աշքին լոյսերը, Գրիգորիսը՝ որուն վրայ անմիջապէս պիտի խօսինք, և Կերսէսը՝ որ յետոյ պիտի ըլլար մեր Շնորհալի մեծ կաթողիկոսը: Իսկ ինքը վանքին մէջ առանձնացած, քառաշուն տարի շրջուն հովուապետութիւն մը ընելէն վերջը, խոր ծերութեան մէջ հանգեաւ ի Գրիգորոս, կնքելով իր պանդուխոտի կեանքը 1105թուին, և հանելով փափաքած Հայրենիքին, որ էր երկինք:

Վկայասիրի զլսաւոր գործն է՝ Վկայաբանութիւնը, որոնցմէ զոմանս ինքը անձամբ թարգմաներ է, զոմանս ուրիշներուն թարգմանել տուած է, ինքը սրբազրելով և կարգի դնելով: Բաւական թուով Յիշատակարաններ ալ թողուցեր է:

Բ Յայսմաւուրը յուլիս 30ին կը դնէ «Յիշատակ Ս. Հայրապետացն Գրիգորիսեանց և Պետրոսի»: իսկ Դ Յայսմաւուրը՝ «զոստոս 8ին Գրիգոր Վկայասիրի և մեր Գրիգոր Պահաւունոյ (փոքր Վկայասիրին) յիշատակը կը դնէ, Համառօտիւ պատմելով ասոնց վարքերը»:

ԳՐԻԳՈՐԻՍ Գ ՊԱՀԱՎՈՒՆԻՆԻ

Գրիգորիս, Ապերատ իշխանին որդին եւ Շնորհալոյ եղբայրը, ծնած 1094ին, Պահաւունեաց ցեղէն էր, որ կը պարծէր քաղաքական և կրօնական բարձրագոյն ազնուականութեան յիշատակներով: Բայց եթէ Գրիգորիս՝ Տրգատ և Լուսաւորին ալ շունենար իրեն նախորդ, իր հարազատին հետ կարող էր իրեն տոհմը նոյնպիսի աղնուականութեան մը բարձրացնել: — Գրիգորիս, դեռ Սըբ. Հայկ.

Երիտասարդ, կաթողիկոս ընտրուեցաւ, եւ ցըսուց թէ երիտասարդութիւնը երբ առաջ քինութեան հետ կը միանայ, ուրիշ բան չէ՝ բայց եթէ բարեգործելու տենտ մը, բազագրութիւն մը ծերութեան և երիտասարդութեան լաւագոյն յատկութեանց : Խակոյն ակըսաւ Վկայասիրին գործը շարունակել, Վկայաբանութիւնները նորոգել և կարգաւորել, փոքր Վկայասէր մ'ըլլալ, ինչպէս կոչուելու արժանի եղաւ, և որոշեց որ իւրաքանչիւր սրբոց տօնի օրերը եկեղեցւոյ մէջ կարգացուին, որով հիմն դրաւ Ճառընտիր զրելու սովորութեան : Մեծ եռանդեամբ և իմաստութեամբ կը կառավարէր եկեղեցին . զանագան բարեկարգութիւններ մտուց . զիտնականները կը քաջալերէր, և ինքը անձամբ կը զրէր շարականներ եւ ներբողներ՝ սուրբերուն :

Իրեն ժամանակ ապստամբեցաւ Աղթամարայ Դաւիթ եպիսկոպոսը, զոր ուրիշ հինգ եպիսկոպոս կաթողիկոս ձեռնադրեցին : Այն ատեն (1114) ժողով մը գումարեց Գրիգորի՝ Սեաւ լերան վրայ, ուր Դաւիթ մերժուեցաւ, եւ Գրիգորիս օրինաւոր Հայրապետ ճանչցուելով, հաստատուեցաւ գահուն վրայ . բայց Դաւիթ անսաստելով ժողովին՝ շարու-

նակեց իր կաթողիկոսութիւնը, որ յաջորդաբար մինչեւ հիմայ կը տեէ . . . միայն Աղթամարայ վրայ :

Երբ այլազգիները տիրեցին Անտիոքայ և շրջակայից, եւ սկսան յարձակումներ գործել Սեաւ լերան վանքերուն վրայ՝ ուր կը բնակէին կաթողիկոսները, Գրիգորիս գուշակելով ապագայ վտանգը՝ փոխեց հայրապետական աթոռը ի Ծովք դղեակ, որ իրեն կալուածն էր : Հոն ալ բոլորովին ապահով չգտնելով ինքինքը, փոխուեցաւ ի Հռոմեայ, անառիկ բերդ մը Եփրատայ ափանց վրայ . ապահով տեղ, բոյն արծիւներու, ուսկից պիտի խոյանային իր և Շնորհալւոյ մտքի բարձր թռիչները :

Իրեն երկարատե հայրապետութիւնը արդեամբ լի եղաւ . ազգային եկեղեցւոյ՝ Հռովմայ հետ միութեան շատ ջանաց : Նոյն ժամանակ լատին եպիսկոպոսի մը համար ժողով գումարուած ըլլալով Անտիոք քաղաքը, հոն հրաւիրուեցան նաև մեր կաթողիկոսը և Շնորհալին : Երբ ժողովը լմեցաւ, Քահանայապետին նուիրակը Ալլերիկոս արքեպիսկոպոսը՝ ուզեց գէպ ի Երուսաղէմ ճամրորդել, որուն ընկերացաւ Գրիգորիս՝ որպէս զի կարող ըլլայ մանրամասնօրէն խօսիլ այդ

անձին հետ միութեան խնդրոյն վրայ։ Աիսն
քաղաքը համելով, նուիրակը ժողով մը գու-
մարեց բարեկարգութիւններ ընելու նպատա-
կով։ Խօսքը Հայոց եկեղեցւոյն վրայ գալով՝
Գրիգորիս իր գաւանանքը ներկայացուց,
պարզ և հաճելի կերպով։ Խօսեցաւ Հայոց
ծէսերուն եւ արարողութեանց վրայ, շարա-
խօսներէ սերմանուած նախաղաշարութենքը
հերքելով, խօսուացաւ նոր բարեկարգութիւն-
ներ ալ մտցնել իրեն եկեղեցւոյն մէջ։ Իր
արգարակորովութեան, ողջմոռութեան և սըր-
բութեան համբաւը հասաւ մինչև իննովկեն-
տիս Բ Քահանայապետին, որ զանազան կող-
մերէ գովեստից թուղթեր ընդունելով, անոր՝
ի նշան սիրոյ գաւազան և քող մը զրկեց իր
կոնդակին հետ միասին։ — Իսկ Յունաց հետ
միանալու խնդիրը թէ և սկսաւ, բայց անոր
վրայ աշխատիլը՝ եղրօրը պահուած էր։ Խա-
զաղութեան եւ սիրոյ տարածումը իր հայ-
րապետական կենաց միակ զբաղանքն եղաւ։
Իր հօտը իմաստութեամբ կառավարելով
յիսուն երեք տարի, ծանրացած որութեամբ
և հասակով, լսեց Աստուծոյ ձայնը՝ որ զինքը
կը հրաւիրէր ի յաւիտենական փառու։ Ուս-
տի ժողով մը գումարելով ի Հռոմելոյ, իրեն
յաջորդ ընտրեց եղբայրը՝ Ներսէս Շնորհա-

լին, և երկու ամիս վերջը հանգեաւ ի Քրիս-
տոս եօթանասուն երեք տարեկան, 4167ին,
թողլով յետնոց իր բարի օրինակը և իր եր-
կերը։

Բաց ի ուրիշներու մեկենաս ըլլալէն, ինքն
ալ շարադրած է Աւետեաց շարականը՝ Խոր-
հուրդն անձառ, երկրորդ Ծաղկազարդինը՝
Մեժահրաշ այս խորհուրդ, ջրօրհնեաց միջոց
երգուած Ով զարմանայի խորհուրդը, եւ
Լուսաւորչի վրայ մեղեդի մը ի յելս արևու
արև։

Բ Յայսմաւուրը՝ յուլիս 30ին, իսկ Դ'
օգոստոս 8ին կը գնեն ասոր յիշատակը. «աս
զրեաց, կ'ըսէ, զիրս ուղղափառ դաւանու-
թեան», անշուշտ այն թուղթը կ'ակնարկէ՝
զօր զրեց առ Մանուէլ կայսրը, ինչպէս կը յիշէ
Ստ. Ուօշեան. և իրը ուղղափառ եւ միա-
րան Յունաց հետ՝ պատուեցաւ նոյն կայս-
րէն, ինչպէս կը զրէ Ն. Լամբրոնեցի իր
թուղթին մէջ՝ ուղղուած «առ Յուսիկ ճգն.
յԱնտիոք»։ Կիրակոս ալ կը պատմէ, թէ երբ
Գրիգոր Երուսալէմ գնաց «աղգն Պուան-
կաց՝ որ շիխէին քաղաքին և պատրիարքին

նոցա առաւել սէր հաստատեցին ընդ աղքիս
մերոյ վասն նորա (Գրիգորի) . . . և զՀին դա-
շին Ա . Գրիգորի և Սեղբեսարոսի՝ վերստին
նորոգեցին » : Թէ Գրիգոր Երբ Ծովք փոխա-
դրեց հայրապետական աթոռը, պատմիչները
որոշ թուական չեն դներ . Հ . Զամշեան
1125ին կը դնէ (Բ. Էջ 52) . իսկ Հռոմելայ
փոխադրութլը — ուր եկեղեցի մը շինած է —
1147ին (Էջ 70-4) : Առ 0րբելեանի գրա-
ծին համեմատ, 1120ին պէտք է որ Գրիգոր
կաթողիկոսական աթոռը Հռոմելայ փոխա-
դրած ըլլայ (Առ 0րբել . Բ գիրք, Էջ 192-3) :

ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱՅ

Աչաւասիկ ուրիշ կաթողիկոս մ'ալ, թէ և
Տղայ կոչուած, բայց առաքինութեամբ եւ
զիտութեամբ մեծ : Գրիգոր Շնորհալոյ Վար-
սիլ եղբօր որդին էր, սնած և կրթուած իր
հօրեղօր մօտ, որ մանուկ հասակէն անոր
սրտին մէջ դրաւ սրբութեան և զիտու-
թեան սերմը, որ և շուտով աճեցաւ այն-
պիսի բեղմանաւոր երկիր մը վրայ :

Ինքը հեռի էր Հռոմելայէն, «երբ Շնոր-
հալին իր արդիւնաշատ կեանքը, կնքեց,

Գրիգոր փութաց իր վերջին մեծարանքը
մատուցանել հանգուցելոյն և գնաց ի Հռոմ-
կլայ : Թաղման պատճառով հոն ժողովուած-
եալիսկոպոսները դեռ արտասուքնին հազիւ
սրբած, հանգուցելոյն յաջորդ մը փնտուելով,
Գրիգորէն աւելի արժանաւորը չգտան, եւ ա-
ռանց ուշ գարձնելու անոր հրաժարականին, կա-
թողիկոսական աթոռութեարձացուցին 1173ին,
և այն ծերունիները հապատակութիւն խոստա-
ցան այդ Տղային : Կրկին յարութիւն կ'առ-
նէր հին սովորութիւնը՝ Լուսաւորչոյ ցեղէն
ընտրելու իրենց հայրապետ, հակառակ ամէն
գժուարութեան : Գրիգոր Տղայ՝ ճիշդ Ցուսիկն
է, « ցանկալի մանուկ »ը, ԺԲ դարուն մէջ
վերակենցաղած :

Գրիգոր իրեն աթոռակից ունէր խոհեմու-
թիւնը, որով և համարձակութիւն ունեցաւ
իրեն իշխանութեան անսաստողները ըմբե-
րանելու : Առ Շնորհալոյ սկսած միութեան
գործին ամենայն հոգւով աշխատեցաւ, եւ
1178ին ժողով մը գումարեց ի Հռոմելայ,
ուր Ա . Ներսէս Լամբրոնեցին իր սքան-
չելի ատենաբանութիւնն ընելով ժողովա-
կանները միութեան սիրով վասեց : Ժողո-
վին ներկայ էին ամէն կողմէ հաւաքուած
եկեղեցականներ, որոնք միաձայն հաւանու-

թեամբ ընդունեցան Յունաց պահանջած պայշանները, և ամէն ոք սիրով ստորագրեց հաւանութեան թուղթին: Գործը աւարտած կ'երևէր, ուրախութիւնը ծառեց ամենուն սրտին մէջ, մանաւանդ կաթողիկոսին և Լամբրունեցոյն. բայց, ափառ, գեռ պատգամաւորները Պօլիս չհասած, կիո Մանուէլ կայսրը վախճանած էր. և այնուհետեւ քաղաքական եւ ուրիշ եկեղեցական խնդիրներ ալ ծագելով, միութեան գործը վերջնականապէս խափանեցաւ, և հակառակութեան ողին երկու կողմին ալ տիրեց:

Յոյնք բաւական չըլլալով անձնական հակառակութեամբ, Հռովմայ առջև ալ սկսան ամբաստանել Հայերը՝ իր մոլորեալ և հերետիկոս: Այս զրպարտութեանց իր հերքումն, հաւատոյ դաւանութեան, և սիրոյ թուղթ մը զրեց հայրապետու առ Լուկիոս Գ (1181-1185) քահանայապետը, խնդրելով միանդամայն անոնց եկեղեցական պաշտամանց գիրք մը: Քահանայապետը շատ սիրով ընդունեցաւ Հայոց խնդիրքը, և կոնդակով մը միասին զրկեց նաև հայրապետական եմիփարոն, պալիում և խոյր մը ի նշան սիրոյ: Այս կոնդակը Լամբրոնեցին թարգմանեց ի հայ՝ հրամանով կաթողիկոս

սին: Այս կերպով Հայոց՝ ընդհանուր Եկեղեցւոյ հետ միութեան գործը զարգացաւ և հետզետէ ընդարձակեցաւ քաղաքակրթութեան ճանապարհը, որ շատոնց բացուած էր հայութեան և արևմուտքի մէջ:

Հայրապետիս ջանքը միայն արտաքին միութեան մէջ չսահմանափակուեցաւ, այլ մեծ անձնանուիրութեամբ իր հօտն ալ կը յանձանձէր: Լամբրոնեցոյն հետ աջակցած՝ կ'աւրէին ու կը շինէին, — կ'աւրէին՝ ինչ որ զեղծում էր, կը շինէին՝ ինչ որ բարեկարգութիւն էր. Շնորհալոյ երգերն եւ շարականները մշտառե կերպով հաստատեց, և Շնորհալին անմիջապէս մահուընէն վերջը տօնելի որբոց կարգը դասեց: Գարձեալ այս հայրապետն էր՝ որ Լեռն թագաւորին եւ Ս. Կերսէս Լամբրոնեցոյն հետ միասին՝ Գերմանիոյ Փրեգերիկոս Շիկամօրուս կայսեր ընդ առաջ գնաց մինչև Սելևիա, քաղաքը, որ նոյն ժամանակ Հայոց ձեռքն էր. բայց չկրցան կայսրը տեսնել, վասն զի նա խըդդուած էր. Սելևիոյ գետին մէջ՝ անցնելու կամ լողալու միջոց: — Այսպէս եկեղեցոյ և ազգին նուիրելով իր բովանդակ կեանքը, յետ քսան տարի իմաստութեամբ առաջնորդելու, գնաց արդարներու համար պատ-

բաստուած պսակը ընդունելու 1193 թուին։
Մեծ հանգիստով թաղեցին զինքը Դրազարկի
մէջ, ուր ներկայ էին Լամբրոնեցին և Լոռն
թագաւորը։

Ենորհալւոյ երկու եղբարց, Վասիլի՝ որմէ
ծնաւ Գրիգոր Դ, և Շահանայ՝ որմէ ծնաւ
Գրիգոր Զ, որդիքը իրարու հետ չշփոթե-
լու համար՝ սովորութիւն եղաւ Գրիգոր Զ՝
իրեն ընտանեկան անուամբ Ապիրատ կոչել,
իսկ Գրիգոր Դ՝ Տղայ Կոչել, Ապիրատէն վերջը
ծնած ըլլալուն համար (Ն. Ալիշան. Շնորհալի
և պարագայ իր. 234)։

Գրիգոր Տղայէն ունինք քանի մը թուղ-
րեր, որոնցմէ երկուքը Առ կիս Մանուկէ
կայսրը զրուած են, միւսն ալ Առ Միքայէլ
պատրիարք Կոստանդնուպոլուսոյ, յիշեալ միու-
թեան խնդրոյն նկատմամբ։

Թուղդը առ Հաղբատացիս կամ առ Տուրտ-
որդին և Թուղդը առ վարդապետս Հայոց հիւ-
սիսային կողմանց հայելի մեն անոր եռան-
դուն հոգւոյն, խոր հմտութեան և սրաբան
ճարատասանութեան։

Իրեն ժամանակ Երուսաղէմ քաղաքը առ-

նուելով այլ աղքիներէն, զրած է Ոլր մը,
նմանութեամբ իր հօրեղբար, բայց ոչ անոր բա-
նաստեղծութիւնն ունենալով։ — Դիւլորիէ
հրատարակած է զայս, հանդերձ գաղղիական
թարգմանութեամբ. Recueil des historiens
des Croisades. Paris, 1869.

ԳՐԻԳՈՐ Զ ԱՊԻՐԱՏ

Այս սուբբ հայրապետս ալ Ենորհալւոյ
Շահան կամ Զօրավար եղբօրորդին էր. ե-
րիտասարդական հասակին՝ զինուորական վի-
ճակի մէջ մտաւ և երեսնամեայ հասակին՝ կը
պատուուէր Պոլոյ կայսերական գնդին մէջ։

Հասուն հասակի մէջ էր՝ երբ կաթողիկոս
նստաւ 1195ին, Գրիգոր Ե Քարավէժի գըժ-
րաղդ մահուընէ վերջ. Կիլիկիա ամենէն փա-
ռաւոր օրերը հայրապետիս ժամանակ՝ ուշ
նեցաւ. Լոռն այլ ևս բոլորովին տիրած էր
երկրին, կը մնար միայն պասկուիլ. Կեղես-
տինոս Գ քահանայապետը չքեղազարդ թագ
մը զրկեց Լոռնին Կոնքագոս կարգինալին
ձեռփով, որ թագն առած Գեղմանիա անցաւ.
Փրեշերիկոս կայսեր խոստման համեմատ՝
անոր յաջորդը Հենրիկոս ալ ուրիշ թագ մը

տուաւ։ Երբ նուիրակը Կիլիկիա հասաւ, յետ քանի մը միջանկեալ ինդիրները լուծ ծելու, Տարսոնի եկեղեցւոյն մէջ, բովանդակ քաղաքը արդէն շքեղօրէն զարդարուած, Գրիգոր կաթողիկոսը փառաւոր հանդիսով Հայոց թագաւոր օծեց զԼևոն Յայտնութեան օրը։ Թագաղրութեան հանդէսները վերջանալով՝ երբ լատին նուիրակը կը մեկնէր դէպ ի Հառվմ, Լևոնի շնորհակալութեան թուղթէն զատ, Ապիրատն ալ Կեղեստինոս Քահանայապետին նամակ մը զրեց, միութեան և հպատակութեան խոստումներով։ Քահանայապետը գովելով անոր գնացքը, ի նշան իւր հայրական սիրոյն, զրկեց անոր եմիտորոն մատնի, մը, և թուղթին պատասխան, իսկ թագաւորին ալ Ա. Պետրոսի շքանշը։

Իմաստութեամբ առաջնորդելով իւր հօտին՝ կենաց վերջին օրերը հասաւ, բայց այն ալ առանց արդեանց չմնաց. վասն զի իրեն կը մնար դեռ փափուկ ինդրի մը մէջ միջնորդութիւն ընել։

Նոյն ատեները (1201) Յոյները կ'ուզէին խարդախութեամբ բանել և սպաննել զԼևոն, որպէս զի դիւրաւ տիրեն Կիլիկիոյ. սակայն այս քաջ թագաւորը անոնց գործած գա-

րանները միշտ ի վնաս իրենց կը դարձնէր. ուստի անգամ մ'ալ երբ ժողոված էին որ զինքը բռնեն, ասոնց հետ միացաւ նաեւ Լամբրոնեցւոյ եղբայրն Հեթում Բ. Սեբաստոս, և ապստամբեցաւ։ Լեռն յետ Յոյները վանելու ուզեց հնարքով մը Լամբրոնի ալ տիրել. ուստի սուտ խոստումով մը իրեւթէ իր եղբօր աղջիկը կ'ուզէ անոր հետ ամուսնացնել, զՀեթում և անոր ընկերները Սիս կանչեց, բռնեց ու բանտ զրաւ. իսկ ինքը զնաց անարդել Լամբրոնի բերգին տիրեց, և այնուհետեւ ոչ մէկուն շանձնեց զայն, որովհետեւ անառիկ ըլլալուն համար բերգատէրերը ապստամբութեան շատ ենթակայէին։ Այս դէպեհրուս վրայ ութման մեայ ծերունի հայրապետը հարկադրուեցաւ մինչև ի Սիս երթալ Հռոմլայի բարձունքէն, որպէս զի այս երկու մեծ ընտանեաց մէջ վրգովեալ խաղաղութիւնը վերահաստատէ։ Ալեորը ներումն խնդրեց թագաւորէն իրեն արենակից Հեթումին համար, եւ երաշխաւորեց որ Լամբրոնի իշխանք միշտ հպատակ պիտի ըլլան իրենց թագաւորին։ Լեռն որչափ ալ բարկացած՝ չկրցաւ մերժել պատկառելի հայրապետին խնդիրքը, հանեց բանտէն զՀեթում, ներեց անոր և հաշ-

տուեցաւ : Այս միջորդութիւնը յաջողութեամբ աւարտելով սուրբը կ'ուզէր իր աթուը գառնալ, բայց ծերութեան տկարութիւնը վրայ հասնելով, խաղաղութեամբ հոն վախճանեցաւ 1203 թուականին, եւ չքեզ յուղարկաւորութեամբ թաղուեցաւ Արքակաղնի վանքին մէջ :

* *

Ո՛չ Բ և ոչ Դ Յայսմաւուրներու մէջ չենք գաներ Գրիգոր Ապիրատը Գրիգորիսեանց հետ թուարկուած . մենք համակարձիք եղանք Հ . Աւգերեանի՞ որ զԱպիրատ արժանի համարած է անոնց մէջ գասուելու :

Քանի՞ տարի կաթողիկոսութիւն ըրտւ . — Կիրակոս եօթը տարի կ'ըսէ, հակառակ Վարդանայ՝ որ սխալմամբ հինգ տարի միայն կ'ընծայէ :

ԳԵՐՐԴԻ ԱԶԻԿԱՅ

Արձէշ քաղաքին մէջ ծնաւ Գէորգ, որ ի գոյր ըլլալուն համար Ամիկայ կոչուեցաւ : Հաղիւ քիչ մը՝ զարգացաւ՝ վանական կհանքը ընտրեց . ճգնասուն էր եւ աղօթաւ-

սէր, մազեղէն միայն կը հագնէր . օրուան մէջ մի անգամ միայն քիչ մը հաց ու չուր կ'առնուր, միայն ժամ մը կը քնանար և այն՝ ծնրագիր, առանց բարձի և անկողնի : Որքան կոյր էին մարմնաւոր աչքերը՝ այնքան սրատես էր հոգին . անոր ներքին կեանքը աղօթքէ և երկնաւոր յափշտակութենէ կը բաղկանար : Գոհ չըլլալով այս ճգնութիւններէն՝ եօթը անգամ ուխտի գնաց Երուսաղէմ՝ Գրիգոր կրօնաւորի մը հետ, որ իր ընկերն էր ճամբորդութեանց և առաքինութեան մէջ : Գլխաւոր Առաքելոց Պետրոսի և Պօղոսի գերեզմաններուն այցելելու փափաքով, յանձն առաւ ամէն գժուարութիւն և վտանգ, և Գրիգորի հետ ուղևորեցաւ դէպի ի Հռովմ, ուրիշ բան չտանելով միասին՝ բայց միայն մեծ վատահութիւն մը յԱռտուած :

Երբ Հունգարաց աշխարհը հասան, ճանապարհը շփոթեցան և աւազակաց ձեռքը ինկան, որոնք ծեծեցին զիրենք և զրեթէ կիսամահ ըրին, մանաւանդ զԳրիգոր աբեղայն : Քանի մը ժամ վերջը սթափելով Գէորգ ծեծէն, իսկոյն Ս. Յովհաննու Կարապետի բարեխօսութեան դիմեց և անկէ օգնութիւն խնդրեց : Նոյն գիշեր կրօնաւոր մը, որ վա-

նահայր էր մօտակայ վանքին, տեսիլ ունեցաւ և առաւտաը կանուխ սայլով ու ծառաներով եկաւ անոնց ինկած տեղը, զգեստ և կերակուր բերելով անոնց՝ մօտեցաւ և կանչեց իրենց լեզուովը. Գէորգ, Գրիգոր, ոտք ելէք: Գէորգը միայն, — վասն զի Գրիգոր շատ տկարացեր էր հարուածներէն, — իսկոյն վեր ենելով այն ձայնէն՝ հարցուց անոր. «Ո՞վ ես դու»: Այն ատեն վանահայրը իրեն եւ վանքին անունը ըստաւ, և աւելցուց թէ Յովհաննու Կարապետի ստիպմամբը եկած էր, որ իրեն տեսնուած էր գիշերը: Զգուշութեամբ վերցուցին և զգեստներով պատսպարած՝ սայլի վրայ դնելով վանք բերին. Հազիւ թէ վանք հասան, Գրիգոր հոգին աւանդեց. վանականները Գէորգին ցաւ չպատճառելու համար, առանձին տեղ մը տարին զինքը և իրմէ անլուր ընկերակցին թաղումը կատարեցին: Զգաց Գէորգ իր ընկերին վախճանիլը և քովը գտնուողներէն խնդրեց որ զինքը եկեղեցի տանին: Հոն այնպիսի սրտագին աղօթք մը ըրաւ, որ Աստուած շուտով լսեց զայն և վախճանելոյն հոգին ետ դարձուց: Մինչդեռ քահանայք և միանձունք թաղման աղօթքը կ'ընէին, Գրիգորի մարմինը շարժեցաւ, ելաւ նստաւ.

վազեցին իմաց տուին Գէորգայ: Ամէնքը կ'ուրախանային, միայն Վրիգոր էր՝ որ քաղցրութեամբ մը կը յանդիմանէր Գէորգը՝ որ զինքը երկնից լուսաւոր համբէն ետ դարձուց:

Յետոյ գնացին Հռովմ, ջերմեռանդութեամբ կատարեցին իրենց ուխտը, և դառնալով Հայաստան՝ բնակեցան Անի քաղաքը, ուր վեց ամիս կաթողիկէին մէջ օրինակելի և հրաշագործ ապրեցան: Կին մը ձեռքին վրայ շնորհոր ըստուած անբուժելի վէրքը ունէր. ծնողաց խնդրանօք սուրբը աղօթեց, և իսկոյն վէրքին հիւթը թափելով բժշկուեցաւ: Յետ ուրիշ շատ հրաշըներու և ձգնութեանց՝ աւանդեց մաքուր հոգին խոր ծերութեան մէջ 1167 թուին:

* *

Բ և Դ Յայսմաւորք, որոնք գրեթէ բառ առ բառ նոյնը կը զրեն, Գէորգայ յիշատակը մայիս 4ին կը գնեն: Վարդան պատմիչը Գէորգայ Հռովմ ուխտի երթալը 1166ին կը գնէ. (Ի սոյն աւորս (ի վեցհարիւր հնգետասան թուին = 1166) Գէորգ Աշկայ ի գնալն իւր ի Հռովմ՝ յարոյց ի մեռելոց զա-

ռաջնորդն իւր զԳրիգոր, զոր սպանին յելուշ զակը ի գաւառին Ունկոաց. որ և մեղադրեր նմա, թէ ընդէլ յանձաւելի բարութեանցն յորում կայի գարձուցեր վերստին ի թշուառութիւն կենցաղոյա» (Վարդան 129):

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մինչդեռ ԺԲ դարը պարծանօք կը ցուցնէ մեղ կիլիկիոյ մէջ Շնորհալի մը ու Լամբրոնեցի մը, մեր բնաշխարհը իր դրուատիքները կը սփռէ երկու ուրիշ անուններու շուրջը — Միհիթար Գոշի և Վանականի. եթէ կը յաղթուին ասոնք առաջիններէն՝ զարմանալի չէ, բայց իրենց կնիքը այնպէս զրոշմած են իրենց ժամանակին վրայ՝ որ կարելի չէ անոր պատմութիւնը ընել առանց յիշելու Միհիթար մը և Վանական մը:

Ազուանից Տաւուշ գաւառին մէջ ծնաւ 1481ին այս մեծ վարդապետը, որ իրը լուսատու աստղ մը սրբութեան և գիտութեան փայլեցաւ հայ եկեղեցւոյ երկնքին վրայ։ Աս ի մանկութենէ սիրող առաքինական վարուց և սրբութեան, նախ իր Պօղոս եղբօր քով Գետկայ վանքին մէջ հրահանգուե-

ցաւ, ապա աշակերտեցաւ Միհիթար Գոշ մեծ վարդապետին. և ինչ բարի սերմ որ անոր սրտին մէջ մատղաշ հասակէն սերմանուեցաւ, ինքը բոլոր կենացը մէջ զանոնք ծաղկեցուց և հասունացուց. որով միշտ մնաց պարկեշտ և ողջախոհ, և կենդանի օրինակ սրբութեան։ Մտաց զարմանալի բեղնաւորութիւն մը միացած էր ընդարձակ հմտութեան գետ. կը սորվեցնէր ամենուն՝ որոնք զանազան կողմէ իրեն մօտ կը վազէին գիտութեան ծարաւով։ Իւր սրբութիւնն և գիտութիւնը շուշացան վարդապետական պատույն բարձրացնել զինքը. եւ երբ Միհիթար Գոշէն հեռանալով իր գաւառը զնաց, շքեղ և բազմաթիւ խորաններով՝ զմբեթազարդ եկեղեցի մը շինեց եւ անունը դրաւ Խորանաշատ։ Բայց խաղաղութիւնը երկար չկրցաւ վայելել. վասնզի լսելով որ Թաթարները ամէն տեղ կը յարձակին, կ'աւերեն և Տաւուշի ալ մօտեցեր են, թողուց Տաւուշ բերդը և անոր հարաւակողմը փոքրիկ քարայրի մը մէջ ապաստանեցաւ. այդ այրը ինքը իր աշխատութեամբ փորեր էր. փոքրիկ մատուռ մ'ալ ձեւացնելով հոն ծածկապէս կ'ապրէր։

Տաւուշը առնուեցաւ բարբարոսներէն Զա-

լարատին իշխանին առաջնորդութեամբ եւ շատ տեղեր աւերակ դարձան։ Վանականին այրը օրէ օր եկող աշակերտներուն չբաւելով, հարկ եղաւ մօտակայ լերսն ստորոտը եկեղեցի և սենեակներ շինել և հոն բնակիլ։

Բարբարոսաց ոսկերը հոն ալ հասան, հոն ալ հանգիստ չթողուցին. վասնզի շրջակայ զիւղացիք տեսնելով մօտալուտ վտանգը, վարդապետին քով վազեցին իրենց կանանց և որդւոց հետ միասին։ Հասաւ պաշարեց ասոնց ապաստանարանը Մողար Նուին անուամբ զօրավարը. աղքատ ժողովուրդը, որ ոչ պաշար ունէր և ոչ չուր, ամառնային տօթէն սաստիկ կը տանջու էր. բայց ամենէն խղճալի տեսարանը կ'ընծայէին փոքրիկ տղաքը։ Վերջին կէտք հասնելով՝ պաշարեալները այդ պղտիկներուն հետ վարդապետին ոտքը ինկան և ըսին. «Դու գնէ մեր ամենու արիւնը, գնա անոնց քով եւ սիրոյ դաշինք դիր հետերնին»։ Իսկ նա պատասխանեց. «Ես անձիս չեմ խնայեր երբէք, եթէ փրկութեան հնարք կայ, վասնզի Քրիստոս ալ իւր անձը մեր վրայ զրաւ զմեզ աղաւելու համար, ուստի մենք ալ պէտք ենք նոյն սէրը ցուցնել մեր եղարց։ Այս ըսե-

լով դիմեց գէպի ի թաթար իշխանին բլրակը, երկու քահանայ միասին առած, և երեք անգամ ծնրագրելով, թաթարաց սովորութեան համեմատ, ներկայացաւ իշխանին։ Կախ նա գանգատեցաւ թէ ինչո՞ւ խաղաղութեամբ իրեն ընդառաջ չելան. վարդապետը պատասխանեց. «Մենք ձեր բարեմտութիւնը չէինք զիտեր, վախէն կը դողայինք, եւ ձեր լեզուին անտեղեակ ըլլալով՝ ահաւասիկ հիմայ որ կանչեցիք եկանք. մենք ոչ զինուոր ենք, ոչ հարուստ, այլ պանդուխտ և օտարական, և մեր կրօնքին պաշտաման համար ժողովուած ենք հոս. ահա ձեր ասկւն ենք, ինչպէս որ կ'ուզէք դասեցէք զմեզ, սպանեցէք կամ ներեցէք»։

Այս խօսքերը աղգեցութիւն ըրին բարբարոս իշխանին վրայ, և պատկանելով վարդապետին վայելուշ հասակէն, անվնաս պահէց. հրամայեց որ ժողովուրդն ալ քարայրէն իշեցնեն։ Երկու քահանայք ձայն տալով կանչեցին ժողովուրդը, որ արդէն մահուան սարսափէն բանուած՝ սուրբ Հաղորդութիւնը ընդունած էր. նախ վանքին աղքիւրէն իրենց տապը անցուցին եւ յեսոյ եկեղեցւոյ բակին մէջ ժողովեցան։ Բարբարոսները ասոնցմէ կարողները զատեցին եւ

մնացածը արձակեցին. իսկ Վանական վարդապետը ծախեցին շրջակայ տեղեաց քրիստոնեայներուն ութսուն գահեկանի: Երբ նա կ'ուզէր ուրիշներն ալ ազատել, գնելով կամ ուրիշ միջոցով, Թաթարները չէին տար «Մեզի պէտք են» ըսկով, ու քշելով կը տանէին հետի և բոկոտն. բայց հայ գերիները ամէն անգամ քիչ քիչ փախչելով զրեթէ ամենքն ալ ազատեցան, բացի երկու քահանաներէն որոնք ցորեկ ատեն փախչել փորձելով՝ բռնուեցան եւ սպանուեցան:

Կախախնամութեան հրաշքով ազատելով արիւնարրու բարբարոսաց ձեռքէն, գնաց Վանական վարդապետ իր առաջին տեղը՝ Խորանաշատ, և գոլրոց մը բանալով կը հրահանգէր ուսումնատենչ մանկտին: Այժմ հըմտութիւն ունէր Հին և Նոր Կտակարանաց և անոնց մեկնութեանց. ուստի երր իննովկենախոս Դ (1243-1254) Քահանայապետին թելադրութեամբ հարցուեցաւ Հայոց, թէ զՀոգին սուրբ ի Հօրէ միայն թէ նաեւ յՈրդւոյ ալ կը խոստովանին, այն ատեն մեր Կոստանդին Ա. կաթողիկոսը ժողով գումարեց Սիս մայրաքաղաքին մէջ (1251), եւ յետ երկար քննութեանց՝ Ա. Գրքի եւ Ա. Հարց վկայութիւններով հաստատեցին թէ

Հոգին Սուրբ ի Հօրէ և յՈրդւոյ կը բըդիսի միանգամայն, և թէ Հայոց եկեղեցին այս ճշմարտութիւնը ի սկզբանէ հետէ ճանչցեցիր և դաւաներ է: Թէպէտ նոյն ժողովին մէջ քանի մը յոյներ և ասորիներ շընդունեցան զայս, բայց Հայերը հաստատ իրենց դաւանութեան վրայ, առանձին թուղթով ժողովին վճիռը իմացուցին Սրբազան Քահանայապետին: Վանական վարդապետը որչափ ալ ժողովին ներկայ չէր կրցած ըլլալ, սակայն հետազոտելով բոլոր զրեկը, այս ողջամիտ վարդապետութիւնը իր մեծ հեղինակութեամբ հաստատեց, և յատուկ զրութիւն մը ըրաւ դաւանանքի՝ որ կը գտնուի իր աշակերտին Կիրակոսի պատմութեան մէջ. այս թուղթը յաւերժական գովեստ մ'է իր մոտաց լուսաւորութեան և զիտութեան:

Այսպիսի բազմարդիւն կեանքով մը իր հասակին եօթանասներորդ տարին հասաւ. այնուհետեւ իր բազմացած հանգիստը շատ չուշացաւ: Աղուհացից միջոց, Խորանաշատ վանքին մէջ սրբասուն հոգին աւանդեց 1251ին սուրբ վարդապետը. ճգնասուն մարմինը թաղուեցաւ, ամբաւ բազմութեամբ աշակերտներու և ժողովրդի, Խորանաշատ վանքին ամենէն փոքր եկեղեցւոյն մօտ, աղքատաց

գերեզմանին մէջ, ինչպէս որ ինքը փափա-
քեր էր:

* *

Այս կենսագրութիւնն քաղած ենք և Դ
Յայսմաւուրներէն և մանաւանդ իրեն ա-
շակերտ Կիրակոս Գանձակեցւոյ Հայոց Պատ-
մուռքենին: Բ Յայսմաւուրը յունուար 34ին,
խակ Դ՝ 29ին կը դնեն վարդապետին յիշա-
տակը:

Վանական վարդապետի գլխաւոր գրու-
թիւնն եղած է Պատմուռիւն Թարարաց կամ
Նետողաց, սակայն այժմ ձեռքերնիս չու-
նինք զայն, որ մինչև 1812 Հունգարահայու-
մը քով կը գտնուէր (Հայապատում. Պատ-
միք, 85. Ալիշան):

Ունի Մեկնուրիւն Յովբայ, զոր ուրիշ
հեղինակներէ հաւաքեր է, համառօտարան
է և գեղեցիկ յորդորակներ կը բովանդակէ.
ինչպէս նաև Համեմատուրիւն Հին և Նոր
կոտարանաց, Ճառը, տեղեկութիւնք Տա-
րեգլխոյ, Առաջաւորաց Պահոց, Հարցմունք
և Պատասխանիք, համառօտ և հետաքըր-
քրական գրութիւնք:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊ. ՍԵԲԱՍՏԻՈՅ.

ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ԵՒ ԹԷՌԴՈՐՈՍ ԱԲԵՂԱՅՔ

Երբ աշխարհաւերն Լէնկթիմուր Բարե-
լոնի տիրեց և Օսմանեան պետութեան սահ-
մանները կը դիմէր, Սեբաստիոյ քաղաքէն
Պուրհանատուին կամ Պուրհան զագի ա-
նունով բռնաւոր մը, օգուտ քաղել ուղելով
պարագաներէն, ապստամբեցաւ Սեբաս-
տիոյ ամիրայէն, և սպաննելով զայն՝ իշխա-
նութիւնը գրաւեց. բայց ինքն ալ այնքան
բռնաւոր էր, որ զարքն անգամ չկարենալով
համբերել՝ ապստամբեցաւ, և կ'ուղէր պատ-
մել զանիկայ մահուամբ մը՝ որ կարենար իր
ըրած զոհերը բաւել: Ակայն մատնիշնե-
րու ձեռքով յայտնուելով դաւակցութիւնը՝
տասներկու հոգի սպաննուեցան. քանի մը չարա-
խոսներ ամբաստանեցին նաև Ստեփանոս
արքեպիսկոպոսը, իրը ապստամբներուն զըր-
գոիշ և խորհրդակից: Բռնաւորը զունդ մը
զրկելով՝ վանքին բոլոր միաբանները ձեր-
բակալել հրամայեց. բայց եպիսկոպոսը շատ
պաղատանքով և կաշառքով իր վանական-

ները իրենց տեղը թողուլ տուաւ և ինքը
երկու ծերագոյն արեղայներով, որոց անուն-
ներն էին Աեղբեստրոս և Թէոդորոս, բըռ-
նաւորին ներկայացաւ. Պուրհան զաղին ա-
մառնային ջերմութեան պատճառով Աղա-
րու լեռը քաշուած էր իր հովոցներուն մէջ:
Հոն դատեց սուրբ եպիսկոպոսը և մէկ յան-
ցանք չգտաւ անոր վրայ. և թէպէտ ճշմար-
տութիւնը իմացաւ, սակայն չուզեց զանոնք
արձակել, այլ ըսաւ. « Ձեմ հաւատար ձեր
ըսածին մինչեւ որ հաւատքնիդ չուրանաք
և մեր կրօնքը չդաւանիք »: Եպիսկոպոսը եւ
արեղաները մերժեցին առաջարկը, եւ աներ-
կիւղ՝ մահը ուրացութենէ նախամեծ արեցին:
Բարկանալով բռնաւորը՝ հրամայեց զլսատել.
սրով երկու անգամ ուժգին զարկին դա-
հիները: Ստեփանոսի զլուխը անվնաս մնաց.
սուրը բթացեր էր յանկարծակի: Կախար-
դութիւն համարելով, բռնաւորը չորս մար-
դիկներու հրամայեց որ երկու ձեռքերը եւ
երկու ոտքերը կապեն. յետոյ զարկաւ դա-
հինը և մէջին երկու բաժնեց եպիսկոպոսը:
Կարդը եկաւ արեղաներուն . անօրէնները
կը կարծէին որ եպիսկոպոսին մահը զանոնք
պիտի վախցնէր, բայց հակառակը եղաւ:
Անոնք զիրար յորդորեցին նմանելու իրենց

առաջնորդին և քաջութեամբ արժանի եղան
մարտիրոսական պսակին:

Սփոեց Աստուած անոնց մարմնոյն վրայ
պայծառ լոյս մը, զոր այլազգիք ալ տեսան.
բայց չամչցան ըսեկու թէ այդ՝ միւս տասն-
երկու այլազգիներուն վրայ էր և ոչ թէ
քրիստոնէից: Ան ատեն բռնաւորը զատել
տուաւ սրբոց մարմինը այլազգի գիակնե-
րէն, և ակնյայտնի լոյսը սրբոց մարմնոյն
էետ գնաց, նախատինք անհաւատից եւ
փառք քրիստոնէից: Անօրէնը բացօթեայ տեղ
նետել տուաւ, որպէս զի թռչուններու եւ
անսուններու կերակուր ըլլան. բայց քրիս-
տոնեայք զացին գողցան եպիսկոպոսին մար-
մինը, և եկեղեցւոյ մը մէջ զետեղեցին. իսկ
արեղաները վլատակի մը տակ թաղեցին:

Պուրհաւատին գոհ չըլլալով սուրբերուն
արիւնովը, գնաց կողովտեց Ա. Նշանու
վանքը, որուն առաջնորդն էր Ա. Ստեփա-
նոսը. այլազգիներ բնակեցուց հոն, հաղարէն
աւելի բարտի ծառերը կտրել տուաւ, եւ
ահագին տուգանք առնելով արեղաներէն՝
կիսաւեր վիճակի մէջ թողուց վանքը եւ
գնաց. բայց ինքն ալ չուշացաւ իւր անօրէ.
նութեանց փոխարէնը ընդունելու. վասն զի
իրեն նման անօրէն մ'ալ իր վրայ յարձա-
կելով չարաշար մահուամբ սատակեց զինքը:

* * *

Ա . Նշանու վանքին ժամանագրութենէն
կամ կոնդակէն (որ ձեռագիր է) օգտուեցանք այս կենսագրութեան մէջ : Բ և Գ Յայսմաւուրները յունիս 23ին կը դնեն այս տօնը, սակայն Բը, բաց ի գաւանութենէ մը . կը բովանդակէ նաև ուրիշ կարեոր տեղեկութիւններ Սերաստիոյ և Ա . Նշանի նկատմամբ :

ՅՈՎՀՅՈՒՆՆԵՍ ՔՍՀՅՈՒՅՑ

Զորրորդ Հայոց Զմշկածագ քաղաքէն էր Յովհաննէս երէցը . հեզ էր, համբերող, ազօթաւէր, իր պաշտօնին մէջ եռանդուն, խնամակալ որրոց և այրեաց : Սոփորութիւն է որ առաքինիները միշտ նախանձ կրեն . այս սուրբն ալ քանի մը նախանձորդ քահանաներու կրից զոհ եղաւ, որ ոչ միայն զինքը՝ այլ նաև իր ժողովուրդը կը նեղէին երկար ժամանակ : Բայց նեղութիւնը այն աստիճանի հասաւ, որ այլ ևս անտառնելի էր . ստիպուեցաւ այլազգի ամիրային

հրամանով քաղաքէն դուրս եկեղեցի մը շինել և իր ժողովուրդովը հոն կատարել աստուածային պաշտամունքները : Ազբատութիւնը չներեց փառաւոր եկեղեցի մը կանգնել այլ փայտաշէն՝ համեստ մատուռ մը . հազիւթէ հոն հանգստութիւն գտեր էին, քահանայից նախանձը դարձեալ բորբոքեցաւ, ամբաստանեցին զայն ամիրային առջև . ամիրան իսկոյն զօրք եւ հրաման զրկեց՝ եկեղեցին քահանային հետ այլելու : Կէ՛ս գիշերին այդ . խառնազանձ ամբոխը հրէից պէս՝ առաջնորդուած քահանաներէն, յարձակեցան եկեղեցւոյ վրայ և կրակ տալով այրեցին . իսկ քահանան բռնելով՝ և ձեռքերը ոտքերը կապեցին և բոցերու մէջ նետեցին : Երբ եկեղեցին մոխիր դարձեր էր, Յովհաննէս քահանան ալ հոգին աւանդած էր 1403ին . բայց մարմինը անարատ մնացեր էր, մազմանգամ այրած չէր : Զինուորները տնոր աջը կորելով՝ զիշեր ատեն ամիրային կը տանէին, երբ յանկարծ մատերէն հինգ ջահերու պէս լոյս սկսաւ սփռել շուրջը, զոր ամիրայն ալ տեսնելով ցաւեցաւ ըրածին վրայ, և հրաման տուաւ շքեղ յուղարկաւութեամբ թաղել անոր մարմինը, որուն վրայ դարձեալ լոյս ծագելով՝ Աստուած

փառաւորեց իր հաւատարիմ՝ պաշտօնեայն,
ի չեճուկս նախանձոտ հակառակորդներուն:

* *

Այս վկայիս պատմութիւնը ունին երկու
Յայսմաւորներն ալ, բայց թը մարտ 27ին,
մինչդեռ Դ՝ սեպտեմբեր 10ին։ Բ Յայս-
մաւուրը կը յայտարարէ որ Դաւիթ եպիս-
կոպոս մը (Զմշկածագի) շարադրած է այս
վարքը։

ՎԱՐԴԱՆ ՎԿԱՅ

Այս արի նահատակը Բաղէշի Դատվան
գիւղէն էր, շատոնց արդէն ամուսին եւ
հայր եղած, առանձնութեան սիրովը հրաժեշտ
տալով իր կնոջ և որդիներուն՝ կրօնաւորե-
ցաւ։

Վանքերը կ'այցելէր եւ առաքինի կրօնա-
ւորներուն օրինակին նմանող կ'ըլլար։ Լսե-
լով որ Բաղէշի մէջ տիրող ամիրայն քրիստո-
նեաները կը տանիչ և հաւատքնին ուրա-
նալու կը ստիպէ, սուրբը վանքէն քաղաք
եկաւ, և աղաչեց քրիստոնէից որ ամիրային

տունը իրեն ցուցնեն, որպէս զի քաղցրու-
թեամբ զայն յորդորէ չհալածելու. ամէնքը
զինքը ծաղրեցին, բայց վերջապէս մէկը
գտնուեցաւ որ իրեն տուածնորդեց դէպ ի ա-
միրային պալատը։ Երբ ամիրան անոր գալը
տեսաւ, կարծելով որ ուրանալու կու գայ
շատ ուրախացաւ, եւ հարցուց իսկայն թէ
ինչ է խնդիրքը։ Այն ատեն Վարդան սկսաւ.
«Տէր իմ, լսէ ինձի քաղցրութեամբ. ես եւ
դու մէկ Արարշի մը ստեղծուած ենք, եւ
մէկ ծնողաց զաւակ, այսինքն Արամայ. դու
ալ մարդ ես՝ մենք ալ մարդ ենք, ինչո՞ւ
զմեզ քրիստոնեաներս կը նախատես կը տան-
ջես. եթէ Աստուած քեզի իշխանութիւն
տուաւ և մեզի ծառայութիւն, պէտք չէիր
իշխանութեամբ զեղծանիլ»։

Բարկացաւ ամիրան անոր համարձակու-
թեան վրայ եւ բանդատեց որ հաւատքը
ուրանայ. Վարդան հաւատոյ դաւանութիւն
մըրաւ։ Գաղանացաւ ամպարիշտը, վագրի
պէս վրան յարձակեցաւ և երկու ձեռքով
սկսաւ հարուած իջեցնել Քրիստոսի գառան
զլուխը։ Վկայն այս միայն ըստ «Ո՛վ ա-
միրայ, եթէ վախնայի քու ծեծելէդ՝ արդէն
հոս չէի գար, բայց ես իմ Քրիստոսիս, իմ
Աստուծոյս համար մահն ալ յանձն առեր

եմ. վասնդի հթէ մեռնիմ արժանի կ'ըլլամ զինքը տեսնելու վայրկեան մը առաջ, և այն է արդէն իմ փափագս» :

Վայրենասիրտ ամիրան հրամայեց որ մեր-
կացնեն զայն, բոկոտն և զլիսիրաց բանտ
տանին, ուր ձմեռնային եղանակի մէջ կա-
պեցին զայն կոճղի մը և կը շարչարէին ան-
հնարին լլկանօք. իսկ ինքը զԱստուած կը
բարերանէր և Յիսուսի չարչարակից ըլլա-
լուն վրայ կ'ուրախսանար: Երեք որ այսպէս
անցնելէն վերջը՝ ամիրան հրամայեց կրկին
իր ասջել բերել. գարձեալ յուրացութիւն
յորդորեց, հարստութիւն ու պատիւ խոս-
տացաւ անոր. բայց տեսնելով վկային հաս-
տատուն հաւատքը ու ամէն տեսակ փորձի
մէջ ալ զայն անշարժ գտնելով, սաստիկ
յանդիմանեց և իբրև օրինաց անարգող մը
դատաւորին զբկեց: Յայտնի էր դատաւո-
րին վճիռը. «Եթէ, ըստու, չգառնաս մեր օ-
րինաց՝ պիտի սպաննուիս»: Յայտնի էր նաև
սուրբին տալիք պատասխանը. «Մարմինս կը
սպաննես, բայց հոգիս ոչ»: Ասոր վրայ զայ-
րանալով դատաւորը՝ հրամայեց քաղաքէն
դուրս հանել եւ սպաննել: Ամբաւ բազմու-
թիւն խոնուեցաւ անոր շորս կողմը, ինչպէս
անօթի գայլեր որսի մը շուրջը, և երբ երա-

նելին իր դաւանութիւնը կը կրկնէր, ա անոնք
վրան գիմեցին քարով և բրով յօշոտեցին
անօր մարմինը 1421 թուին։ Երկրորդ օրը
Հայերը շատ ստակ տալով ամիրային, առին
թաղեցին սուրբը, որուն Նշխարներուն
զօրութեամբ շատ բժշկութիւններ կատա-
րուեցան։

Մայիս 16ին կը գնէ Բ Յայոմաւուրը
Հակառակ Դին, որ յունուար 4ին ունի:
Առաջինը ճոխ և լայն յառաջաբանով մը
կը սկսի, և պատմութեան հետ կը հիւսէ
խօսակցութիւններ . միւսը, ըստ իր սովոր
բութեան, համառօտարան է :




ՑԱՆԿ

ՄՐԲԱԶԱՆ ՀԱՅԱԶՈՒՆԵՐՈՒՆ

1.	Ցառաջաբան	Էջ	8
2.	Ա. Թէոդոր Սալհունի	"	9
3.	Սահմկ Արեղայ	"	19
4.	Խաչիկ Վարդապետ	"	23
5.	Արքունի Թագունի և Դիզափայտի վկաները	"	26
6.	Ամբատ Բագմայաղթ	"	50
7.	Յովհ. Խմսոստասէր	"	55
8.	Երկրորդ Առոմեանք, Գէորդ Ակէ-		
9.	ացի և Խոսրով Գարեղեան	"	41
10.	Ամբատ Խոստովանոց և իր նահա- տակիցները	"	45
11.	Աշոտ Ա. Բագրատունի	"	50
12.	Մաշտոց Վարդապետ	"	56
13.	Ամբատ Ա. Խահատակ	"	60
14.	Գուրգէն և Գաւրիթ Գնունիք և Միքայէլ	"	67
15.	Աշոտ Գ Աղօրմած և Խոսրովանոյշ .	"	74

16.	Ակկան	»	76
17.	Ա. Ամելար	Հայկաղն	.	.	էջ	79	
18.	Ա. Գրիգոր	Հայկաղն	.	.	»	85	
19.	Ա. Սիմէսն	Հայկաղն	.	.	»	90	
20.	Ա. Գառիթ	Աքանչելագործ	.	.	»	102	
21.	Պետրոս	Գետադարձ	.	.	»	110	
22.	Գէորգ	Մեղրիկ	.	.	»	114	
23.	Գոհարինեանք	և Թէոդորոս	.	.	»	116	
24.	Գրիգոր	Վկայասէր	.	.	»	122	
25.	Գրիգորիս	Գ Պահաւունի	.	.	»	129	
26.	Գրիգոր	Տ Տղայ	.	.	»	154	
27.	Գրիգոր	Զ Ապիրատ	.	.	»	159	
28.	Գէորգ	Աչիկայ	.	.	»	142	
29.	Վանական	Վարդապետ	.	.	»	146	
30.	Ստեփ.	արքեպիսկ.	Սեբաստիոյ	և			
		Սեղբեստրոս	, Թէոդորոս	Աբեղայք	»	155	
31.	Յովհաննէս	Քահանայ	.	.	»	156	
32.	Վարդան	Վկայ	.	.	»	158	



7906



52

1931